Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Utptip
589

1 4/49.

Սերեբ
589

Կ. ՅԱՒԵԼՈՒԱԾ „ԱՐՁԱԳԱՆՔԻ“

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՍՐՈՎԲԱՑ ԴԱՒԹԵԱՆ

ԹԱՂԻԱԴԵԱՆՑ

ԵՐԵՒԱՆԵՑԻՈՑ

12250

ՀԱՒԱՔԵՑ ԵՒ ԽՄԲԱԳՐԵՑ

Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ Կ. ՄԿՐԵԱՆ

ԽԱՉԱԿԻՐ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՀԱՅՈՑ—Ի Կ. ՊՕԼԻՍ։

ԹԻՖԼԻԶ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ № 1|2
1886

589 – 2009
(4316/41)
№ 5831

Дозволено цензурою. Тифлисъ, 10 Декабря 1885 г.
Типографія И. Мартиросіанца, Орбел. ул., № 1/2.

ԻԻՐ

ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ԲԱՐԵՊԱՀՏ

ԾՆՈՂԱՑ

ԿԱՐԱՊԵՏ ԷՖԷՆՏԻՒ

ԵՒ

ՏԻԿԻՆ ՀԱՄԱՍՓԻՒՌԻ

ՄԿՐԵԱՆ

Իւ ուսումնասէր

ՅԱԿՈԲԻԿ ԵՒ ՍԱՐԳԻՍ

ԵՂԲԱՐՑ

ՔԱՂՑՐ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Նուիրէ

ԱՆՀՈՒՆ ՍԻՐՈՎ

աշխատասիրուն

Յ. Ք. Մ.

ԱՌ ՄԵԾԱՊԱՏԻՒ ՊԱՐՈՆ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Խմբագիր—Հրատարակիչ «Արծաղանք» Շարաթաթերթի ի Տփխիս

ԻԲՐԵՒ ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ներկայ դարուս նշանաւոր հեղինակներից մին է մեր ազգի համար, ՄԵՍՐՈՎԲ ԴԱՒԹԵԱՆ ԹԱՂԻԱԴԵԱՆՑ՝ Սարկաւագն Ս. Էջմիածնի, որ աշխարհէ յաշխարհ տարուբերեալ անկաւ ի Հնդկաստան, և անդ փայլեցոյց զիւր գրական հանճար՝ զանազան օգտակար հեղինակութեամբ։

Երբ դեռ մանուկ հնգետասանամեայ էր, տեսնելով Թաղիադեանի մի երկու տպեալ գործերն՝ մանաւանդ Ազգասէր լրագրին մի քանի թերթերն, բորբոքեցայ յեռանդ ընթերցասիրութեան, և հետամուտ եղայ ոչ միայն Ազգասէր լրագրին բաժանորդ լինել մինչդեռ ի Կ. Պոլիս երկու մեծանուն անձինք միայն կային բաժանորդ՝ Յովհաննէս Ամիրա Տատեան և Մկրտիչ Ամիրա Ճէզայիրլեան — այլ և նորա բոլոր հեղինակութիւններն հետզհետէ ձեռք բերել. և այս փափագիս յօժարակամ լրացուցիչ ունէի իմ ընթերցասէր հայրս և ուսումնասէր երկոքին մեծ եղբարքս։ 1846 թուին Կ. Պոլսոյ «Հայաստան» լրագրի խմբագրութեան միջոցաւ ստացայ Թաղիադեանի զանազան գրեանքը, և այնուհետև ինչ որ պակաս մնացած էր՝ հաւաքեցի, այնպէս որ գրեթէ չ՚կայ նորա հեղինակութիւններից՝ որ իմ մօտ գտնուած չ՚լինին։

Անյագաբար կարդալով այս գրեանք, որոց սիրահարած էի, մեծ համակրութիւն և սէր կը տածէի յիս Մեսրովբ Թաղիադեանցի վերայ, և կը գրգռուէի ծանօթանալ նորա կենաց ամեն հանգամանաց, մանաւանդ յետ վախճանի նորա 'ի Շիրազ՝ ի 10 Յունիսի 1858։

Այսպիսի մի համբաւեալ գիտնականի կենսագրութիւնն կարևոր դատելով ուսումնասիրել, ի վաղուց սպասում էի գլխաւոր տեղեկութեանց, որպէս զի ըստ այնմ կարենայի ի գիր առնուլ և զիմ հետազօտութիւնս։ Բայց տակաւին անցեալ տարի ձեռք բերի մի գրաբար շարադրուած կենսագրութիւն գրեալ ի Կալկաթա յամին 1870. որ թէ և մանրամասն տեղեկութիւնք կը պարունակէր—մանաւանդ հեղինակին վերջին տարիներու կենաց վերայ—բայց տեսնելով ի նմա ինչ ինչ թերութիւնք կամ մոռացութիւնք, յանձն առի այդ գրուածն աշխարհաբառի վերածելով ինձ առաջնորդունել, և ապա յաւելուլ նորա վերայ իմ քննական տեսութիւնքս կամ դիտողութիւնքս, հանդերձ ընդարձակ տեղեկութեամբ գրաւոր երկոց բարեյիշատակ Մ. Դ. Թաղիադեանցի։

Զ'գիտեմ, թէ որչափ յաջողեցայ այս իմ աշխատութեան մէջ. անշուշտ ընթերցողաց անկ է գնահատել զայն, և իմ թերութիւնս լնուլ նորանոր ծանօթութեամբ. որոյ համար փափագեցայ ի լոյս ընծայել զայն ձեր պատուական շաբաթաթերթի միջոցաւ, որպէսզի գրգռուլ լինի մեր բանասիրաց աւելի մանրամասն տեղեկութիւններ հաւաքել, և կամ հեղինակին ձեռագիր աշխատութիւններն փոշիներու տակից դուրս հանել, որոնելով զայնոսիկ յէջմիածին, յՍիսական, մանաւանդ յԱմենափրկչեան վանս Նոր-Ջուղայի։

Ինձ կը մնայ միայն՝ խնդրել Ձեր յարգութենէն՝ որ այս իմ փոքր աշխատութիւնն բարեհաճիք հիւրընկալել «Արձագանք»-ի մէջ (որ միայնակ յարմարագոյն թերթն է այսպիսի բանասիրական գրութեանց հրատարակման՝ յետ յիշատակաց արժանի -օգտաւէտ ՓՈՐՁ հանդիսին, որ դարձեալ Ձեր շնորհիւ վայելեց Ազգը մի քանի տարիներ)։

Սիրելի էր ինձ Կալկաթա գրուած կենսագրութիւնը նոյնութեամբ գրաբառ թողուլ, նոյնպէս և իմ տեսութիւնքս, բայց բարեկամաց ոմանց և Ձեր խիստ խնդրանաց համեմատ՝ պարտաւորեցայ աշխարհիկ լեզուով գրել, միայն թէ անփոփոխ թողլով Թաղիադեանցի գրութիւններն՝ զորս ի մէջ բերել և յիշատակել հարկ եղև ինձ, քանզի նորա գրաբառ ոճը անհամեմատ քաղցր, գողտրիկ և հաճոյական և ախորժելի եղած է բանասիրաց։

Մնամ նուիրեալ ծառայ Ազգիս

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՄԿՐԵԱՆ.

ի 25 Յունիսի 1885.

Կ. Պոլիս—Բերա։

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՍՐՈՎՊԱՅ Դ. ԹԱՂԻԱԴԵԱՆ

ԱՐԱՐԵԱԼ ՑՈՒՄԵՄՆԷ Ի ԿԱԼԿԱԹԱ

Յամի Տեառն 1870.

ՄԵՍՐՈՎՊ ԴԱՒԹԵԱՆ ԹԱՂԻԱԴԵԱՆՑ՝ ծնեալ է յԵրևան Աշտարակ 1) գիւղի մէջ յամի Տեառն 1803։ Տասներկու տարեկան եղած միջոցին կը տարուի յԷջմիածին վանականութեան նպատակաւ, (ուր ըստ իւր բանի՝ յաւէտ չարեաց աշակերտեալ քան բարւոյ ուսման,) և իբրև մանուկ մտավարժ կ'ուսանի բաւական գիտութիւն։ *)

Յամին 1821 երբ Եփրեմ Կաթուղիկոս՝ կրտիպուի Պարսից հալածիչ իշխանաւորաց բռնակալութենէն փախչիլ Ռուսաց սահմանը, իւր հետ ունենալով երևելի եպիսկոպոսներ և միաբաններ, սոցա հետ կը միանայ և մերս Մեսրովպ։ Հին Նախիջևանի մէջ կ'ընդունի Սարկաւագութեան աստիճան, և դարձեալ նոցա հետ կը չուէ ի Հաղպատ, ուր տեղ կը խնդրէ բաժնուիլ Հնդկաստան երթալու նպա-

---

*) Ծանօթութիւն.— Այն կենսագրութեան լուսանցքի մէջ գրուած թուանշաններն կը ցուցանեն Յ. Գ. Մկրեանի տեսութիւնքն՝ նոյն նիւթերի վերայ. Տես անդ։

տակաւ, և յանձնարարական նամակ ընդունելով Կաթողիկոսէն 2) յանուն Նախջևանցի Պօղոս եպիսկոպոսի նուիրակին Էջմիածնի ի Հնդկաստան, Պարսկաստանի ճանապարհով կ'ուղևորի ի Հինդ։

Երբ կը ժամանէ 'ի Կալկաթա յամի Տեառն 1823, կ'իմանայ թէ Պօղոս եպիսկոպոս Դաքայ քաղաքը կը գտնուի՝ Երուսաղէմի Նուիրակ Բիւրականցի Աբրահամ Ծայրագոյն վարդապետի հետ, որք հրապուրանօք Տփխիսեցի Դաւիթ Ֆրիդոն Բէգլարեանցի՝ դատ կը վարէին Աղա Յարութիւն Միքայէլի կնոջ Մարիամ Խանումի հետ՝ որ անվաւեր կը համարէր իւր ամուսնոյն ըրած կտակագիրը վասն երկուց Աթոռոց, ինչպէս որ շահեցաւ կինը՝ և երկու կողման դատաստանի ծախքը ծանրացաւ երկու նուիրակներուն վրայ։ Չ'գիտեմ ա՞յս կամ ուրիշ պատճառաւ, Պօղոս եպիսկոպոս 3) չ'կրնալով այլ ևս դառնալ յԷջմիածին, կը մնայր ի Դաքա, ուր և կը մեռանէր։

Մեսրովպ դնալով ի Դաքա, մի ժամանակ կը մնայ նուիրակներու մօտ, և նոյն ժամանակ Տէր Հիրբը Արքեպիսկոպոս Անդղիացւոց քաղաքիս Կալկաթայի՝ շրջագայելով և այլ և այլ քաղաքաց այցելութիւն ընելով կը հանդիպի և ի Դաքա, և Հայ նուիրակաց հետ տեսութիւն անելով՝ սէր և մտերմութիւն կը հաստատուի Հայ և Անդղիացի եպիսկոպոսաց և վարդապետի մէջ՝ (ուր և Մեսրովպ՝) այնպէս որ իրարմէ բաժնուելնէն զկնի ևս՝ անընդհատ թղթակցութիւններ կ'անեն միմեանց հետ։

Մեսրովպ վերադառնալով Դաքայէն ի Կալկաթա, իբրև օժանդակ կը մտնէ ի Մարդասիրական

Ճեմարանն Հայոց, և իւր ձախորդ բնաւորութեամբ անհաշտելի կը մնայ Յովհաննէս Աւդալեան վարժապետի հետ, և միշտ կագ և կռիւ և տարաձայնութիւն կը յարուցանէ. վասն զի սոցա մին շլաբնոյթ (ծուռ տեսնող կամ դատող՞.) և երկաթագլուխ, և միւսն սաստիկ նախանձոտ, փառասէր և կամապաշտ լինելով, մինչև իւրեանց կենաց վախճանը իրարու հակառակ և խռով կը մնան. մին զսա դրսեցի՝ շիլ ասելով կը նախատէր, և միւսն զնա ներդաւոր և խռովայոյզ անուանելով, և արդարև երկուսին էլ միմեանց տուած դրոշմը ճիշդ էին և անսխալ։

Աբրահամ Ծ. վարդապետ՝ կատարելով Հնդկաստանի մէջ նուիրակութեան պաշտօնն, երբ կը պատրաստուի վերադառնալ յԵրուսաղէմ, Մեսրովպ դիմելով առ նա՝ կ'աղաչէ միջնորդել Անդղիացւոց Հիբը եպիսկոպոսին, որպէս զի ընդունի զինքն իւր Ճեմարանի մէջ Անդղիերէն և այլն ուսանելու համար, որ և հաճելով կը խնդրէ Եպիսկոպոսէն ընդունիլ զՄեսրովպ իւր ծախիւք. իսկ եպիսկոպոսը՝ ոչ միայն կը մերժէ վարդապետին ծախք տալը և կ'ընդունի զՄեսրովպ իւր ծախիւք, այլ և օրէնք կը դնէ, որ այնուհետև երկու Հայ պատանիք միշտ ընդունուին նոյն Ճեմարանի մէջ, պայմանաւ որ նոքա լինին հոգևորական կամ վարժապետ. ինչպէս որ այն օրէն մինչև ցայսօր հաստատուն մնացած է այս օրէնքը, բայց աշակերտեալների և ոչ մին խոստացած պայմանը կատարած է։ Ճեմարանի մէջ Հայ տղարան ևս կը հաստատէ, սակայն այժմ անգործ մնացած է։

Մեսրովպ՝ 1826 թուին մտնելով Եպիսկոպոսա-

կան ձեմարանը, և յաւէտ Հայկականին քան Անգ-
ղիականին ոյժ տալով, թարգմանութեամբ կը հրա-
տարակէ համառօտ Գիցաբանութիւն, և Պա-
ղեստին 4) անուամբ նոյն Հիբեր եպիսկոպոսի ոտա-
նաւոր աշխատութիւնը հայացուցանելով, մի էջն Անգ-
լիական և մի էջն Հայկական ոճով և տառերով կը
տպագրէ ձեմարանի մէջ 1830 թուին. ուստի թերի
մնալով Անգլիական լեզուի վարժութեան, չկարողա-
ցաւ Հայերենէ յԱնգլիերէն մի բան թարգմանել։

Ապա 1830 թուին թողլով Եպիսկոպոսական
ձեմարանը, կ'երթայ ի Բուշէռ, և անտի ի Պարս-
կաստան ի Ջուղա, որ ատեն Առաջնորդ էր անդ
Քուրդ մականուանեալ Յովհաննէս եպիսկոպոս. յորմէ
մեծ պատիւ և մեծարանք գտնելով՝ կ'ընտրուի վար-
ժապետ Ամենափրկչեան կոչուած դպրոցի տեղւոյն. և
յետոյ կ'ամուսնանայ Սէթ Մկրտչեանի դստեր Թան-
կում անուն օրիորդի հետ։ Յովհաննէս եպիսկոպոս
կ'ընծայէ նոր հարսին ղլխուն մի մեծագին ծածկոց
(շալ) Քիշմիրի, և մատը կը դնէ անդամանդեայ մի
մատանի. նոյնպէս և փեսային ևս կը խնդրէ պա-
տուական ընաթէ (չուխայ) ջուբբայով (վերարկու)
ըստ ասիական սովորութեան և միով բանիւ, իբրև հա-
բաստ հայր՝ գութ, սէր և խնամք կը տածէ Մես-
ropովպի վերայ։ Սակայն ըստ Սողոմոնի, «Եթէ փոր-
ձել կամիս զմարդ՝ մեծացո, և տուր նմա ասպարէզ
շահատակութեան, յայնժամ իմանաս», այս փորձը
կատարեալ եղաւ Մեսրոպայ վերայ. համազամ սե-
ղան և Քիշմիշի ու Նաջաքի ղինին միշտ առջևը,
ձին պատրաստ հեծնելու և ամեն օր զբօսանքի եր-

թալու և այլն, ասոնք ամենը օր ըստ օրէ զառոզացուցին
և հպարտացուցին ղինքը, մինչև այնքան՝ որ սկսաւ
խրոխտալ թէ Եպիսկոպոսին և թէ Ջուղայի հասա-
բակութեան վերայ, Դպրոցի աշակերտներուն ևս ան-
պակաս ծեծ ու փետ տալով՝ զզուեցուց բոլոր ժողո-
վուրդը և ամենքն երես դարձուցին իրմէ. բայց ա-
մենէն զարհուրելին կ'ասեն, իւր բարերար եպիսկո-
պոսի դէմ ըրած հայհոյանքն ու նախատինքը մի նո-
րահնար «Խորհուրդ խորին» երգով 5)։

Բայց վերջապէս՝ Մեսրովպ ինքն ևս սթափելով
այս արբշռութենէն, և տեսնելով ղինքն օտարացած
ամենուն սէրէն, կ'առնու իւր կիրն, և կը չուէ կեր-
թայ ի Դավրէժ 6), ուր կորուսելով զիւր ամուսինն
(ըստ ոմանց դանաձեծ առնելով,) կը դառնայ իւր
Հայրենիքն, ուր թէ ինչ վիճակ ունեցած է, այլ
ընդ այլոյ կը համառօտէ ինքն, իւր ճանապար-
հորդութեան առաջին հատորին սկիզբը, հոգե-
լոյս Ներսէս Կաթողիկոսին ընծայած ուղերձին մէջ՝
այսպէս.

«Հոգևոր Տէր.

«Առաջին կարգեալ յԱստուծոյ ի խնամակալս ման-
«կական ուսմանց իմոց, և առաջին իսկ այժմ ի մատա-
«կարարութիւն Բանին՝ յԱթոռ Հայրապետութեան ամե-
«նայն Հայոց՝ առաջին հանդիսանայք յողորմութիւն ար-
«դարև՝ եթէ աստուածահաճեաց աչօք քաղցրութեան
«ակնարկիջիք յայս դուզնաքեայ աղերս, իբր յառա-
«ջին ի տեսակս իւր՝ առաջնապտուղ նուիրեալ Ձերդ
«Ազգասէր Տէրութեան ի պատարագ ակնածութեան։
«Գիլ գլորեալ ի բարձանց յաստանդանս աջևահեակ

« պատահարաց աշխարհի՝ և տառապանաց ի տառա-
« պանս օտարութեան անտուն և անդրամ տուայ-
« տեալ՝ պատկառիմ պարծել՝ թէ՝ ժողովեցի ինչ՝ Ձեզ
« արժանի արմաղան։

« Յաւետիս Վեհիդ զաղատութենէ Հայրենեաց
« առ հասարակութիւն մեր ի Հնդիկս, ուրացայ ան-
« ձին զայն ամենայն՝ զոր աշխարհ տալ կարէր օտա-
« բականի ուրուք. և որպէս մանուկ սարտուցեալ ի
« ստեանց մօր՝ անդրէն ի նոյն դիմեցի։—Բայց ոչ
« գտեալ զոր խնդրէր անձն իմ, — վանական մտեալ
« և վանական ելեալս ի Հնդկաց՝ յաշխարհական փո-
« խեցայ ի Պարսկաստան. հասի ի ծոց Ֆնոզիս,
« սպաս հարի Հայրապետիս, այլ փոխանակ մխիթա-
« բութեան՝ յազատութիւն անձին խուսել պարտաւո-
« րեցայ։ Է՛ որ պիտեան, և Է՛ որ անպիտան վտա-
« ռանգեալ՝ ՝որ ի բեմբ, և ՝որ ի բանդ, ելի առանց
« վրէժխնդրութեան, և խոյս ետու ՝ի Հնդիկս վերբա-
« տին։ Ուրանօր մերթ գրաշար տպարանի, մերթ
« պատմաբան Հնդկաստանի, մերթ փերեզակ յերկրա-
« միջի, և մերթ հիւանդ գետնախշտի, զամս հինգ
« անդադար աշխատեցայ, այլ շահեցայ և ՝ոչ ինչ՝
« մինչև եկաց Արարատեան Ընկերութիւն, սպաս հար-
« կանել Ազգին գրագիտութեան»։

Կը պատմէր ինքն Մեսրովպ, «թէ մի անգամ
« այն ինչ մի դէպքով զայրացած՝ գնացի Յովհաննէս
« Կաթողիկոսի մօտ, որ խոստացած էր ինձ Էջմիածնի
« վարժապետութիւնը, Վեհարանը թափուր գտայ, և
« այն տեղ չէր Կաթողիկոսը. աչքիս հանդիպեցաւ
« մի յաղճապակեայ կաղամար՝ որ Հնդկաստանի մէջ

« Իբրև թքման կը գործածեն, առի կտորիկ մի
թուղթ և գրեցի այսպէս.

« Երբ թքման թանաքամանն
« Դարձեալ ետես յայս Վեհարան,
« Զինչ այլ քեզ յոյս երջանկութեան
« Փախիր վութով Մեսրովպ Դաւթեան։

« և դնելով զայն ի ծակ զրչին, ա՛յ դէ, ծայմնդաւ,
« արարի, և իսկոյն ծպտելով փախուստ տուի»։ 7)

« Բաղում նեղութեամբ, կ՝ասէր, հասայ ի Կ.
« Պոլիս երեկոյեան պահուն, և անծանօթ ոք լինե-
« լով՝ գնացի ի Պատրիարքարան. տեսայ մի սեւա-
« գլուխ երկայն համրիչ և քթախոտի տուփ ի ձե-
« ռին. անվեհեր ողջունեցի զինքն։ Սա տեսնելով իմ
« օտարոտի հագուստս, հարցոյց թէ՝ ո՞վ ես դու, ուստի
« գաս. պատասխանեցի՝ ծառայ քոյ եմ, ի Հայաստա-
« նէ կը գամ, և կամիմ ի Հինդ գնալ հասայ այս
« քաղաք՝ մի ծանօթ չունիմ, ուստի ճանապարեցի
« դալ Սրբազան Պատրիարքին խնդրելու համար որ
« մի քանի աւուր համար հիւրընկալէ զիս, մին-
« չև որ Հնդկաստան գնացող նաւ գտնեմ. կ՝աղաչեմ
« տարէք զիս Պատրիարք Հայր սուրբին։ Վայրկենա-
« կան լռութենէ զկնի՝ ժպտելով ասաց. չ՝գիտե՞ս դու,
» ՝որդեակ, արժանաւորները պակսելուն համար՝ մար-
« դիկ ինձի Պատրիարք կ՝ըսեն կոր.—Սա էր Պատ-
« րիարքն Յակոբոս—բայց դու մի վհատիր, ես կը
« հոգամ քու պէտքդ։

« Ո՞վ ամօթոյս, յառաջ գնացի և համբուրեցի
« Աջը ջերմեռանդութեամբ, և աղաչեցի անպիշաչար

«լինել համարձակութեանս։ Օ՜ ասաց, վնաս չ՚կայ.
«և կոչելով հիւրընկալը պատուիրեց խնամք տա-
«նել ինձ։ Սա հարցուց ինձ թէ՝ ուտելիքի պէտք
«ունիմ. ես ամբարտաւանեցայ ասել՝ ոչ. մինչդեռ
«փորս զկրտում էր քաղցածութենէ, և աղիքս կը
«գալարէր. ասա՛ քեզ անո՛ւշ պատիժդ հպարտու-
«թեան։

«Տան և մէկ ամիս մնալով ի Կ. Պոլիս, հան-
«դիպեցայ նոր դժբաղդութեան. նորին խնամածու
«հայրութիւնն (Պատրիարքը) խոժոռելով ինձ, շատ
«տառապանք տուեց, մինչև պարտաւորեցայ փախ-
«չիլ Տաճկաստանի զանազան գաւառներ և վերջա-
«պէս Հնդկաստան գնալու մի շոգենաւ գտնելով՝ 15
«անգլիական ոսկով վարձեցի և մտայ անդ։ 8)

«Ի վերջկոյս 1839 ամեն մեծ նեղութիւն կրե-
«լով հասայ ի Կալկաթա. երեք ամիս հիւրընկալուե-
«ցայ Պարոն Յարութիւն Աբգարեանի տանը, և
«դարձեալ մտայ Եպիսկոպոսական Ճեմարանն Անգ-
«լիացւոց (բիշէպ կալէճ), և խնամք տեսայ իմ ծա-
«նօթներէս. և այն տեղ շարադրեցի Հ ի ն Հ ն դ կ ա ս-
«տ ա ն ի Պ ա տ մ ո ւ թ ի ւ ն ը, որ և տպուեցաւ յամին
«1841, և ի փոխարէն բարերարութեան վերընծայե-
«ցի զայն Պարոն Յ. Աբգարեանցի»։ 9)

Ահա այսքան են Մեսրովպայ խօսած պատմա-
կան տեղեկութիւնները։

Կալկաթայի մէջ կար Յովհան Խաչատուր ա-
նուամբ մի անձ, Քօռ Յօհան մականուանեալ, զուար-
ճախօս յոյժ և միմոս, և մեր հասարակութեան սի-
ռելի. մի օր հացկերոյթի երևելի ինջոյք կար հոգե-

+250 589-2009
4316/41

լոյս Աղա Յովհաննէսի Էլիազի տանը. Քօռ Յովհաննէս էլ անդ լինելով՝ ի լուր բոլոր բազմականներուն կ՚ասէ Աղա Յովհաննէսին. «Երանի՜ քեզ, աղա, երանի՜ քեզ երկու պատճառի համար. մին՝ որ Աստուածութիւնը քեզ աղքատութիւն չէ տուել. և երկրորդ՝ որ աղջիկ տղոց հայր չէ արել զքեզ, որչափ զիս պատժել է ոտցանով-իմ դուռերքն թէպէտ սիրուն ան, այլ սիրուն բաղդ չունին. բաժինք՝ (օժիտ) չունին. Կալկաթու շան ձագերից ոչ ոք իմ դուռն գոլման չի՝ որ այս ցաւ և պատիժներն իմ գլխից բառնայ, ոտքա եթէ քոնն լինէին՝ ա՜խ, թէ որքան անձինք քո տան դռան սբայլին մինչ երեկոյ ծունր կը դնէին. ոտքա մին կողմ – մտածումամ եթէ ես և իմ պառաւ կինն էգուց մեռնեմք, Խաչատուր որդիս իւր քուերաց պիտի քուչէն գցի, ով է իմանում թէ ինչ շան ու կատուի ձեռ պիտի ընկնեն՝ գլխերունին ծուռ ու թեք բարձի դնելով»։ Այլն Աստուծոյ Աղայ Յովհաննէս իւր բնական բարի բնաւորութեամբ ի գութ շարժելով՝ կ՚ասէ նորան. «Մի այդչափ վշտանար, ահա ես կ՚ուխտեմ վեց հազար ռուբի տալ քո դստերաց համար, իւրաքանչիւրին երկու հազար ռուբի օժիտ. դու ջանա՛ որ քո սրտի համեմատ փեսաներ գտնես»։ Քօռ Յօհան ոտքի ելնելով՝ Աղային ոտից առջև ծունը կը դնէ, և շնորհակալ լինելով կ՚սկսի կաքաւել և ասել.

«Ե՜ալալի, երեք օձից ես պրծայ,
Ե՜ալալի, երեք վարձկան մշակ գտայ,
Ե՜ալալի, շուտով աներ կը դառնամ,
Ե՜ալալի, ես էլ նոր մարդ կը դառնամ

ՀԱՅԿԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱՅԻ-ՍՈՓԱ.

Վիզիթաւորք կ՚ունենամ.
Փառք քեզ մօլլայ ռուփի. Լայլն»:

Եւ արդարև այս արծաթի ձայնով ելաւ նախ մի Ջուղայեցի՝ Մանուկ Թորոս անուն, և խնդրեց Յօհանի Եղիսաբէթ դուստրն ի կնութիւն, և երկու հազար ռուփիներն ստացաւ Աղայ Յովհաննէսն, և անով եղաւ մի վաճառական Կալկաթայէն դէպի Միրզափուր երթևեկելով, և պատճառ լինողին կեանքը օրհնելով:

Այս կարկանդակին հոտը Մեսրովպայ քմաց ևս հասնելով, փութացաւ և խնդրեց Յօհանի երկրորդ դուստրը վատաբաղդ Զուշանը, և տիրացաւ երկու հազար ռուփիներուն: Օրիորդաց ծնողքը մեռան, և մնաց միայն երրորդ դուստրն Հեղինէ ի տան, և նա ևս ժամանակ մը վերջը ամուսնացաւ Ջուղայեցի Սիմոնեան Ղազարի հետ:

Մեսրովպ բաղդաւորուելով կնաւ և արծաթով, ձեռք կը զարնէ վաճառականութեան արուեստին, որում բոլորովին խակ էր և անվարձ. մանր վաճառքներ կը գնէ և իւր ամուսնոյն հետ կերթայ յերկրամէջ, (այսինքն Կալկաթայէն դուրս զանազան քաղաքներ,) և երբ վեց ամիսէն կը վերադառնայ՝ դրամագլխոյն կէսը կորուսած կը գտնէ:

Այս ժամանակ՝ 1844 թուին Տէր Յովհաննէս քահանայ Խաչկեան, Ջուղայէն Կալկաթա կը գայ իբրև Աւագերեց տեղւոյն, և իբրև նուիրակ Ջուղայու վանքին ի Հնդկաստան: Մեսրովպ կը փութայ երթալ սրա մօտ, այն պարապ յոյսով՝ թէ կարելի է բերած լինի նա Հարիւր օրինակ «Հնդկաստանի Պատ-

մութեան» գինը, զորս վաճառելու համար Ջուղայու վանքը զրկած էր. և երբ յանակնկալս կը լսէ նորամէ թէ՝ Խաչատուր եպիսկոպոս վանքէն հալածեալ լինելով, և նմա յաջորդելով Յովհաննէս եպիսկոպոս Սուրէնեան, գրքերի սնտուկը փակուած կը մնայ գրատան մէջ գնող չ՚լինելուն համար, ահեղ և սաստիկ կերպով կը բարկանայ և անասելի հայհոյութիւնք և լուտանք կը թափէ թէ՝ Առաջնորդաց և թէ՝ վանականաց և քահանայից դլխուն, այնպէս որ կը շուարի Տէր Յ. Խաչկեան և ապշելով կը զարմանայ, թէ հնա՞ր է արդեօք մի համբաւեալ գիտնական անձի այսչափ անլուր աղճատանք և հայհոյութիւնք դուրս տալ, և այն տակաւին անծանօթ մի քահանայի առջև:

Ապա Քահանայն անվրդով և խաղաղ հոգւով կ՚սկսի յանդիմանել զՄեսրովպ. «Լսել եմ, կ՚ասէ, քու գրականութեան համբաւդ, և կը կարծէի թէ դու հասարակ մի մարդ լինելու չես, ուստի կը փափագէի քու տեսութեանդ, և լսել և իմանալ քենէ ուսումնական խօսքեր. սակայն չ՚գիտեմ ինչ տարաբաղդութիւն եղաւ ինձ՝ որ այդ անակնկալի յուզմանդ և սարսափելի բարկութեանդ հանդիպեցայ. թերևս իբրև մարդ՝ ուրիշ արտաքին մի առիթէ գրգռուելով իմ վերայ թափեցիր անմարդավայել մրուրդ. բայց ասեմ քեզ, և ճշմարիտ կ՚ասեմ, սիրտս ճմրուեցաւ, և հոգւոյս եռանդը ցրտացաւ՝ թէ «Ուսումն առնէ զմարդ երջանիկ». այսուհետև չեմ սրխալիր կարծել թէ քեզմով ուսումնասէրք պիտի գայթակղին և թուլանան իւրեանց եռանդէն և ջանա-

սիրութենէն. և պիտի ասէն, թէ սա՝ որ կարեւոր իմաստութեամբ լցուած է այսպէս և այսպիսի վարմունք ունի, ինչ պէտք չարաչար աշխատութեամբ ուսում առնուլ: Յիրաւի կը նախանձիմ քու գրականութեանդ և գիտութեանդ վերայ.- բայց կը նախանձիմ նաև այժմու աննախանձելի վիճակիդ վերայ. ով կը հաւատայ թէ՝ Մեսրովպ Թաղիադեան հոչակեալ անձը յասպարիզի գրականութեան՝ փերեզակ է դարձել և վաճառական օճառի, խոզակի, սանտրի, գրչի, թղթոյ, մելանի, ասեղի և դերձանի, և այլ այսպիսի մանր մունր բաների. ծն. ի բաց տար անձէդ այդ անվայել բաները, և ձեռնարկէ ինչ որ պատշաճ է քու անուանդ, և իմաստութեանդ անգին ժառանգութեանը»:

Այս խօսքերու վերայ՝ ի սկզբան Մեսրովպայ ճակատի երակները կը ցցուին և ցասում կը յայտնեն, բայց վայրկենական լուութենէ յետոյ՝ ջուրի մէջ վրիպուած կրոյ նման, այս իրաւացի պատասխանը կը տայ. «Արծաթին յարգը՝ ոսկերիչը գիտէ, և իմաստնոյն պատիւը՝ հանճարեղ մարդը, բայց երբ մեր Ազգի տունը ատեցող է իմաստութեան, անշուշտ ես էլ պէտք է յանձն առնում մի գործ՝ որով կարենամ ապրուստս ճարել: Ես Անգղիացի չեմ, և ոչ Անգղիոյ իմաստասիրաց մէջ բնակուած, որք հարկ եղած ատեն՝ սակաւատող մի քերթուածով իրենց առօրեայ պէտքը կը հոգան, երբ տպագրութեամբ ի վաճառ հանեն. որչափ քեզ անհաճոյ է իմ փերեզակութիւնս, բազմապատիկ ևս է ինձ համար. սակայն առածը կ'ասէ. «Անճարն ուտէ զրանջար». փորձէ զիս, և

պիտի հաւատի լինիս ասածիս. մի կողմ թող թօնթորանքդ (քամահրանքդ՞.) և նպաստէ ինձ՝ և պիտի տեսնես զիս վայելուչ դրութեան մէջ»: Զայս ասելով կը բաժնուի քահանայէն խոժոռ դիմօք:

Հետևեալ առաւօտուն դարձեալ կը դայ առ քահանայն՝ և խորամանկ ու շողոմարար խօսքերով՝ «Ներէ ինձ, կ'ասէ, երեկուան անցքին. արդարև խռոված էր հոգիս. և կը կարծէի զքեզ ևս մին այն անպիտան քահանայից Ջուղայու, որոց ես հանդիպած եմ. բայց շիտակն ասեմ դտայ զքեզ իմ սրտի համեմատ մարդ. քու ընտանի դիմադրութիւնդ զիս ամօթապարտ արաւ, քու խօսքերի խորաթափանց սուրը մինչև ոսկորներս հասան, և գիշերը զիս քնահատ թողին. ուստի առաւօտանց սֆտա, փութացայ քեզ դալ և ի միասին նախաճաշ անել. և եթէ քեզ անհաճոյ չ'լինիր, կը սիրեմ քեզ հետ յարաբերութիւն ունենալ այսուհետև»: Քահանայն կը պատասխանէ. «կրկնակի ուրախութիւն կ'զգամ յանձին, մին՝ որ շնորհք բերիր ինձ հետ նախաճաշելու, և մին՝ որ իմ խօսքերու հաւանութիւն տուած ես. տայէ մեզ Տէր կապակցութիւն սիրոյ, որպէս զի համակարիք լինիմք փողովրդեան և Ազգի:

Նախաճաշի ժամը հասնելով՝ կը բազմին ի սեղան պարզ, և Մեսրովպ օղի (բրանդ) կը խնդրէ և կ'ստանայ. և ապա իւր մտքի գաղտնիքը բանալով՝ կ'ասէ. «մեր հաւատարմութեան և բարեկամութեան սէրը փորձելու համար մի փոքր խնդիր ունիմ առաջարկել ձեզ և անկասկած կը հաւատամ որ պիտի կատարէք: Երբ ես երկրամէջ գնացի, անտեղեակ լի-

նելով տեղական պէտքերին, փոխանակ շահու վնաս կրեցի, բայց յետոյ լաւ տեղեկանալով պիտանացու իրերուն, այժմ կը պատրաստուիմ ճանրորդութիւնս կրկնել. յոյս ունենալով թէ առաջին անգամու կորուսածս այս անգամ պիտի կարենամ ձեռք բերել. բայց դրամագլուխս շատ չնչին լինելով, կը դժուարանամ ինչպէս անել. ուստի խնդրեմ, տուր ինձ փոխ հինգ հարիւր ռուբլի, քեզ մի մուրհակ տամ ի դարձիս հատուցանելու պայմանաւ տոկոսով և շնորհակալութեամբ. ահա քեզ ասպարէզ մարդկութեան, մտիր քաջասրտութեամբ»:

Քահանայն կը պատասխանէ. «Արծաթով կրշռուած սէրը՝ իւր մետաղին նման կը հալի և կ'ապականի. և այս շատ ուղիղ է. վասն զի ուր որ արծաթի խօսք չ'կայ, այնտեղ կատարեալ սէր կայ. բայց ի հակառակին՝ միշտ վէճ և տարաձայնութիւն. արդ՝ ես նորեկ և դատարկաձեռն լինելով՝ կը տկարանամ այդ փորձը անել. բայց և այնպէս այդ կարևոր խնդիրդ բոլորովին զլանալ չեմ ուզեր, ուստի ընդունէ՛ առ այս երեք հարիւր ռուբլին՝ եթէ քեզ օժանդակելու բաւական կը համարիս». զայս ասելով կը յանձնէ դումարը:

Մեսրովպ ուրախութեամբ ընդունելով սոյն դումարը, կը խնդրէ թուղթ, գրիչ, և մելան, որպէս զի մուրհակ տայ, բայց քահանայն չ'հաճելով՝ բաւական է կ'ասէ, որ դու կը խոստանաս վճարել: «Գոհ եմ կ'ասէ Մեսրովպ, և շնորհակալ եմ քենէ. բայց թէ որ սրտիդ մէջ դանդատանք կամ գիղջ մ'ունիս, և կամ սորա նորա մօտ պիտի պարծենաս

այս դումարը ինձ տալուդ համար, այն ատեն քու հոգւոյդ վնասած, և իմ անձս տուժած կը լինիս, ուստի լաւ է որ բնաւ չ'տաս»: «Ոչ, ոչ, կ'ասէ քահանայն, սնապարծութիւնն օտար է լինէն, դու քու գործդ տես, և ես կը բարեմաղթեմ քեզ համար կատարեալ յաջողութիւն»: Դարձեալ գոհ եմ կ'ասէ Մեսրովպ և յաւելու. «Իմ ժամանակս կարճ է, եթէ անկարող լինիմ քեզ մօտ դալու և հրաժեշտի ողջոյն տալու, չ'վշտանաս»: «Ո՛չ, ո՛չ, կ'ասէ քահանայն, երթաս խաղաղութեամբ և Տէր լիցի քեզ օգնական»:

(Իսկ այս դումարի վճարումը այսպէս կը լինի. Տ. Յովհ. Խաչկեան մտադիր կը լինի Տէր Յարութիւն Ալամդարեանի «Հրահանգ Քրիստոնէական վարդապետութեան» անուն գրքերը կրկին տպագրել, ինչպէս կը տպուի 1846 թուին Արարատեան ընկերութեան տպարանը, և Թաղիադեանի հետ պայմանագրութիւն կը դնէ 600 օրինակ տպագրել 400 ռուբլով, ուստի 100 ռուբլի ևս կը վճարէ նոյն դումարի վերայ, (մինչդեռ 200 ռուբլով կարելի էր տպուիլ.) բայց գրքերի կէսը Մեսրովպ ինքն ի վաճառ հանելով՝ դայն ևս կ'իւրացուցանէ: Ահա հաւատարմութիւն և փորձ սիրոյ:)

Մեսրովպ վերստին երկրամէջ ելնելէն զկնի, քահանայն սրտի մտօք ցաւելով նորա անձուկ և անշուք վիճակի վերայ, կը ջանայ մի շահաւոր միջոց գտնել՝ և կը յաջողի. խորհուրդ կը յայտնէ ոմանց մի ընկերութիւն հաստատել Արարատեան անուամբ. և մի լրագիր ևս հրատարակել և Մեսրով-

պը վերատեսուչ կարգել, և Հնդկաստանի Հայ դաղ-
թականութեան անկեալ վիճակը վերանորոգելու ա-
ռիթ և միջոց տալ։ Այս խորհրդականաց մէջ պարոն
Մանուկ Զօրաբեան՝ լինելով այր ուսումնական, ազ-
գասէր և հեզահամբոյր, ուրիշներէ աւելի ջերմե-
ռանդ հոգւով հաճութիւն կը տայ, բայց սակայն
տեղեակ լինելով Մեսրովպայ փոփոխամիտ և անտա-
նելի բնաւորութեանը՝ տարակոյս կը յայտնէ մի դու-
ցէ յետոյ վտանգ և զղջում յառաջանայ ընկերու-
թեան, և բաւական խորհելէ և խորհրդածելէ
զկնի որոշում կըտան, և կը պատրաստեն մի կանո-
նագրութիւն, որպէս զի եթէ Մեսրովպ հաւանելով
վաւերացունէ իւր ստորագրութեամբ, ապա սկզբնա-
ւորութիւն անեն գործին, գրաքննիչ կարգելով զՄ.
Զօրաբ հրատարակելի գործոց։

Մեսրովպ վերադառնալով ի Կալկաթա, առա-
ջին անգամ ուղղակի քահանային կ'երթայ. և յետ
ողջունի կ'ասէ. «Բիճ մի բերած եմ իմ հետ երկրամի-
ջէն, կը մկրտեմ զայն և կը դրոշմեմ արդեօք». քա-
հանայն կը պատասխանէ. «ընդոծիններու (բիճերու)
համար մկրտութեան արդելք չ'կայ, նոցա յանցանքը
իւրեանց ծնողաց կը վերաբերի»։ Այն ատեն Մես-
րովպ ծոցէն մի տետրակ կը հանէ՝ չորս մատ լայ-
նութեամբ և մի քիլ երկայնութեամբ, նպարավա-
ճառների օրահաշուի նման, և քահանային առջև
դնելով կ'ասէ. «Ահաւասիկ իմ բիճս ա՛ռ և օծէ զայն,
դա բաւական է քու գանգատներուդ չափ դնել»։

Քահ. «Տա՛ր այդ բիճը Մանուկ Զօրաբին, նա պիտի
մկրտէ զայն»։

Մես. «Ի՞նչ ես ասում, միթէ նա այդ նոր պաշտօնն
էլ առած է, ես գործ չունիմ Մանուկ Զօրաբի
հետ»։

Քահ. «Եթէ մինչև ցարդ գործ չունեցար նորա հետ,
այսուհետև պիտի ունենաս, լա՛ւ ուշադրութիւն
տուր խօսքիս, այդ բիճի կնքահայրը նա պի-
տի լինի»։

Մես. «Անսովոր այլաբանութեամբ կը խօսիս, եթէ
ներքին խորհուրդ մի կայ, իմացո՛ւր ինձ խընդ-
րեմ, ապա թէ ոչ՝ մէկ կողմ թող հեգնութիւնդ»։

Քահ. «Ոչինչ հեգնութիւն կայ. այլ իրական առա-
ջադրութիւն, դու գնա՛ նորա մօտ, և մի՛ ծանր
համարեր խօսքս երբ ասեմ քեզ, թէ զգուշու-
թեամբ վարուէ և խորհրդածելով խօսէ հետը»։

Մես. «Ֆրամասոնի աղանդը այնքան ծածուկ չէ, որ-
չափ դու կը խօսիս քօղարկութեամբ. խնդրեմ,
ասա՛ եթէ մի բան կայ»։

Քահ. «Գնա՛ դու այժմ, ապա գիտասջիր»։

Այս բիճի անունն էր Սօս և Սօնդիպի, մի
վսեմ աշխատութիւն. քահանայն կարդալով զայն՝ կը
ցուցնէ Մանուկ Զօրաբի և ընկերաց, որք սիրահա-
ւելով՝ առաւել ևս կը հաստատուին իրենց խոր-
հրդի վերայ, և կը ջանան պատրաստել տպարան
Լայլն Լայլն։

Մեսրովպ անհամբերութեամբ երթալով Մ. Զօ-
րաբին, կ'իմանայ նոցա խորհուրդը, և հոգւով զա-
արճանալով կը համոզէ շուտով կատարել ամեն
պատրաստութիւնները. կը կարդայ գրուած կանոնա-
դրութիւնը, և հաճելով ու հաւանելով՝ ինքն ևս մի

քանի կանոններ կը յաւելու, և կ'սկսի հոգալ պէտք եղած բաները. մամուլ, ձուլեալ տառեր, թուղթ, մուր, գրաշար, և այլն. և այսպէս կը կանգնի Արարատեան ընկերութիւնը, տպարանով, գրատունով և Ազգասէր անուն լրագրով, որոց վերայ կատարեալ տեղեկութիւնք կան նոյն լրագրի առաջին հատորի մէջ: Բացի սոյն լրագրէն մի քանի թեթև գրքեր ևս կը տպագրուին, ինչպէս նաև Սօս և Սօնդիպին յամի 1847. որոյ տպագրութեան ծախքը՝ յորդորանօք Տ. Յ. Խաչկեանի կը հոգայ բարեպաշտօն Տիկին Հռիփսիմէ Խ. Մալխաս՝ չորս հարիւր ռուբլի շնորհելով՝ որում նուիրեալ է և մատենիկն առանց անուան յիշատակութեան: Այս գրքի վերջաբանի մէջ՝ երես 197. ի դէմս քահանային այս երկու տող քերթուածը կը յաւելու.

«Որ զթօնթոր սրբազան Հօր
Յիմ վաստակաց բառնամ բոլոր»:

Մեսրովպ՝ ի հակառակութիւն Յովհաննէս Աւդալեանի՝ Հայոց մարդասիրական Ճեմարանի վարժապետին, Սուրբ Սանդուխտ անուամբ դպրոց մի ևս կը հիմնէ, ուր երկսեռ մանկունք կը վարժուէին, արու տղայոց ինքն դաստիարակութիւն կ'անէր, իսկ աղջկանց իբր թէ իւր ամուսին Զուշանը. կային և Անգլիացի վարժապետ և վարժուհի: Թէպէտ յառաջագէմ եղաւ այս դպրոց՝ սակայն մի անբարոյական անցքի պատճառաւ, երկար չ'տևեց: Ո՞վ անիծեալ բրանդի, թէ ինչ տեսակ տեսակ չարեաց ստեղծող կը լինիս և խանդարիչ բարեաց, թոյն քեզմով պարծենան մոլիները...:

Մինչդեռ կենդանի էր Մանուկ Ջօրաբ՝ տպարանի կառավարութիւնը լաւ ընթացք ունէր, և ընկերաց խումբը միաբանութեան և համակրութեան մէջ էին. այնուհետև դրեթէ ամեն բան խանգարեցաւ. քանզի Մեսրովպ ևս իւր բնական խենթութիւնով գաղտնի արբեցութիւնը աշկարայ հանեց, որով ընկերութեան անդամք զզուելով հրաժարեցան և ինքը միահեծան տէր և իշխող եղաւ տպարանին:

Եւ տեսնելով որ շատերը բաժանորդութիւններին կը թողուն, և ծախքն կ'աւելնայ, կը վոխադրէ իւր բնակութիւնն ու տպարանը ի Զիչրա՝ 23 մղոն հեռի Կալկաթայէն. 10) ուր տեղ առաւել ևս անզուսպ արբեցութեան տալով ինքզինքը, կը թունաւորէ իւր հոգին ու մարմինը աղետալի կերպով...:

Մեսրովպ որ իւր՝ բարեացայարտ քահանային սիրտը վշտացուցեր էր վայրապար և ի զուր խոցելով. [1]) Կալկաթայէն հեռանալէ յետոյ՝ դարձեալ կը

---

[1]) Քահանային ցաւը ուրիշ բան չէր, բայց եթէ հեղինակին խարդախութիւնը: Սա որ սովորած էր տարին երեք չորս անգամ հանգանակութեան թուղթ հանել ժողովրդեան մէջ, այլ և այլ միջոցներով կամ տպարանին օգնելու նպատակաւ, շրջաբերականը նախ քահանային կը տանէր, և դէր կ'ասէր, օրհնեալ գրիչդ այս թղթի ճակատը՝ որ տրվիճնաւոր լինի, և այսպէս ամեն անգամ 2)—25 ռուբլի կը կորզէր: Անգամ մի ևս տանելով իւր շրջաբերականը կ'ստիպէ ստորագրել նշանաւոր գումար մի 60 ռուբլի, ասելով. «Գիտես որ մեր հասարակութեան ընտանութիւնը վայրի այծի կը նմանի. երբ մին թռչի, միւսներն էլ ետևէն կը թռչին. զի՛ դու այս տեղ 60 ռուբլի, և տուր քու սովորութեանդ համեմատ 2) կամ 25 ռուբլի. ես անով կը շատա-

դիմէ նորա օժանդակութեանը։ Իւր Զուշան ամուսինը որ թոքախտով կը մաշէր (թէ ծեծ ուտելով և թէ կրած տանջանքով,) յանկարծ կը դնէ մի նաւակի մէջ և տեղւոյն ժամակոչ Գէորգ Մանուկեանի հետ կը զրկէ ի Կայկաթա առ քահանայն մի անփակ նամակաւ որ հետևեալն է.

«Իմ հաշտ և խռով Հայր, միշտ գթած և այժրմ շփոթած.

Քահանային ոխակալութեան հոգի չէ տուած։

«Եթէ առաջին սէր քո առիս նկատես (որ ի կերչէ և ի ցեցոյ ապականեալ,) չունիս զայրանալ յիմս աննման վստահութիւն. զի պատուական մասն անձին իմոյ՝ թօշնեալ նուաղեալ Զուշանիս ասեմ, յաւիտենական հրաժեշտի համբուրիւ՝ առաքեմ առ քեզ ի լրութիւն մնացուածոյն՝ զոր ես անբաւական ի վճար։ Ընկալեալ սորա երեկ զվերջին թոշակ. դա ժողովուրդ քոյ է՝ կարօտ և վերջին աղօթից քոց. այլ և կին աղօթիւք քահանայի լծորդին, և աղօթիւք նորին լուծանին։ Այն ասեմ զայս և կրկնեմ, զի եթէ

նամ, և առաւել բան չեմ պահանջեր». և այս խարութեամբ գրել կը տայ 60 ռուբի. և քահանայն կը վճարէ 20 ռուբի։ Մեսրովպ առնելով զայն՝ կ'ուխտ պուռտալ – «Եկեղեցականները զիս շատ են խաբած և խարդախած, և ես անմեղունչ տուժած եմ, ուստի և դու լուելոյն տուր ինձ տոմարագրած գումարը, ապա թէ ոչ՝ ի լաւ աշխարհի գրեզ ժխտող և խարդախող կը հրատարակեմ։ Քահանայն անձար մնալով կը հանէ կը տայ՝ թքնելով արծաթի վրայ, և Մեսրովպ ծիծաղելով ստակը կառնու և կ'երթայ։

թօնթորաս, մեղանչես ընդդէմ հիւրասիրութեան Տովբիթայ կուրացելոյն աչօք, և լուսաւորեցելոյն հոգւով։

«Ես ազգի կոռն շատ եմ կրեալ՝ ի վեր քան զքոյն, և ոչ վշտացեալ ձանձրացեալ. ըստ որում Աստուած ոչ ուրեք ինձ սահմանեալ վիճակ ընտիր, որպէս թէ իմ եղեալ անիծապարտն Ադամ։ Տապն ջերման քաղէ զոգի իմ, երկարել զբանս չկարեմ. անիծեալ աշխարհ, անիծեալ և սնոտի յոյս կենցաղոյս. հոգ Զուշանայ քեզ, և քոյն՝ Արարչին տիեզերաց։

Քոյր Նիկոմահ Մեսրովբ.

Զիւրա 1855 Մէյի 4.

Եւ ահա խղճալի Զուշանն պատգարակի մէջ դրուած եկեղեցւոյ գաւիթը կ'երևի, թուլցած, նուաղած, ուժէ կտրած, ոչ անկողին, ոչ բարձ, ոչ վերմակ, և ոչ անդամ հագնելու զգեստ ունենալով։ Քահանայն ապշելով և զարհուրելով կանչել կը տայ եղբայրն ու քոյրերը (որ եկեղեցւոյ մօտ էին,) «կ'աղաչեմ, կ'ասէ, վերուցէք, տարէք սա ձեր տունը, մինչև որ ես խորհեմ և կարգադրեմ պէտք եղածները»։ Բայց նոքա արտասուելով կը պատասխանեն. «երկու պատճառաւ անհնար է մեզ այդ խնդիրդ կատարել. նախ՝ մեք զաւակաց տէր լինելով՝ ինչպէս կրնամք այս փոխադրական ախտը (սելի) մեր տունէն ներս մըտցունել. երկրորդ՝ դու ինքնին զիտես Մեսրովպի ան-

ճոռնի բնաւորութիւնը, վաղիւ պիտի ելնէ ասէ՝ թէ իմ ամուսինս սպանեցիք, թող ուրիշ վերջէն գալիք դժուարութիւնները». (այսինքն Թաղման հոգը ևայլն)։

Քահանայն ճարահատեալ՝ պարապ տան մի սենեակ կը վարձէ եկեղեցւոյ մօտ, կը հանէ հոն Զուշանը՝ հոգալով անկողին, փռոց և այլ պէտք եղածները, և սպասուհի մի ևս քովը դնելով, շուտով բժիշկ բերել կը տայ, որ գննելով կ՚ասէ՝ թէ ի զուր է դարման տանել այս հիւանդին, քանզի 10 ժամէն աւելի չէ կարող ողջ մնալ. լաւ է որ իր վերջին պէտքը հոգայք։ Ջայս լսելով՝ քահանայն անմիջապէս փայեկ մի կը վարձէ և կ՚ուղարկէ ի Ձիչրա, գրելով Մեսրովպայ՝ որ իսկոյն փութայ և ժամանէ ի Կալկաթա, որովհետև Զուշանի վիճակը շատ ծանր է, և կամ թէ՝ կ՚ասէ, ինձ իմացուր թէ երբ մեռնի, ուր թաղել տամ մարմինը, եկեղեցւոյ բակը թէ գերեզմանատան մէջ։ Մեսրովպ գրաւոր պատասխան չ՚տար, այլ խօսքով թղթատարին կ՚ասէ. «Ես չեմ գիտեր, իմ գլխումն այժմ խելք չ՚կայ. դու գնա, ես էլ կը գամ եթէ կարենամ»։

Զուշան հոգեվար կը լինի. և Թաղման հոգը կասկածելի կը մնայ. եթէ եկեղեցւոյ բակը թաղուէր, տեղազինը և այլ ծախքերը թեթև չէր լիներ. իսկ եթէ գերեզմանատան մէջ՝ ով գիտէ, գուցէ ներհակէր Մեսրովպ, ուստի կրկին անգամ թղթատար կ՚ուղարկէ այսպէս գրելով. «Կինդ հոգեվարք վիճակումն է, թերևս մի ժամից հոգին կ՚աւանդէ. եթէ կարող ես փութով հասիր, ապա թէ ոչ՝ նորա դիակը պիտի տամ ամփոփել եկեղեցւոյ բակում»։

Նոյն գիշեր Զուշան կ՚աւանդէ հոգին. եղանակը ջերմ լինելով դարշահոտիլ կ՚սկսի. փութով արկղ կը պատրաստուի և ամեն բան կարգադրելով՝ ամբողջ օրը սենեակի մէջ կը պահուի. և երբ կը տարուի յեկեղեցին Թաղման կարգը կատարելու. ահա Մեսրովպ կ՚երևի ի ճանապարհին և հանդիսակից կը լինի Թաղման։

Թաղումէն յետոյ՝ քահանայք կը հրաւիրեն զՄեսրովպ իւրեանց սենեակը՝ ճրագները վառելու ժամանակ, որ և գլուխն օրորելով կ՚երթայ, և Տէր Յով. Խաչկեանի դառնալով կ՚ասէ. «Զատ գոհ եմ քենէ, այն ամեն աշխատութեանցդ համար, մանաւանդ եկեղեցւոյ բակը տեղ պատրաստելուդ համար. ներէ ինձ, տուած ձանձրութեանս համար, որ անճար մնալով ի հարկէ ստիպեալ տուի»։

Քահ. «Մի այդպէս զրուցէք, ինչպէս դու մեր եղբայրն ես, նոյնպէս նա ևս մեր քոյրն էր, առաւել բան մի չ՚արինք. զոր պարտն էր առնել, արարաք»։

Մես. «Ո՛չ, ո՛չ, այդ քաղաքավարական ձև է. բայց խնդիրն իրօք ծանր էր. ամեն մարդ կարող է քաղաքավարութեան վերայ ճառել, բայց զորձադրել ոչ, ահա տեսաք աներորդւոյս և քենեկալներուս ապերախտութիւնը, լոկ թէյի (չայի) հրաւէր մ՚անգամ չարին ինձ. տեսնելով որ ես այսպէս ներքին և արտաքին տագնապների մէջ եմ»։

Քահ. «Թող, թող այդ խօսքերը, վասն զի նոքա ևս սուգով լցուած սրբեալի պէս զքեզ մոռացան, թերևս յուսալով որ դու ինքնին ընտաներաբ կերթաս նոցա տունը»։

Մես. «Այո, թէ այսպէս և թէ այնպէս ես ամեն բան գիտեմ. տուէք ինձ այժմ Զուշանի համար եղած և թաղման ծախուց ցուցակը»։

Քահ. «Վաղահաս է խնդիրդ. յետոյ կը տամք»։

Մես. «Ո՛չ, ո՛չ, այս ժամուս կը խնդրեմ, քանզի վեց թիավարով նաւակս՝ գետին (Գանգեսի) եղերքն իմ դարձիս կ՚սպասէ. պէտք է անյապաղ վերադառնամ, վասն զի տունս էլ այն կողմը անտերունչ մնացած է»։

Քահ. «Հաշիւդ պարզ է. արկղի արժէքն է 60 ռուփի, դեղագին 150, խաչ, աշտանակ, խնկատուփ և մոմաղին 20. գերեզմանափոքաց 8. պատանողին 4. սպասուհւոյն 2 կամ 3. ընդամենն 245 ռուփիք»։

Մես. «Հապա սենեկին վարձքը՞. թղթաբերին երկու անգամ գալը՞. և ձեր պաշտօնչէքը՞»։

Քահ. «Ընչին բան է այդ և յիշատակութեան անգամ արժանի չէ, և պաշտօնչէք որ կ՚ասես, ինչպէս արդէն ասացինք, դու մեր եղբայրն ես, և նա մեր քոյրը, ուստի մեծ շնորհ մի չէ մեր կողմանէ առ ձեզ»։

Մես. «Է՛. մէկդի թող կատակը. ամեն բան իւր ուղիղ հաշիւը կը պահանջէ. և թէ՝ արժան է մշակն վարձու իւրոյ. «զայս ասելով կը բանայ դրամատուփը զոր հետն ունէր, 245 ռուփի դրամաթուղթ կը հանէ, և 110 ռուփի ևս պաշտօնչէք աւելցունելով կը տայ. և քահանայք կ՚ընդունին շնորհակալութեամբ։

Մեսրովպ ոտքի ելնելով երթալ կ՚ուզէ, բայց քահանայն կ՚արգելու ասելով. «Քա՛ւ լիցի թէ թո-

ղում զքեզ, այսպիսի մութ և խաւար տեղն երթալ մանաւանդ որ անձիդ ջերմութիւնը տակաւին չէ դովացած, այս գիշեր հանգստացիր մեր մօտ, և առաւօտուն կանուխ կը գնաս»։ Եւ այսպէս հաղար ու մէկ ողոքանօք հազիւ կը հաճի մնալ անդ։

Երբ կը բաղմին ի սեղան, Մեսրովպ կը խնդրէ մի քիչ բրանդ և ջուր. քահանայք կ՚ասեն թէ՝ «Մեք չեմք իշխեր քու կամքդ կատարել, քանզի կը տեսնեմք որ սաստիկ ջերմ ունիս և կը նեղէ զքեզ, կ՚աղաչեմք խնայէ անձիդ»։ «Վնաս չկայ, կ՚ասէ Մեսրովպ, ես փորձով գիտեմ. արդէն նաւակիս մէջ ևս ունիմ հետս բերած բրանդ»։ *) Կը բերեն երեք մատնաչափ բրանդ մի քիչ ջրով, կը խմէ, բայց առանց կերակրոյ ննջել կը խնդրէ, և փափուկ անկողին պատրաստուելով կերթայ ննջել, քահանայք ևս յետ ընթրեաց կերթան ի նինջ։

Տակաւին կէս գիշեր չէր եղել, որոտում մի կը լսուի Մեսրովպայ անկողնէն, (սաստիկ բաղաձայն էր սա,) Հոգեգալստեան Շարականը, «Սարսափելի հողմոյ նման», կը կարդար։ Քահանայք ելնելով կը

*) Աբրեցութեան ախտով խմորածներէ կատարածն այս է. մինչև մահուան վերջին ժամը չեն սթափիր. ինչպէս որ ահանատես եղած եմ մի անձի, որ անկողնոյ մէջ բերինէն շարաւ կը բղխէր. և քահանայն մօտը կեցած հաղորդութեան ս. խորհուրդը կը մատակարարէր, և երկու ժամէն հոգին պիտի փչէր, կ՚աղաղակէր, Նիկողոս Եպբայր, մի փաքր բրանդ տա՛ր ինձ: Ո՜վ թշուառութեան ախտացեալ և ապականեալ բնութեան հողածին մարդոյ:

փուլթան կ'երթան մօտը, և ցնորեալ վիճակի մէջ կը գտնեն զայն ջերմին և բրանդին գոլորշիով այլայլեալ։ Սառ ջուր կը ցանեն երեսը, խօսելով կ'սթափեցուցնեն զինքը, և թէյ խմցունելով մինչև առաւօտ կ'զբաղեցուցնեն, և կը տանեն իւր նաւակը կը դնեն։

Մեսրովպ ելնելով ի Զիչրա, յետ մի քանի աւուրց այսպէս կը գրէ առ քահանայն։

«Իմ անյիշաչար տէր տէր.

«Ես կենդանի եմ. նոյն և քեզ ցանկամ ի բովանդակ մտաց, բայց ոչ իմովս չարաչար բաղդիս։ Մեսրովպիդ սիրով՝ յանձն առեր զմեծն, արա և զմին վերջինս. տուր յօրինել տապանաքար մի վասն գերեզմանի Զուշանին Զ ու ն ա ր ս տ օ ն [1]), և տուր փորագրել այսպէս.

ՀԱՆԳԻՍՏ

Տիկին Զուշանայ Մեսրովպ Դ. Թաղիադեան, Հիմնադրի և առաջին վարժապետի Հայոց դպրոցի Սրբոյն Սանդխտոյ, որ ի տիսն 43 հանգեաւ առ Տէր, ի Կալկաթա. յամի Տեառն 1855 Մայիսի 7։

Սրբէ սգով զայս տապան վշտալից այր իւր։

«Գրաւեալ եմ ես ի հոգ անփոփման տպարանիս և կարասեաց տնայլին, առ բերելոյ այդր ի վաճառ. գիտես արդէն 12 հազար ռուփիք անցեալ ի լրութեան սարուցն, տաց քեզ կիսագին, կամ որքանեաւ ինքնդ հաճեսցիս. գուցէ երբէք հոգին Եղիայի հանգիցէ յԵղիսէ, և զոր ինձ թերի՝ քեզ առցէ լրութիւն. եթէ լուիցես ինձ՝ չկարծեմ ստրջասցիս, այլ եղիցին կամք քո։

«Յատուկ ևս շնորհակալ լինիմ, եթէ ինձ առաքիցես զեօթն հատ թեթեւագին փականք (զուգլ)։

Քոյր խոնարհ և վշտալից Մեսրովպ

Զիչրա Մէյի 15—1857.

Դարձեալ գրէ Մեսրովպ առ քահանայն և յետագայդ.

«Սրբակրօն և Խաչակիր Աւագ Քահանայի Տեառըն Յովհաննու՝ խնդալ.

«Վերադարձայ յանցեալ տարի՝ մտախոհ ի վերայ հայրենասէր յորդորանացդ՝ որ յաղագս ելանելոյս ի Ջուղա՝ և պիտանացու լինելոյ Ազգիս ի հոգևոր և մարմնաւոր բարիս նորա։ Զկնի երկար տարտամանաց, մանաւանդ վասն խակ հասակի որդիացելոյն իմոյ Յակոբայ Անանիայ՝ ընտրեցի ի վերջոյ ոչ զնա անմխիթար թողուլ աստ և ոչ զանձն զրկել և զբազմութիւն աշակերտելոցն ինձ յապագայ բարութեանց անտի՝ զորս յուսալի էր յառաջ տանել միաբանութեամբ։ Ուստի որոշեալ նմա, այսինքն Յակոբայ զոր ինչ և ունէի երկրաւոր բարիս՝ բաց ի գրոց իմոց, համարձակեցի և գրեցի առ Աղնիւ Պարոն Յարութիւն Աբգարեան ի 16 Նովեմբերի անցելոյ՝ ընծայե-

---

[1]) «Զուշար-Ստօն» չէ ընական քար, այլ գոյացութիւն լմն խճային, և դիւրեղծելի յանձրևոյ և ի կոխոյ ոտից, որ և արժանեղծ։

ցուցանելով դպրոցի նորա ի Նոր-Ջուղա՝ զգրեանս իմ և զանձն ծերունի: Զնորհակալութիւն արդարև գթութեան նորա, որ սիրով ընկալաւ զերկոսին և՝ այլ վասն պատերազմին Անդղիացւոց ընդ Պարսկաստան՝ յապաղեցաւ կատարումն՝ մինչև ցայսօր ժամանակի:

«Յանցեալ Ապրիլի ցուցակ արարեալ ամենայն զոյից՝ ի սկզբան այսը ամսոյ յանձն արարի զայնս Յակոբայ. այլ տակաւին երկրայ էի վասն անձամբ զանձն կառավարելոյն: Ի 11 նմին ամսոյ զեր ընկալայ ի Կալկաթայ, եթէ յարգելի կնքահայր նորա պարոն Գրիգոր Ս. Մանուկ եկեալ այդր տամբ հանդերձ՝ և փափագէր տեսանել զՅակոբ: Զարմանալին այն եղև՝ զի մինչ ընթեռնուի զգիրն ի ձեռին՝ հաս և շոգենաւն Աշամայ երթալ ի Կալկաթա, զոր անակնկալի յաջողութիւն ի վերուստ համարելով՝ ածապարեցի նովին յղարկել զնա, և հետզհետէ գրել թէ իւրն, և թէ յարգելի կնքահօր նորա, որպէս զի մի տնօրինիցէ, և միւսն հնազանդեսցի, կալ մնալ ի ներքոյ պաշտպանութեան նորա ցլրումն հատակին զոնեայ: Բա որ թէպէտ մինչ օրս չ'նթերցայ ինչ՝ սակայն յոյս իմ լի է անմահութեամբ՝ որ յերկուսեքեան ընդունելի լիցի նոցա առաջարկութիւն իմ:

«Ի 15 ամսոյս հրատարակեցի ի լրագրի տեղւոյս, թէ Մէջի 1. էն ամենայն կանխակցութիւն իմ ընդ Անանիայ և Կո-ի՝ զադարեցաւ. և իսկոյն ի վաղուին՝ որ կիրակի էր, եկին երկու Անդղիացի պարոնայք, և հրաւիրեցին զիս երթալ ի Կաչառ, (անդ՝ ուր մեր բարեկամ պարոն Սարգիս Զիրիսոն է

բժիշկ), և վերակացու լինել երկուց դպրոցաց տեղւոյն, խոստանալով տալ ինձ ամսոյ 120 ռուպիա: Պատասխանեցի. «Այսօր խօսք կիրակի է, յետ մտածելոյս գրով յայտնեցից»: Եւ սկսայ վերածել և վերկանել, բայց բոլոր որում տեղն Հայ չկայ, և մեր Պարոն Զիրիսոնի տեղն կալն անհաստատ է, մանաւանդ զի խորհեցայ թէ արդէն իսկ 55 ամք են յորմէ հետէ կամ, և ոչ ումեք ծառայեցի, եթէ ոչ Ազգիս, և այսուհետև ո գիտէ, որքան պիտի ապրիմ. թողուլ զազգն, և ծառայել օտարաց՝ կամ կորուանել զայսքան ամաց աշխատութիւնս վասն պրոտոյ միայն, օտարոտի թուեցան ներքին կրից և վաքադանացս. վասն որոյ վերջին պատասխանի ետու նոցա թէ ես արդէն իսկ խօսեցեալ էի առն այլում:

«Ո՞վ երբէք սովամահ մեռաւ ի նոր Ջուղա, զի ես հոգացայց ինչ գկենաց իմոց՝ երբ անդր հասանիցիմ: Ստուած որ կերակրէ զձագս ագռաւուց կարգացուցաց առ ինքն՝ կարէ՝ որպէս կամի ողորմութեամբ իւրով ապահովել և ինձ զապրուստ ինչ ի ծերութեան: Ես եթէ վասն ապրստի իմոյ հոգայի ինչ, զիմս այլոց ոչ տայի, և բաւական էր:—Եթէ զպարապութիւն և զհանգիստ սիրէի՝ ահաւասիկ զերկոսին ևս ունիմ ի մեզկ և ի թուլամորթ քաղաքի այսմիկ: Բայց չէ, կամիմ եթէ կեամ, պիտանի լինել Ազգի իմում. և եթէ մեռանիմ, իմէջ Ազգիս մեռանել: Ապա թէ ոչ՝ այլ ևս ոչ հարստանալոյ ակն ունիմ, և ոչ ևս պէտք: Ամենայնի՝ որոց ներկայ կարօտիմս՝ է թէ որպէս հասից անդր:

«Ահա յանցեալ բաժանմանէս յիրերաց մինչ ցայ-

սօր՝ վճիտ անցս և խորհուրդս իմացար թէ զինչ, այժմ թոյլ տուր հայրաբար և զպատճառն մատուցանել Ձեզ, թէ վասն էր գրեմս աշխատ առնել զՁեզ նովիմբք։

«Առաջին պատճառն է, որ աշխատութիւնդ ինձ վերայ շնորհ համարելով՝ մին ցուցակ յօրինես վասն ճանապարհի ծախուց, տեղիցդ մինչ ի Ջուղա, եթէ արդեօք ո՞րքան ծախք երթան վասն իմ, միոյ Հայ ծառայի, և քանի կամ 22 արկեղաց. թէ ի ծովու և թէ ի ցամաքի։ Եւ այն ոչ շատ շռայլ, և ոչ ժլատ։

«Երկրորդ որ՝ ստոյգ իմանալով գրես ինձ, թէ արդեօք պատերազմն վերջացեա՞լ իցէ, խաղաղութիւնն տիրեա՞լ, և ճանապարհք բաց և արձա՞կ։

«Երրորդ՝ որ գրես թէ ե՞րբ իջանես ի Կալկաթա, որ կարողանամ շուտով նաւ կամ շոգենաւ գրտանել ելից իմոց, քանզի Կալկաթա ես բան չունիմ, և ոչ իսկ հաճութիւն որ գամ տեղդ ընդունայն ծախս առնել։

«Եթէ Պարոն Մկրտում Այվազեան տեղդ լինի, խնդրեմ իւրն ասել յինէն դիմաց, որ ուր և ծառայէ ներկայ, թոյլ չտայ, յայլ ուրեք չելանէ, քանզի եթէ գամ, Աստուծով պիտի ի միասին ելանեմք։

Ցաւել մնամ հրամանոց որպէս միշտ
հաւատի և խոնարհ ծառայ.

Մ. Դ. Թաղիադեան

27 Մէյ 1857.

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԱՌ ԱՅՍ.

«Արժանապատիւ Պ. Մ. Դ. Թաղիադեան, խնդալ է Տէր. Սիրելի իմ ըստ հոգւոյ.

«Սիրալի դրութիւն քո ստացեալ այսօր՝ ուրախ եղէ յոյժ ի վերայ ողջութեանդ անձին, մանաւանդ և հանդերձանացդ չուլից ի Ջուղայ, ուր առաջին եղև մխիթարիչ կենացդ. որպէս և թուի երկրորդում ի ծերութեանդ ժամանակի. սակայն չկամիմ թագուցանել ի քէն՝ զոր հաս ինձ ափսոսել յորժամ զգիրդ ընթերցայ և զամեն գրեալսն ի նմա առի ի միտ։ Գիտեմ զի ծիծաղելոց ես ի վերայ անհնարեացըս, բայց և այնպէս երկրորդեսցես զառիթս, յորժամ ասացից, ափսո՞ս որ յերիտասարդական առոյգ և աշխոյժ հասակն՝ չունի ընդ իւր զեկաւար՝ փորձ և կատարելութիւն ծերութեան, որպէս և ծերութիւնն զուրկ ի զօրութենէ անձին ի խորհուրդ սրրտին լոկ տագնապէ յընդվայր կորուստ իւր. կամիմ ասել՝ երանի՞ թէ արդեանս նկատողութիւն քո և դիտողութիւն վիճակի, լինիցէր՝ յորժամ ամենայն ջերմեռանդութեամբ և վառուն աշխուժութեամբ բաղմեալ յԱթոռ վարժապետութեան Ամենափրկչեան Ճեմարանին Ջուղայոյ, և շուրջ զքեզ պարառեալ զընտիրս ընտիրս որայից, դու նոքօք և նոքա քեզ կազմելոց էիք պսակ և պարծանք Ազգի և տանն Ջուղայոյ իսկ, որ միշտ լեալ է պարծանաց տեղի և ցանկալի բաղմաց. թերևս և դու այսօր առաւել փառս և պատիւս անձին քում զգեցեալ յերախտագէտ հիւրասիրաց անտի, քան զոր եդ ի վայրիդ մենացեալ,

անտերունչ և անխնամ, քանզի վկայեն քաջ զհիւրասիրութենէ տեղւոյն, որչափ ինձ իբրև քաղաքացի և տնեցի չարաք զայն, թող և զհակամէտն։

«Այլ ի վերայ ամենայնի դեռ ևս զաշխատասիրութիւն մետասաներորդ ժամու, լիով զվարձս պարգևել խոստանայ, որչափ և անագանն ընծայէ ոչինչ. ուստի գովելով զառաջադրութիւն քո ասեմ. Տէր յաջողեսցէ, և զմնացորդ ժամանակս կենաց քոց՝ ամենայն ազգ միխիթարութեամբ և բաւարարութեամբ պսակեսցէ, թերևս և քո շնորհիւ մեզ լիցի մասն յաջողակութեան և շնորհ վերադարձի ի ցանկալիս. ուստի փութամ ամենայն հաճութեամբ տալ զզատասխանի երից կարևոր հարցիդ ի նոյն։

«Յաղագս ծախուց ճանապարհորդութեանդ աստի մինչ ց՝Ջուղայ այպէս լինի իմանալ. զի եթէ շոգենաւաւ չուիցես աստէն ի Բոմբայի, յայտնի է վարձ նաւուն տպագրեալ կանոնիւն, զոր կարծեմ ոչ պակաս քան զ300. կօմ. ռուփիք լինին. որպէս իսկ կանոնն տպագրեալ սովաւ առաքեմ ի բաւարարութիւն. այլ ի Բոմբայոյ ց՝Բուշեռ՝ չիք ասեն կարգ տէրութեան շոգենաւաց ընդունել զոք ճանապարհորդ, բայց եթէ պատահիցի երբեմն ձրիապէս ստանան, և սովիմբ յաջողակութեամբ յորժամ և կամիցի ոք՝ կաբէ ելանել անձնաւոր, և ոչ ծանրաբարձ կարասեօք, զի յատուկ է և ծանր վարձ բեռանց. իսկ առադաստաւոր նաւաւ չուելն որ յաջողակ լինի ի նոյեմբեր և ի դեկտ. ամիսս, թէ և աստի ուղղակի առ Բուշեռ ելանող նաւք ի չորից ամաց հետէ և այսր չլինին. սակայն Մասկաթա նաւաւք վճարին հարկաւորք, որպէս գնացին աստի հերու ծեր Մկրտիչ Յ. Տէր-Գուկասն, Մարգար Մելքայէլն և այլք ոմանք. վերջաւորելով ասա ընդ նախուդին մինչ ց՝Բուշեռ զվարձ բեռանց իւրեանց և անձանց իսկ, առ լեզակի արկեղաչափ արկղն աստի ց՝Բուշեռ 8. կօ. ռուփիք, և առ անձն հարիւր ռուփի պասէջ. ազատ ի պասէջից միոյ ծառայի, որ ընդ տեառն մնայ առանց յատուկ վճարման, որպէս և ոոցա ընդ իրաց բարձելոց ի նաւ, նոյն ինքն նախուդայ, իւրով ծախիւք հոգացեալ յատուկ նաւաւ կամ բաղալով հասուցեալ է ի Բուշեռ։ Իսկ յաղագս ծախուց ցամաքի ի Բուշեռայ ց՝Ջուղայ յայտնի է. զոր ինչ բարձցես առ 100. զիտրն մինչ ց՝Զիրազ երբեմն 25, և երբեմն թանկագին 30, դեղոյ ռուփիք. այնպէս իմա և անտի ց՝Ջուղայ, որպէս և հեծելոյն ծախք 10-ից մինչ 15 վարձ ջորւոյ հատուցանի թէ ի Զիրազ և թէ ի Ջուղայ գնալոյ. ահա՛ այս է իմոյ գիտացեալն զոր ծանուցի քեզ սիրով։

Ի մասին հանդարտութեանն պատերազմի և բարձման ազմկին Պարսիոս, Ապրիլ 28-էն գրովն Բուշեռայ երևի դաշինն ձեռնագրեալ է Ջահն, և զինադադարումն եղեալ, որպէս և ասեն Եւրոպէացի զօրք արդէն սկսեալ են վերադառնալ ի Բոմբայի. այլ սևաւ սէփայիք մնան ասեն տեղն, մինչ հէրաթ թողցի ի Պարսից. այսչափս այժմէն յայտնի է, այլ կատարածն յետ այսու լուեալ ծանուցից քեզ սիրով։

Մկրտում Այվազն չէ ի ծառայութեան ուրուք, այլ ի կամս իւր սպասէ մինչ զկնի անձրևուն և բացման եղանակին ելցէ ի տուն իւր, ուստի և զ՝ասմ ա

քոց ոչ հաղորդեմ նմա, զի մի պատճառ իմն լիցի քեզ ընդունայն ծանրութեան, զի յորժամ ելք քո յաջողեսցի Աստուծով, նա պատրաստ և յօժարամիտ լիցի ընդ քեզ ելանել. զի քան զքեզ լաւ տէր և պաշտպան չկարէ գտանել նա, որպէս և քո ծառայ հաւատարիմ քան զնա։

Տապ և տօթ ջերմագին աւուրս չթողու այլ առաւելով ի գրիչս, ուստի վերջաւորելով զբանս, մընամ որպէս միշտ սիրելութեանդ

Բարեմաղթս
(յետոյ) Տէր-Յովհաննէս Խաչիկեան
Խաչիկիր Ա-ոյ Նիբէց։

Ի Կալկաթա 1857 Մէյի 30.

Առ Արժանայարգ Պարոն Մ. Դ. Թաղեղեան
ի Դաքա։

Ի 20 Յուլիսի՝ Մեսրովպ իւր բոլոր կահիւք կը գայ ի Կալկաթա, և առուրդի կը դնէ թէ տան կարասիներն և թէ տպարանի մամուլն իւր սարօք, և կապարեայ ձուլեալ տառերով. և ստիպմամբ քահանային կը վաճառէ զանոնք երեք հազար ռուփիով. իւր քով կը պահէ միայն 16 ոնտուկ գիրք, թէ իւր տպածներն և թէ յանուն Արարատեան ընկերութեան պահուածներն ի Կալկաթա. քաջ գիտնալով՝ որ եթէ զանոնք վաճառելու ելնէ անդ, մանաւանդ եթէ ձրի անգամ տալ ուզէ, գնող կամ

փափագող պիտի չգտնուի. բայց մտատանջութեան մէջ էր զանոնք ի Հայաստան (ուր կամէր երթալ,) փոխադրելու ծախուց ծանրութեանն ու դժուարութեան համար։

Այս միջոցին Պարոն Մկրտիչ Խ. Յովակիմ (եղբայր Աւագերիցուն) մի նաւ վարձելով կը բեռնաւորէ բրինձ, շաքար և այլ վաճառք Բումբայի համար, որով կը յաջողի Մեսրովպայ ելնելն ի ճանապարհ, իւր Գէորգ ծառայով և ամեն կահկարասիներովն՝ ձրիաբար. և բաց ասոր պատուէր կը տրուի նոյն նաւուն Բումբայու գործակալ Միրզա Մահրուբին, որ մեծ հոգ տանի Մեսրովպայ վերայ՝ (քանզի հիւանդ էր,) և ձեռնտու լինի նորա ամեն պէտքերուն, որոյ համար այսպէս կը գրէր Մեսրովպ։

«Իմ Սիրելի Մկրտիչ.

«Էր երբեմն, յոր ես որպէս վարժապետ քո Ամենապրկչեան Ճեմարանի Ջուղայ՝ կրթէի զքեզ յուսումն, և դու ի թիւս Համբակաց մակաղէիր որպէս դառն. ոչ իմ և ոչ քո ճակատագիր ետուն մեզ զգալ՝ զոր զգամք այժմ. դու աղնուականի սիրով գերազանց եղեր քան զամենայն աշակերտս. և զոր ինչ ի ժամուս փոխադարձ քեզ, չելանէ ի վաստակաբեկ գրչէ իմմէ հուն անցողական ի շնորհակալուս. Ամենաբաւականն Աստուած՝ կշռեսցէ ըստ արժանւոյդ վճար։

«Միրզա Մահրուբ վաղ քաջ պատրաստեալ ինձ տեղի կելոյ ի Ղօլարայ, տուն պարտիզաւոր յարդաբեալ կարասեօք, իբրև տեղի զբօսանաց մերթ ընդ մերթ գայ իւրով բարեկամօք. սորա ի գալն ի նա՝

յետ ծանօթանալոյն ասաց ցիս մակուկաւ լիջանել ի ցամաք. եկի և ես. հասոյց զիս և կառօք իւրով ի Ղօլաբայ. խոստացաւ զբեռինս իջուցանել յիւր գործատունն. յիշեաց զի և եթէ ունիցիմ ինչ պիտեւան՝ ազգ արարից ինքեան. շնորհակալութիւն տալով յիշեցի միայն զհոգ ելանելոյ իմ ստի։

«Զիտակն ասեմ, ի մէջ 5. աւուրց ասա օգուտ մեծ յանձն իմ տեսանեմ. բայց արմատ անազորոյն թարի՝ ոչ քանցեալ յանձնէս. ի նաւի անդ և ոչ սակաւ ինձ վշտացոյց, և այժմ ծանր քան զամենայն հոգ իմ է, թէ ո՞րով ճանապարհաւ ուղղել ըզգնացս. ծանր է ինձ և ահագին վարձ բեռանցս. եթէ չէր իմ զզուեալ յԱռաջնորդէն Ջուղայ, յօժարէի գընալ ի վերայ Պարսկաստանի, թերևս յաջողէր ինձ տալ թեթև գնոյ զմատեանս անդ, և ազատիլ ի ծանրութեանց աստի. բայց կարծեմ ի վերջէ այս լիցի ինձ։

«Միրզա Մահրուբ ասաց ինձ այսօր, «Բաղալայ հաճի Ալմասին հանդերձի յուել ի Բուշեռ. եղանակն ևս բարեխառն՝ պատեհ ինձ թուի եթէ հաճեսցիս նոքաւ ելանել. ունիմ թեթև վարձով քեզ ճանապարհորդել». խոստացայ զվերջաւորականն ասել ի վաղիւ. բայց այսուամենայնիւ չիմանամ զկատարածէ, և թողում յաջողելոյ Տեառն։

«Ի Պարոն Յարութիւն Յորդանանէ և ոչ սակաւ զոհ եմ, վասն ստէպ այցելու ինձ լինելոյն. սա ևս ինձ խորհրդատրէ խաղալ գնալ կողմամբ Պարսից. տեսցուք զո՞ր յաջողեսցէ ինձ Տէր, գրելոց եմ քեզ վերատին ի պատեհի։

«Ի դիմաց լմոց տուր Համբարձ Յարդելի եղբօրդ աջոյն, ներիցէ ինձ սակս ծուլանալոյ իմ յինքն յատուկ գրելոյ։

Հաստատեա մնամ քոյր շնորհապարտ
Մեսրովբ Ի. Թաղիադեան։

Ի Բուռմբայի 25 Նոյեմ. 1856.

Մեսրովպ երեք ամիս մնալով ի Բուռմբայի, առողջութիւնը կը նորոգի, բայց Բուշեռ գնալու ժամանակ՝ ըստ գրութեան ոմանց, դարձեալ ինքզինքն արբեցութեան կը մատնէ Արմաւի կիզոզական օդիով, և վերստին կ'ընկնի ի մահիճ ցաւոց, և բացի ջերմախտէն կ'ստանայ և լերդացաւ. և այսպէս Զիրազ հասնելով՝ կը կնքէ անդ իւր մահկանացուն ի 10 Ջուն (Յունիս) 1858, ի հասակի 56 ամաց։ Մարմինը կը թաղուի Բաբաքօհ [1]) անուանեալ հասարակաց գերեզմանատան մէջ, ձեռամբ Տէր-Կարապետ Յորդանանի, և գոյքերը հրամանաւ Թաղէոս Եպիսկոպոսի կը տարուի Ջուղայու վանքը։

Մեսրովպ Բուռմբայի ելնելու օրերի մօտ, կտակ

---

[1]) Բաբաքօհ կը նշանակէ Լեառն Հօր, որոյ ստորոտէն կը բղխի ջրոյ աղբիւր և մի քանի Ղիւղ բաժանուելով քաղաքի ծարաւը կը յագեցուցէ։ «Բաբաքօհ»-ի համար կ'ասեն թէ՝ օթարան եղած է Պարսից երևելի բանաստեղծներուն, Շէյխ Սաղիի և Հաֆըզի, սոցա մատեաններն երբեմն սրբազան գիրք կը յարգուին նոցա մէջ, և մինչև իսկ նոցանով հմայութիւններ կ'ասեն և բաղդ կը գուշակեն։ Կեղծիք։

կը գրէ ի Կալկաթա, և կտակակատար կը կարգէ զՊարոն Թադէոս Խ. Աւետում, մին յանդամոց Արարատեան ընկերութեան, և կ՝ յանձնէ նմա մի քանի հազար ռուփի. որ յետ մահուան Մեսրովպայ ըստ զօրութեան կտակագրին կ՝ուղարկէ Երևան, առ ժառանգորդս Մեսրովպայ, այն է Սոփիայ դստեր Յովհաննէս եղբօրն որ միակ ժառանգ մնացած էր, որովհետև Աննա քոյրն և Ասլան դուստրն եղբօրն՝ արդէն մեռած էին:

Պարոն Թ. Խ. Աւետում շինել կը տայ ի Կալկաթա մարմարեայ քարէ Արձանագիր, առ յիշատակի Մեսրովբայ, և կ՝ուղարկէ ի Ջիրազ, որ զետեղուած է եկեղեցւոյ արևմտեան դրան որմին, և որ ունի զայս օրինակ.

Մեսրովպ Դաւթեան Թադիադեան
Պերճ վարժապետ մեծ Գիտնական
Վսեմ քերթող մատենագիր
Հանգիստ առնու յայս թուխ դամբան:

Զքեզ Հայոց գիտնոց կաճառ
Պատուասիրէ միշտ սիրավառ
Եւ նոր Ջուղա և Կալկաթա
Ոչ մոռացին զՔեզ իսպառ:

11) ի 18 Մայիսի 1858.

Ահաւասիկ այս է համառօտ կենսագրութիւն Մեսրովպայ Դ. Թադիադեանց. որ նորա բնաւորութեան և կեանքին անծանօթներու համար արդարև դժուարահաւատալի է: Նորա գրականութեան համբաւը հեռաւոր տեղեր իբրև գերագոյն ոմն պանծացուցած են, այլ զինքը տեսնողների և անոր վարուց հանգամանքը հետազօտողների համար, ուրիշ բան չէ՝ եթէ ոչ մի հրէշ, կամ ըստ Թեսաւրոսի՝ գրաստ գրաբարձ:

Մեսրովպ հասակաւ կարճ էր, տեսքով ճառադէմ և յոյժ տգեղ. աչքերը մանր և խորունկ. քիթն կարճ, թիկունքը ծռած իբրև սապատող, ոտքերի քայլն նոյնպէս ծռուկոխ. բնաւորութիւնն անհաստատ, միտքը փոփոխական. մի ժամու մէջ գետնառիւծի նման փոփոխ դիրք կ՝ստանար, բարեկամութիւնն իբրև առ ոչինչ կը համարէր, և ամեն բանի մէջ շահախնդիր կը լինէր. լաւ կերուխում կը սիրէր. բայց պճնազարդութիւն չ՝ունէր. հագուստը պարզ և մաքուր կը պահէր. նախանձութիւն չունէր, խօսակցութիւնն ընդհանրապէս անպարկեշտ էր և կծոտական, խրախճանների մէջ մտնելու հաճոյք չունէր, և սիրողներն կը հեգնէր:

Եկեղեցականների հետ հաղորդակցիլ չէր սիրեր, մանաւանդ կուսակրօնների հետ սակաւ բացառութեամբ.... սոքա երբ Առաջնորդ կարդուին, կ՝ասէր, հետերնին ուրիշ բան չեն տանիր, բայց եթէ ապականեալ բարք, դատարկ քսակ, անճառնի խիզախանք, անկուշտ որովայն, և լոգ՝ գանձ գիղելու որով և լցէ եղանակաւ. վայ որոց հանդիպին... ինչի՞

համար ես աշխարհական դարձայ, կը կրկնէր,—հոգիս և մարմինս փրկելու համար։

Երբ կը հարցուէր Իւրեան՝ թէ ինչի գիտնականների դասը շատ անգամ մոլի կը լինին, կը պատասխանէր. վասն զի նոցա ուղեղը խառն ի խուռն նիւթերով խճողուած է բազմաշփոթ ընթերցանութիւնով. որ հիւանդ կարող է առողջանալ անխիղճ կերակուրներով. ահա այսպէս է գիտունների ախտակրութիւնն էս։

Երբ լրագրական խմբագրութեանց համար կը հարցուէր թէ ընդէ՞ր շատ անգամ կը կեղծաւորի, այսպէս կը պատասխանէր. «Եթէ Եւրոպական լրագիրները որ այնքան յաջող են և կշտանում, և դարձեալ կը սիրեն կաշառք առնուլ, դու ինչ կը հարցանես քո ոսված, քաղցած, մերկ և կարօտաւոր լրագրի համար. ընաւ մի հաւատար լրագիրներուն թէ՛ այստեղ և թէ՛ այնտեղ, թէ նոցա մէջ ճշմարտութիւն կը գտնուի, և կամ ըստ Աստուծոյ կը վարուին. ով որ արծաթ կը շռայլէ նոցա, կը փչէ զուռնա, և ով ոչ, թող քաջ շան պէս ոռնայ, ահա այս է լրագիրների հանդէսը, եթէ կամիս որ և է ատենի առջև արդարանալ, նախ լրագրաց մորուսին և պեխին իւղ քսէ, և ապա փաստաբաններին. ապա թէ ոչ՝ սպասիր վերջին դատաստանին»....

Ասացին ոմանք և իրաւամբ, թէ նորա իմաստութեան մտաւոր տաղանդը՝ կը նմանէր խողի քիթը ոսկի օղ դրուածին, մանաւանդ երբ կը մտնէր Բաքոսի տաճարը և իւր ախորժակի անյագ ծարաւը կը զովացուներ։

Թէպէտ զարմանալի միտք ունէր և մի անգամ կարդալով գիրք մի, ամբողջապէս նորա իմաստը կ՚ըմբռնէր, սակայն ներքին գիտութեամբ իմաստնացած չէր, ուստի և կատարեալ հեղինակութիւն չունէր, բացի մի քանի թարգմանութեամբ ունեցած թեթև գործերէն։

Մեծ եռանդ ունէր ընթերցասիրութեան, և սրարշաւ մտաց լիշողութիւն, այնպէս որ հաղուագիւտ ձիրք մի էր Իւրեան համար՝ որ շատ հեղինակներ արժանի եղած չեն այդ շնորհին. բանաստեղծական և չափաբանական ոճով իւր գրական ամեն յատկութիւններէն աւելի գերազանցած էր. բայց աւա՜ղ, որ չ՚կրցաւ արդիւնաւորել։ Քանզի եթէ ինքզինքը արբշռութեան գերի չ՚անէր, այս ազատ քաղաքի մէջ, և մեր ձեռնհաս հասարակութեան մէջ, կարող էր թէ հասարակութեան և թէ իւր անձին օգտակար լինել, և մեծամեծ արդիւնք ընծայել. բայց իւր ձախող բնաւորութեամբ կորսնցուց ամեն բան, և իւր կեանքը ջլատեց. և եթէ արբեցութեան ախտէն ազատ մնայը՝ թերևս իւր կանխահաս մահը չէր վութացուներ. վասն զի այդ ախտը ինչպէս յայտնի է, մարդոց չորսէն մին տարաժամ կ՚սպանանէ։

Յիշատակութեան արժանի է նաև Մեսրովպայ մանուկներ դաստիարակելու ձիրքը, ոչ միայն դիւրալուր և ընտանի ոճովը, այլ նաև զուարճալի խօսքերով՝ համբակ տղայոց սիրելի անելով ուսումը. թէ որ ուսանողաց շարադրութեան մէջ մեծ թերութիւն իսկ տեսնէր, չէր սպառնայը, այլ համոզելով ուղիղը

կը սորվեցուներ, և այսպէս աշակերտաց յառաջադիմութիւնը կ'աճեցուներ։

Սորա ներհակն էր Յովհ. Աւդալեան վարժապետի ընթացքը, թող զայրացկոտ դէմքը՝ որ սարսափ կը բերէր տեսնողին, եթէ աշակերտին մի չընչին սխալը նշմարէր՝ անհնարին կերպով կը սրտմրտէր և կը բարկանար, որով ուսանողը գիտցածն էլ կը մոռանար և յետադաս կը լինէր։ Սա կ'ուզէր խաւարի մէջ պահել իւր աշակերտները, ինչպէս որ իրմէ յետոյ մի արժանաւոր յաջորդ չ'կրցաւ թողուլ։

Մեսրովպայ ծայրագոյն մի ձիրքն ու շնորհքն էր նաև այն, որ թէպէտ ինքը կրօնականի մասին անտարբեր էր, և ներքին մտօք և ոչ մի կրօնի հաւատարիմ, սակայն թէ ի տան, թէ աշակերտաց մէջ և թէ հասարակութեան հրապարակի մէջ, ինքզինքը ջերմեռանդ Քրիստոնեայ կը ցուցնէր, և հաւատարիմ Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ և սարկաւագ Էջմիածնի։

Վերջապէս, թէ Յովհ. Աւդալ՝ (որ կեղծաւոր և շողոքորթ բնութեամբ ամենուն յարգելի էր) և Մ. Թաղիադեան (որ ընդհակառակն կծու լեզուաւ ամենեցուն ատելի,) պաշտելի էին քաղաքիս մէջ իբրև կարծեալ սիւնք յասպարիզի գրականութեան Ազգիս. երանի թէ նոցա նմանողներ գտնուէին այժմ. քանզի նոցա անցնելէն զկնի՝ կարծես թէ բոլորովին բարձաւ շուք և պատիւ Հայ գրասիրութեան, և յաջորդեց Անգղական ուսումը, մինչև շատերը մոռացած են իւրեանց մայրենի լեզուն, և Անգղիականով կը վարուին, բնաւին չիմանալով զմերն։

Վերոյգրեալ վարժապետաց ժամանակն էս՝ յատուկ մի ատեն էր, տակաւին Ջուղայեցի հինաւուրց մարդկան նշխարներն կային, որք պատիւ կ'ընծայէին սոցա և եկեղեցւոյ, բայց նոցա պակասելէն զկնի, ողբալի է տեսնել նորերուն վիճակը, որք ոչ Հայ են, ոչ Վրացի, տարակուսեալ կան ի բացի. ըստ նախնեաց առաձին։ Կրօնապահութեան և եկեղեցւոյ մասին ինչպէս իրաւամբ ասաց ոմն, Եբրայեցւոց սինագոգայի մէջ եթէ Աստուած և Մովսէս կան, և Մահմեդականաց մզկիթի մէջ՝ Աստուած, Մահամմատ և Ալի, մեր այս տեղի եկեղեցւոյ մէջ ոչ Քրիստոս կայ, և ոչ Առաքեալք, ուստի թող հանճարեղք իմաստասիրեն թէ ինչ ցաւալի վիճակի մէջ է Հնդկաստանի Հայոց ազգայնութիւնը։

Եւ այս ամենայն յառաջ եկած են ի շնորհս պորտաբոյծ և պիտակ Առաջնորդաց Ջուղայու, և մարդապաշտ, աներկիւղած և սոսկ քահանայից, որք կը կառավարեն (իբր թէ) զկրօն և զեկեղեցի Հայոց Հնդկաստանի. որովք կարելի է դուշակել թէ կէս դար յետոյ, թերևս գերեզմաններէն ննջեցեալք և եթ արձագանք պիտի տան, երբեմնական եղերութեանց Հայ գաղթականաց ի Հնդիկս։

Եւ դու, ուշիմ ընթերցող, մի խստանար յիմ վերայ, այս ցաւալի բայց ստուգապատում համարմանս աղաղաւ, այլ միտդ բեր իմաստուն Սողոնի խրատն առ Կրեսոս սնապանծ արքայն,

Հայեաց ի վերջն։

ԱՅԼ ԻՄՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ի ՎԵՐԱՑ

Մ. Դ. ԹԱՂԻԱԴԵԱՆԻ

Ի Հայազգի բնակչաց Կալկաթու մտերիմ՝ բարեկամն Հանգուցեալ Մեսրովպ Դ. Թաղիադեանի, Պարոն Թադէոս Խ. Ամետում, որև կտակակատար նորին, որպէս տեսանի յերես 25, կենսագրութեանս, կը գրէր յայնժամ յոյժ ցաւած սրտիւ առ Արշալոյս Արարատեան լրագիր Զմիւռնոյ զհետագայ նամակդ՝ որ հրատարակեալ է ի 583 թիւն, այսու օրինակաւ.

(Ծանօթութիւն է Յ. Ք. Մկրտչեանէն.)

«Առ յարգոյ հրատարակիչ Արշալուսոյ Արարատեան.
Յարգոյ պարոն.

«Տխրութեամբ ծանուցանեմ որ Մեսրովբ Դաւիթ Թաղիադեան վաղաժանօթն յարգութեանդ, զրաւեալ է ի թանգագին կենաց իւրոց ի 10 Յունիսի այսր ամի ի Ձիրաղ քաղաքի. յորոյ վերայ ի ներքոյ գրեալս

սակաւատող բանսն խնդրեմ շնորհ արարեալ հաճեսջիք հրատարակել միջոցաւ պատուական օրագրի ձերում, որով և շնորհապարտ կացուցանել զձեր

Խ. Ծ. Թադէոս Խ. Ամէրտամեան.

Կալկաթա 21 օգոստոսի 1858.

«Զի մեր նպատակ գրել զվարս ազգասէր հեղինակիս, մանաւանդ զի չունիմք զրաւական նիւթս առ նոյն ձեռնարկ, այլ սակաւուք միայն յայտնել կամիմք զմասն գործոց նորա որք եղեն մեզ ծանօթ:

Մեսրովբ Դաւիթ Թաղիադեան ծնեալ էր ի Կարբի որ յԵրևան և սնեալ ի սուրբ Աթոռն Էջմիածնի՝ առ ժամանակաւ սրբազնասուրբ Կաթուղիկոսին Եփրեմայ, ուր և ձեռնադրեցաւ սարկաւագ: Իբրև յամին 1823 եկն ի Հնդիկս յերիտասարդութեան հասակի, և միջնորդութեամբ Տեառն Աբրահամու Ծ. վարդապետի նուիրակին Երուսաղէմի, եմուտ ի համալսարանն եպիսկոպոսական՝ ուսանիլ զԱնգղիերէն, ուր թարգմանեաց ի մեր լեզու զՀոգւոյ Գրոմտիոսի Ճշմարտութիւն Քրիստոսական Հաւատոյ՝ զգործն ընտիր: Յետ սակաւուց ելեալ անտի եկաց երրորդ վարժապետ ի Մարդասիրական Ճեմարանի մերում: Ապա գնացեալ ի Ջուղայ կարգեցաւ գլխաւոր վարժապետ դպրոցի որ անդ՝ զամս յոլովս: Անտի չոքաւ ի կողմունս Տաճկաստանի, և կացեալ առ ժամանակ մի ի Կոստանդնուպօլիս, շրջի վտարանդի ընդ Հայս և Պարս և վերադառնայ միւսանգամ ի Հնդիկս:

Յամին 1845, յամսեանն Օգոստոսի, օժանդակութեամբ Արարատեան ընկերութեան սկսաւ հրատարակել զԱզգասէր լրագիր. սակայն զրաւումն ի կենաց մլոյ և ձախորդութիւնք միւսոց ընկերացն քակտեցին զընկերութիւնն վաղվաղակի: Բայց եռանդ հանդուցելոյս ոչ շիջաւ, այլ շարունակեաց զտպագրութիւն լրագրին մինչ ցմէջ 1852 ամի. Թէ որքան վառ էր եռանդ նորա յայսպիսի գործս և որքան ժիր յաշխատութեան՝ գործք իւր ինքնին յայտնեսցեն քաջ: Զի ի միջոցի եօթն ամաց սակաւուց բացի տպագրութենէ Ազգասէր լրագրին և ի կառավարութենէ առանձին դպրոցի իւրոյ, ի լոյս ընծայեաց և յետագայ գրեանսն յօրինեալս յիւրմէ:

Այբբենարան. — Պաստիարակութիւն օրիորդաց՝ ճառ. — Ճանապարհորդութիւն ի Հայս.— Պատմութիւն Պարսից. — Սօս և Սօնդիպի՝ բանաստեղծութիւն չափեալ.—Վարսենիկ՝ ստեղծաբանութիւն արձակ.—Քերականութիւն՝ համառօտ: Եւ թարգմանեալս. Առակք Պարսից.—Առաջնորդ մանկանց, և Վարդգէս: Թողեալ զտպագրութիւն այլոց վեշտասան մատենից՝ որք ընդ վերակացութեամբ իւրով տպագրեցան, ունի և զայլ գործս թարգմանեալս և ի լոյս ընծայեալս աստ՝ նախ քան զկազմիլ ընկերութեան Արարատեան, որք են, վերոյիշեալ Գրովտիսն, Դիւցաբանութիւն,—Պաղեստին Ա. Հիբերայ՝ չափեալ, և Պատմութիւն Հինդկաստանի: Ունէր և զայլ գործս բանաստեղծականս և զօրագիր մնացեալ ճանապարհորդութեան իւրոյ, զորս ոչ ժամանեալ ի լոյս ընծայել՝ տարաւ ընդ իւր. և որք հասցեն արդեօք ի Ջուղայ ընդ այլոց մատենից՝ թէ ի Ղիրազ անդ անհետ եղիցին, չկարեմք ամենևին գուշակել:

Մերձ ի վախճան 1857 ամի, հիւանդագին և տկար ել աստի վերադառնալ ի Ջուղայ և զմնացեալ աւուրս իւր նուիրել դաստիարակութեան մանկանց Ազգիս, և հասեալ ի Ղիրազ՝ զրաւի անդ յազգօգուտ կենաց իւրոց ի 10 Յունիսի այսր ամի ի հասակի իբրև 56 ամաց. կտակելով զհազարաւոր մատեանս պատկանեալս թէ ինքեան և թէ Արարատեան ընկերութեան՝ սրբազան առաջնորդին սրբոյ Ամենափրկչեան վանաց որ ի Ջուղայ՝ ուր և հասեալ իսկ են. և զայլ ստացուածս իւր՝ ընտանեաց իւրոց որք բնակին Երևան քաղաքի:

Եթէ յարգի լինէր գրագիտութիւն ի միջի մերում հարիւր մասամբ չափ Եւրոպացւոց, աշխատութիւնք սորա յոյժ աւելի լինէին քան որք եղենն, զի վկայեալ եմք բազմիցս բնական աշխոյժ եռանդեան նորա, որ նստեալ լնոյր զէջս բազումս խիստ դիւրութեամբ և ընտիր հայկաբանութեամբ ի միջոցի սակաւ ժամուց առանց ջնջելոյ զոգցես և զբառ մի:

Չարժեալ ի տխրութենէ սրտիս, զյետագայ Ողբերգն նուիրեմ վսեմ հոգւոյն այնմիկ՝ որ յուսամ երկնային պսակին արժանի եղեալ, սակս յարգելոյն զտաղանդն աւանդեալ ինքեան՝ յօգուտ և ի փառս եղբարց իւրոց:

1. Եւ դու Մեսրովբ, անգին Մեսրովբ,
Եւ դու այսպէս վաղ հանդեար,
Ի վշտալից աշխարհէս մեր։
յերանաւէտն ճեպեցար։
2. Վաստակեցաւ այն մարմինդ՝
այլ ոչ հոգիդ, ես դիտեմ.
Անմահ հոգիդ միշտ անենկուն,
միշտ վառվռուն, միշտ վսեմ։
3. Ափսոս Մեսրովբ. — Իմ պէս բազումք
ափսոսացեն այսուհետ,
Որոց հոգի Ազգիս փառաց
նախանձաւոր իցէ եթէ։
4. «Մեռիր յեռոյ սիրեմ զքեզ»
այլք ասասցեն, բայց ոչ ես.
Ես սիրեցի զքեզ կանխաւ՝
Ազգասիրաւդ *) վկայեմ։
5. Ո՛չ ափսոսամ վասն քո ինչ,
զի դու դերծար ի ցաւոց,
Ջարդիւնաշատ աւուրս քո
Ազգին ի սպաս զոհելով։
6. Որքան կացցէ լեզու Հայոց՝
որքան կացցէ և մեր գիր՝
Պայծառ անուն իմ Մեսրովբիդ
անմահացի անիտիր։
7. Այլ ափսոսամ վասն Ազգիս՝
որ քեզ պէս մարդ արդ կորոյս,

*) Ազգասէր լրագիր։

Որոյ նման հազուագիւտ է՝
հայիմ յոր կողմ և ի կոյս։
8. Զի բանաստեղծ ի բնութենէ
կարէ միայն ծնանիլ,
Տաշեալ կոկեալն արհեստիւ
ոչ կարէ յայն ժամանիլ։
9. Դու բանաստեղծ և ճարտասան
միանգամայն յայտնեցար,
Թէ և անձուկ էր ասպարէզդ
սակայն ոչինչ վերջացար։
10. Աշխարհանաղ Սօս Սօնդիպի
և Ազգասէր լրագիր,
Բաւական են ի հաստատել՝
զոր ասացի լիալիր։
11. Ո՛չ է ինձ հարկ թուել զամէն
զգործ մատանցլդ ճարտար,
Ժամանակաւ, զկնի իմ,
վկայեսցէ և աշխարհ.
12. Բայց եկ Մեսրովբ, եկ ասա ինձ
հիմ առ օտարս եառեր վաղ,
Ո՞ւր Հայաստան քո հայրենիք
և ո՞ւր Պարսիցն Ղիրազ։
13. Յ՚ողբաս զքեզ լամ և զիմ Ազգ՝
վտարանդի ցանուցիր.
Ընդ ամենայն ոլորտս երկրի
քան զԽարայէլ տարագիր։
14. Իմ ընտանեացդս պատմութիւն
կարծեմ ուղիղ օրինակ
Է իմ Ազգիս, որք յայսքան դարս

չարչարին տար՝ օրինակ։
15. Վասն որոյ ոչ մնալով
զի այսուհետ զիս լացցեն,
Գուսանականն իմ օրհասի
առեալ ինձէն հարկանեմ։
16. Ճշմարիտ է իմ պատմութիւն՝
որում լերուք ունկնդիր,
Հապա՜ Մուսա զհեռին թող,
և ի մօտոյ ըսկսիր.
Հայր հօր իմոյ անդ ի Զիրազ թաղեալ կայ.
Եւ մայր հօրս ննջի ի հող Բուշեռայ,
Հայր մօր իմոյ եկեալ հանգեաւ ի Ռանգուն,
Եւ մայր մօրս քեզ յանձնեցի Կալկաթա։
Իմ պատուական ծնողք եղբարք և քուրիկ
Ի մեր Բասրա*) հանգիստ առին խաղաղիկ,
Միւս քոյրս չոքաւ մինչև ի Հավա,
Խաւարեցաւ անդ իւր արևն քաղցրիկ։
Ի հօրեղբարցս մին գնաց մինչ 'ի Հէյրաթ,
Զորմէ ոչինչ ունիմք զլուր մինչև ցարդ.
Հիմ զաւակաց թողի զմին ի Ռանգուն
Զոմանքս աստ ի Կալկաթա։ — Ա՜խ իմ բաղդ։
Այլ իմ փթած ոսկերոտիք արդեօք ո՞ւր
Հանգիստ առցեն՝ աստ ի Հնդիկս թէ այլուր.

*) Բասրա է յԱրաբիա, Շիրազ և Բուշեռ ի Պարս, Հէյրաթ՝ յԱղուանս, Կալկաթա ի Հնդիկս, Հավայ և Ռանգուն ի Բարմաստան։

Ի Տաճկաստանն*), ի Լեհս՝ ի Վիրս ի Մոսկովս **)
Բայց ոչ լիմ մայր ի Հայաստան. — բա՜ղդ տխուր։
17. Այս է ահա՜ իմ սիրելի
Ազգի վիճակ տխրական,
Այս է ահա՜ դառըն վիճակ
ազգիս վիճակ Անդրանկանն։
18. Մեղաք այո՛, բայց չարչարանք
եօթնադարեան մեր վշտի՝
Թող Հայր գթած, ի թողութիւն
մեղաց մերոց եղիցի։
19. Եւ արդ՝ Մուսա՛, հաճեաց ընկալ
Հրաժարական զիմ ողջոյն,
Գնա՛ հանգիր ի դալար սիրտ
իմ աղգայնոց սիրասուն։
20. Ես ծերացեալ և վաստակեալ՝
Հանգիստ խնդրեմ առօրեայ,
Մինչև կամք Տեառն՝ օրհնեալն միշտ,
Եղիցի և լիմ վերայ։

---

*) Տաճկաստանաւ նշանակիլ կամիմք զՕսմանեան տէրութիւն և զՊարս, արտաքոյ Հայաստանի։

**) Զանց արարաք զայլովք տեղեաք, ուր սակաւք է մինչ զաղթեցան, այլ ընդ ամենայն կողմանս Ասիոյ՝ Աֆրիկոյ՝ Եւրոպիոյ՝ Ամերիկոյ և և Աւստրալիոյ ցրուեալ կան ոսկերք Հայոց։

Թ. Խ. Ա.

Զայս յօդուած բանից պարոն Թ. Խ. Աւետումեանցի, վերստին տպագրեց բարեյիշատակն Մի.ք. Նալբանդեանց Հիւսիսափայլ Ամսագրի մէջ 1859 ամին, (երես 681 - 688), Հանդերձ համառօտ խորհրդածութեամբ, յորում մեծաւ գովեստիւք կը դրուատէ զվաստակս Մ. Գ. Թաղիադեանի, և աղաչանօք կը խնդրէ ի Ս. Առաջնորդէ Ամենափրկչեան Վանաց Նոր Ջուղայու անկորուստ պահպանել զդրչագիր աշխատութիւնս նորին:

Այս աղերս լսելի եղաւ արդեօք:

Յ. Բ. Մկրեան:

ՏԵՍՈՒԹԻՒՆՔ

Ի ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԵՍՐՈՎԲԱՅ Դ. ԹԱՂԻԱԴԵԱՆ

Ա բ ա ր ե ա լ

Ի ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅԷ ՄԿՐԵԱՆ

Ի Կ. ՊՈԼԻՍ. 1884.

Ա Զ Դ

Ինչպէս Յառաջաբանիս մէջ յիշուած է, ահաւասիկ կ'սկսեմ իմ տեսութիւնքս կամ դիտողութիւնքս շարադասել կարգաւ, լուսաբանելու համար այն մասեր՝ որ Կալկաթացի կենսագրութեան հեղինակը մոռացած, կամ զանց արած, և կամ սխալ ըմբռնած էր:

Բարեմիտ ընթերցողին հարկ է՝ Կենսագրութեան մէջ գրուած մեծ թուանշանները տեսած ատեն, սոյն տեսութեան մէջ գտնել նոյն թուանշանը, և այնպէս ընթեռնուլ, որպէս զի կարենայ լիուլի տեղեկութիւն ստանալ:

1) Մեսրովբ Դ. Թաղիադեանց՝ ծնեալ է, ոչ թէ Աշտարակ գիւղի մէջ, այլ Երևան քաղաքի. ինչպէս որ ինքն իւր ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ի Հայս գրքի մէջ՝ Հատոր Ա. Հատուած Ա. յայտնի կը գրէ, և ինչպէս մինչև ցարդ կը վկայեն Երևանեցիք։

Պատշաճ է ընդօրինակել աստ այդ Հատուածը՝ որ Մեսրովբայ ծննդեան և մանկական կենաց վերայ զուարճալի տեղեկութիւնք կը պարունակէ։

« Հանի իմ Աննա՝ յետ թաղելոյ զայր իւր զՄես-
« րովբ, թողեալ զորդիս իւր յերևան քաղաքի, ի թաղն
« անուանեալ Կաբբոյ ի Զորագիւղ, որ ի հիւսիսոյ Հրաս-
« տան գետոյ՝ առնու զամենայն հարստութիւն զուգ
« դրամոց և զարդուց տանն, և չուէ գնայ բնակի ի
« Վաղարշապատ աւանի, փոքու իմն յառաջ քան զծը-
« նունդ իմ, յամի Տեառն 1803։ Վաղվաղակի յետ ծնա-
« նելոյ իմոյ անդրանիկ իմոց ծնողաց, այլ կոյր աչօք՝
« և հաշմանդամօք՝ որպէս պատմէր մայր իմ, յաւան-
« դի եդեալ նորա զոր ինչ և ունէր առ Սահակայ Վար-
« դապետի ուրումն Զօռ կամ հզօր անուանելոյ ի սակս
« հսկայազիտակն ահագնութեան, վերադառնայ յերևան.
« և զիս ինքն առնու տանի (յերևան) ի Սուրբ Սարգիս
« յեկեղեցի մեր. իսկոյն մկրտել տայ յաւուր ծննդեան
« Տեառն մերոյ՝ ուստի անուն և կոչեն ինձ Աւետիք։
« Ընդ որ զչարեալ հանուոյս՝ փոխէ զայն ի Մեսրովբ,
« յանուն հաւուն իմոյ. և յետոյ ի Պապիկ։ Ապա ուխտէ
« զիս՝ որպէս ասի ի ծառայութիւն Սրբոյ Էջմիածնի. և
« ընդ օձիս շապկին ի վայր հանեալ՝ որպէս թէ վերս-
« տին ծնաւ, և տաշտաքերանք իւր անուանեալ՝ հա-
« տանէ զիս յստեանց մօր իմոյ, և տարեալ ընդ իւր ի
« Վաղարշապատ՝ սնուցանէ թառամ և ցամաքեալ
« ստեամբք իւրովք՝ ընդ հարուստ ամանակս։ Որով մըշ-
« տենջենաւոր նուազութիւն կաթին տուեալ մաքուր
« ստեանց մօր իմոյ, զոգի և մշտենջենաւոր անհոգու-
« թիւն գկենացն հանդերձելոց դիեցոյց։ Բայց դու էկ

« ազէ և ընդ գուլթ խնամոց բարերարին զարմացիր, որ
« զհենաւուրց պառաւու զտիկնս յոգորեաց կաթամբ՝ ի
« սնունդ ապիկար որդանս ինքեան։ Որ այն ինչ դեռ
« տղայ ի խանձարուրս պատեալ, երբեմն ի Վաղարշա-
« պատայ յերևան, և երբեմն յերևանայ ի Վաղարշա-
« պատ բարձեալ բերելով, յայն ընաւորեցայ ի շրջմոլիկ
« սովորոյթ, որ յապայս ժամանակաց ի հեռաւոր ծագս
« աշխարհաց վտարանդի թափառեցոյց զբովանդակ
« կեանս իմ։

« Իբրև մեռաւ հանիս կրօստեամբ ամենայն գոյից
« իւրոց՝ և զհետ չոգան նմա որդիք նորա ի գերեզման
« մահու իւրեանց, յաւերժայիշատակ Մայր իմ Զարդար
« Թաղիադեանց, որ երկրորդ պսակաւ ամուսնացեալ ընդ
« Պետրոսի Ղօնջակիւլեանց, ոչ ախորժէր ծանրանալ
« նմա որբովք օտար հօր որդւոյ՝ կոչեաց առինքն զԲա-
« բէլ Կաբբեցի զարեան մերոյ ընտանի, և յանձն արար
« նմա զիս տանել յէջմիածին և խնամս
« պարոն Յովհաննիսի Ասկարեան հօրաքեռուն իմոյ, որ
« զայնու ժամանակաւ վարէր զտակառապետութիւն
« Ներսին, կամ Վեհարանին։

« Սոյն այս այր Աստուածասէր, որ թէպէտ և յետ
« մահու հօրաքեռ իմոյ՝ ածեալ էր իւր կին զայլ, սա-
« կայն դեռ ես արձարծուն պահէր ի սրտին զխնամոցն
« առ ընտանիս՝ հուր սիրոյ. իսկ և իսկ առեալ կացոյց
« զիս առաջի Մեծին Ներսիսի Աշտարակցւոյ, Արքե-
« պիսկոպոսի, որ յետոյ կարգեցաւ Առաջնորդ Հայոց
« Վրաստանեայց, և ասա Կաթողիկոս ամենայն Հայոց.
« զառաջինն բան ի մէջ առեալ ասաց. «Գիտիցի՞ս մա-
« նուկ դու, զընթեռնուլ գրոց»։ Ցանզգնագոյն և հա-
« մարձակապէս պատասխանի արարեալ նմա՝ ասացի.
« «Եթէ գիտէի, էրու

գայի բա»։—«Զինչ գիտես ա-
« սա», կրկնեաց տօնելին յազգի մերում. պատասխանի
« արարի՝ «Զոր ինչ միանգամ ուսուցանէ Երևան անտե-
« ղունջ որբոց՝ ցուցս, առակս, և առասպելս»։ Զծագու

« հարեալ նորա յաներկեւան և ի համարձակախօս բա-
« նից աստի. հրամայեաց ինձ երգել զցուց իմն. այլ
« այն ինչ դեռ բանք ի բերան, սկսայ աւաչել զայն,
« այնքան սաստիկ, ձախ, ծուռ, զիլ և անձոռնի ձայ-
« նիւ, մինչև պարտաւորեցաւ նա խսկոյն յետս կոչել
« զհրաման իւր, և ասել ցիս, թէ «Լուռ լեր, քանզի և
« զվեհապետն ի Վեհարան վրդովեցիր»։—«Դիտէիր թէ
« վրդովէր, ընդէր ապա հրամայեցեր». ասացի ցնա։ Եհարց
« ցիս թէ զինչ անուն ի՞նչ քո։ Պատասխանեցի՝ մկրը-
« տութեամբ Աւետիք, պապենական ժառանգութեամբ
« Մեսրովբ, իսկ հասարակ կոչմամբ՝ Պապիկ։ Ուրեմն
« կա՛ ասէ, զոր ժառանգութեամբ կալար, և արի Մես-
« րովբ աչ ոտ։ Զոքայ համբուրեցի զաչն սուրբ։ Իսկ
« նա հայեցեալ զամենեքումբք՝ որք շուրջն կային,
« ասաց». Ավսոն է զերեխայս ի դպրոցի տրորել, ա-
« ռեալ ածչիք զգա առ Գրագիր Յովհաննէս վարդա-
« պետ, և պատուէր ցինէն զայս տաջիք նմա, զի բար-
« ւոք հետևեսցի դմա, մինչև տեսցուք»։

« Յովհաննէս վարդապետ ի Բագրևանդայ զոր հա-
« սարակօրէն—Բուրդ - անուանէր ուխտ միաբանից, էր
« այր երկայնահասակ, և բարակ, չեչոտ երեսով, քարց
« մորուօք, և դեղնաբիբ աչօք, ամենևին զուրկ յազա-
« տական արուեստից լեզուի մերոյ։ Վարք նորա հան-
« գունատիպք գիտութեանն և խառնից երկրի իւրում,
« անգութ, խժական, խորամանկ և կասկածուտ միանգա-
« մայն։ Սակայն ունէր և ինչ ինչ յառաքինական ընաւո-
« ւրութեանց և արուեստական հմտութեանց՝ որք երեւե-
« լի իմն առնէին զնա ի մէջ սրբազումար միաբանից
« Աթոռոյն մերոյ. զոր օրինակ. անվեհեր արութիւն սրբ-
« տի, խորին հնարագիտութիւն առ ամենայն դէպս,
« նախանձ երևելոյ որպէս ինչ ոչ էր, որպէս և Ճարտար
« գրչութիւն և երաժշտութիւն, որք ի մեծի համար-
« ման էին յայնժամ յընդհանուր Ազգի մերում։

« Առակ հանապազորդեան էր ի բերան նորա՝ թէ

« «շուն զերանոցս Ճանաչէ». և ըստ վարդապետու-
« թեան այսորիկ՝ վարէր ոչ միայն ընդ հաւասարա-
« կիցս կարգի և հասակի իւրոյ, այլ նաև ընդ երիցա-
« գոյնս և ընդ բարեբարս իւր անգամ. որպէս յայտնի
« երևեցաւ ի մերժելոյ նորա զտէր Եփրեմ Կաթուղի-
« կոս զևւր հոգևոր ծնող, և ի կոչմն մատչելոյ Տեառն
« Յովհաննու Կարբեցւոյ Աւագ Լուսարարի սրբոյ Աթո-
« ռոյն՝ և ինքնին պատգամաւորելոյ ի Պոլիս վասն ընտ-
« րութեան նորա՝ ի կաթուղիկոսութիւն ամենայն
« Հայոց՝ առ կենդանութեամբ նախորդին։

« ՎնՃակ երջանիկ. ի գրկաց անտի խանդաղատ
« մօր պատուցեալ՝ տես ո՞ւմ մատուցայ, որ այն զի ունէր
« աշակերտս բազումս գրչութեան և Ճայնաւորաց՝ յան-
« ձն արար զիս մինում ի նոցանէ, որոյ անուն էր Աւագ
« Տէր Մատթէոսեան Երևանցի։ Որոյ գթալով ի հոգս իւր,
« ծանոյց ինձ զաթութայս լեզուի մերում, և ի միջոցս
« աւուրց ինչ՝ յաւել տալ ի ձեռս իմ և զգրիչ, որոց
« միահաղոյն ընդ ուսանել անուանցն, ուսայ և զձև ու-
« բոյն ի նոցանէ գրել ի թղթի»։—

Այլ «զամս երկուս առայատեցայ, ասէ, ի բերան
« առնուլ ինձ զփամագիրք և զՍազմոս և զամս երկու
« և՛ ուսանել զՆարեկան, որ առ անյարմար լինելոյ
« Ճայնիս՝ եղև առ յապայս կորուստ մեծ ժամանակիս,
« և զրկումն ի պիտանի գիտութեանց»։

Յամին 1816, կը դայ էջմիածին մեծանուն վար-
դապետն առաքինութեանց Պօղոս Ղարադաղցի, որոյ
անմահ և հոգեբուղխ դասախարակութեան կը յանձնուի
և Մեսրովպ ընդ բազմաց դպրաց և սարկաւագաց. առ
որ կ՚ուսանի զարուեստ քերականութեան Հայկականս
բարբառոյ, և նորա հետ կ՚ընկերանայ գնալ յԱրկուռի
Ս. Յակոբայ վանքը՝ որ առ սարոտով Մասիս լերան։

Վեց ամսից յետոյ՝ Պօղոս վարդապետ կրկին կ՚եր-
թայ իւր հայրենիքն ի Ղարադաղ, և Մեսրովպ կը
դառնայ ս. էջմիածնի վանքը՝ և կը մտնէ Աթոռին

գրագրարանն, և Բագրևանդացի Յովհաննէս վարդապետի հսկողութեամբ կ'օրինակէ Հայրապետական կոնդակներ, և Բերթումեանց Պետրոս Եպիսկոպոսի քարոզագրքերն, և նախնեաց մատենագրութիւններն։

Կը Ճանապարհորդէ Արագածունեաց ոտքը գրանուած վանքերն ու գիւղերը՝ Կեսարացի Բարսեղ Արքեպիսկոպոսի հետ, և ապա դառնալով յԷջմիածին, հրամանաւ Հայրապետին Եփրեմայ աշակերտութեան կը մնէ Տփղիսեցի Գիւլասպեանց Զաքարիա Եպիսկոպոսի մօտ՝ հինգ ամիս, և կ'ուսանի ճարտասանութիւն։

Յամին 1819 կը Ճանապարհորդէ Սիւնեաց գաւառը Լուսարար Դանիէլ Եպիսկոպոսի հետ՝ որ «համբաւեալն էր ի յոյժ բազմաց՝ որք և զանուն իւր գրել խնայէին». (այսինքն գրել չէր գիտէր), և ամբողջ քսան ամիս շրջելով այն կողմերը մինչև ի Շուշի և Տաթևու վանքը, 1821 օգոստոս ամսին անցնելով Որոտնէն, Շաղատէն և Բռնակոթէն Սիսիանայ գաւառին, և Երնջակէն, կը գնայ ի Նախչուան ի 25 սեպտեմբերի, ուր կը ժամանէ և Հայրապետան Եփրեմ մեծաւ փառօք ընդ արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, վարդապետաց և սարկաւագաց, և խնդրանօք Դանիէլ Եպիսկոպոսի կը շնորհէ Մեսրովբայ չորս աստիճան գպրութեան և ուրաբ հրամանաւ, և իւր հետ կ'առնու կոնդակներ գրել տալու համար։

Ապա յամին 1822 փետրվարի 13-ին *), երբ Հայրապետն Եփրեմ կը գրէ հրաժարականն ի կաթողիկոսութենէ առ Աղեքսանդր Ա. կայսրն Ռուսաց և Մուղնեցի Անտոն Եպիսկոպոսն ու Գրիմեցի Յովհաննէս վարդապետը կը ղրկէ ի Տփղիս յորդորել զՆերսէս Արքին ի հնազանդութիւն հրաւիրանաց Հայրապետին, Անտոն Եպիսկոպոս իւր հետ կ'առնու զՄեսրովբ՝ որ հասնելով ի Տփղիս, վերստին կը ծանօթանայ Ներսէս արքեպիսկոպոսի, և նորա և հրաւիրակաց հետ կը դառնայ ի Շուշի, ուր էր Հայրապետն։ Մի քանի ամիս մնալով անդ, Եփրեմ և Ներսէս Դանձասար կը գնան և անտի Հաղբատու վանքը, յորմէ երբ Ներսէս կը վերադառնայ ի Տփղիս, կը կամի իւր հետ տանել զՄեսրովբ, բայց նա նոյն միջոցին ձախ ոտքին կոճէն վիրաւորուած լինելով՝ չ'կընայ ելնել մինչև երկու ամիս. և թէպէտ Ներսէս կը պատուիրէ որ առողջացնէն պէս ղրկեն գնա առ ինքն, բայց Մեսրոպ չ'կամիր երթալ, այլ իւր սարկաւագ ընկերաց ոմանց հետ կը փախչի յԵրևան, փոխելով կրօնաւորական զգեստը, ուր կը տեսնէ զիւր մայրն և կը վայելէ նորա գգուանքն ու փայփայանքը, և պարգև կ'ընդունի նորամէ միահատոր Աստուածաշունչ մի Զոհրապեանի. և այս տեսութիւն իւր մօր հետ՝ վերջինը կը լինի։

Հաղբատէն ելնող սարկաւագներէն մինն Մեսրովբ կը վերադառնայ վտարանդի Եփրեմ ս. Հայրապետի մօտ, և կը մնայ անդ. բայց նոր մի գիպուած նորա սիրտը վերստին կը շարժէ աշխարհ շրջագայելու։ Մեծանուն Դաւիթ Խան Մատուրեան՝ որ Պարսից դեսպան էր ի Դաղստան, այն օրերում կը գայ Հայրապետի քով, որոյ հետ կը ծանօթանայ և Մեսրովբ, և կը լսէ նրանից Փարիզ մայրաքաղաքի սքանչելիքներն ուսմանց և արուեստից, և կը սիրահարի երթալ այն տեղ, ամէն վտանգ յանձն առնելով, ուստի աղերսագիր կը մատուցանէ Հայրապետին կրկին և կրկին անգամ, որ զինքն ազատ թողու աշխարհ շրջելու։ Թէպէտ չատ կը խրատուի դուրս չելնել, բայց չանսալով և ոչ ումեք, կը

*) Այս թուականը կը գտնէ Թաղիադեան Եփրեմայ հրաժարականին թէ՛ ճանապարհորդութեան երես. 300, և թէ՛ Ազգասէր լրագրի 1852, երես 670-ի մէջ, բայց Մսեր Մաղիս որոնի պատմ. կաթող. երես 188-ի մէջ, ուր հրաժարականի պատճէնի ներքև նշանակուած է 30 յուլիսի 1822 թուականը։

համբուրէ Ս. Հայրապետին աջը, և կելնէ Հաղբատէն «սարկաւագ՝ սարօք սրբութեան, բայց իբրև յուսահատ մարդ»։

Նախչուան հասնելով՝ այնտեղ իւր մեքենքը կ'փոխէ Կ. Պոլիս երթալու. վասն զի Պարսից պատերազմին պատճառաւ կարաւանները երթևեկը դադրած էր. ուստի կ'որոշէ Պարսկաստան երթալ, և անտի ի Հընդկաստան. կը փոխէ վանականութեան կերպարանքը, և կը հագուի աշխարհական վրացի կոչուած ձևով, և յամին 1823 մայիսի 9, Երասխ գետէն անցնելով կը հասնի ի Դավրէժ. յորմէ զկնի թէ Ինչպէս Հնդկաստան կ'անցնի, մեզ յայտնի չէ, որովհետև ճանապարհորդութեան առաջին հատորն մինչև այս տեղ կը լրանայ և երկրորդ հատորն լոյս չ'տեսաւ։

---

2) Ինչպէս ի վերև տեսնուեցաւ, Մեսրովբ չ'կրնար իւր պատմութեան մէջ, թէ Ս. Հայրապետն Եփրեմ յանձնարարական նամակ տուած լինի իւրեան յանուն Պօղոս եպիսկոպոսի. թերևս կենսագրողն ինքն մի այսպիսի բան լսած է Թաղիադեանէ, կամ սխալ ըմբռնած։ Բայց՝

3) թէ ո՞վ ոք էր այս Պօղոս եպիսկոպոս, և ինչ բանի համար Հնդկաստան գնացած. այսպէս կը պատմէ Մեսրովբ ի ճանապարհ. երես 354—355.

«Եկն անդ (ի Հաղբատ) Թովմաս վարդապետ՝ ա-
«բեղայ Վրթանիսի Աբհէոյ նուիրակին Հնդկաց, և մա-
«տոյց Հայրապետին զդուշնաքեայ խեշերանս մեծա-
«գանձ հարստութեան այնորիկ՝ զոր մեծաւ առատա-
«բաշխութեամբ նուիրեալ էր ժողովուրդ մերազանց
«կողմանցն այնոցիկ, և զորս յեսին անյաջողութեամբ
«վասն Պօղոսի եպիսկոպոսի Նախչուանցւոյ՝ ի կորուստ
«յաւիտենից մատնեալ՝ եղեալ էր սկզբնապատճառ
«այնքան պարտուց Էջմիածնի։

«Այս Պօղոս եպիսկոպոս արեղայ էր մեծին Փիլիպոսի
«արքեպիսկոպոսի, որ յետ վախճանի նորա ի Հնդիկս,
«և յաջորդելոյ նմա Վրթանիսի արքեպիսկոպոսի, վե-
«րադարձաւ յԷջմիածին, և ձեռնադրեալ եպիսկոպոս՝
«ընկալաւ ի Պարսիկ պարտատերանց անտի Ախթուոյն՝
«և գնաց ի Հնդիկս, ուր զայնու ժամանակաւ մեռեալ
«գտանելով զպարոն Յովսէփ Յարութիւնեան, զպարոն
«Մարտիրոս Տէր Ստեփանոսեան անանկացեալ մինչ ի
«սպառ, և զնոցա ոմն Պարսիկ զմնացորդս գոլից
«հանգուցելոյն գրաւեալ սուտ յօդածոյ մուրհակօք,
«զարձոյց զնոսա դատարկաձեռն ի սուրբ Էջմիածին։
«Որոց եկեալ հրամանաւ բդեշխին յաւելին վաշխս սաս-
«տիկս ի վերայ մայր գրամոց, զամենայն ծախս ան-
«հուն Խանապարհորդութեան իւրեանց թէ ի գնալ, և
«թէ ի գալն և զմատացածին շահ վաճառացն՝ զորս
«յուսալինն գտանել՝ եթէ ընկալեալ էին գրամս իւրեանց
«ի Հնդկաստան, վնաս և ոչ մի կարծելով թէ հանդի-
«պէր ամենևին, բարդեցին ի վերայ՝ և ահա 5000 թու-
«մանն վեցպատկեալ աճեցուցին ց'30,000 թուման»։...

---

4) Այս Պաղեստին անուն գրքի յառաջաբանն՝ շատ նշանաւոր է պարունակած տեղեկութիւններովն, թէ Անգղիացի Հիրը կամ Երը եպիսկոպոսի վարուց, և թէ Էջմիածնի և Երուսաղէմայ մեր նուիրակներու գործոց վերայ. ուր և Մեսրովբայ եպիսկոպոսական ձեռնադրան մտնելուն պատմութիւնը կայ։ Ինձ կարի հաճոյական թուեցաւ այս յառաջաբանի գոնէ Ազգային մասը դնել այս տեղ, քանզի Պաղեստին գրքոյկն արդէն հազուագիւտ է. և թէ Թաղիադեան հրաշալի կերպով կը հայկարանէ ի շարագրութեան։

«1824. Զայսու ժամանակաւ փայլէին ի Դաքա
«առաքելաշնորհ քարոզութեամբ երկոքին հարք եկե-
«ղեցւոյ Հայաստանեայց Տէր Պաւղոս Նախչուանցի և-

« պիսկոպոս Էջմիածնի, և Տէր Աբրահամ Բիւրականցի
« ծայրագոյն վարդապետ Նուիրակ Երուսաղէմի. որոց
« լուր առեալ գալստեան տեառն Ռիջինալդայ Երբ՝
« (Անգլիական եպիսկոպոսին Կալկաթայ,) ելին յողջոյն
« յարգանաց նորա, սիրով ընկալեալ պատուեցան ի նը-
« մանէ երբև գործակիցս Աւետարանի Տեառն և զու-
« գասատիւ եղբարս ի Քրիստոս։ Անմահանայր առ սո-
« սա արդարև աստուածաւանդ սիրոյն զաւրութիւն, ե-
« թէ լեզուի երկաքանչիւրոց՝ բաւական էր յայտնել իրե-
« րաց զսրտին անկեղծութիւն։ Եւ թէպէտ խնայեցին
« յայսմ հանգամանք երկաքանչիւր վիճակաց, սակայն
« և այնպէս նման անլաւ քնարին Մեմնոնի՝ ընդհարեալ
« սրտից նոցա յարփայլին ճառագայթիցն ի հաւատոց,
« նուագեցին զարժանին կոչման իւրեանց զներդաշնակ
« զուգախառնութիւնս ոգւոյ ընդ ոգւոյ, և ցուցին ար-
« դեամբս զինքեանս հետևող լինել այնմիկ՝ որ սիրով *)
« նշանեաց զիւրսն։

« Ապա տուեալ նորա հարց մերոց թուղթ յանձ-
« նարարական ի Մադրաս և ի Բումբայի, առաջար-
« կեաց «յորդոր լերուք ազգիդ Հայոց հաստատել աստ
« զուսումնարան Հայ և Անգղիացի լեզուաց, և ես ի-
« մովսանն ասէ ձեռնտու եղեց նոցա»։ Եւ անդուստ ի
« լայնածաւալ սահմանս հիւսիսային Հնդկաց, շրջեցաւ

*) «Գրէ զնմանէ Տէր Պաւղոս եպիսկոպոս ի թղթին առ Գ. Հ. Մել գլուխ եպիսկոպոսական ձեմարանիս. «Առաղ ցոյացեալ յարևմտից ի յեր արևու առաքելական քարոզութեամբ լուսաւորեալ և մեթոդեալս զազգս բազումս... Ապա յարէ. «Արդարև Աշմարիա աշակերտ էր Նա Քրիստոսի, զի սէրն սրով սիրեաց Քրիստոս զաշակերտս իւր և պատուիրեաց Նոցա այնու սիրել զմիմեանս, նովին սիրովն ընկալաւ զմեզ երանելին ասա ի Դաքայ քաղաքի» և այլն։

Ի. Դ. Թ.

« այցելութեամբ ընդ շէնս աշխարհին, հովուել ոչ
« մէն զհաստատուն և կայուն զեկեղեցիս, այլ և հիմ-
« նել և կազդուրել զարքայութիւն Տեառն ի հոգիս
« Հնդկաց, որ առ կուռս անմռունչս կոյր զկուրայն դան-
« դաչելով յածէին դեռ ի մեռաւորինակ թմրութեան։
« Այսաւրինակ քարոզութեամբ առաքելացեալ նորա
« ամենայն վայրաց հասանէ ի Բումբայի։ Դայ անդ
« յայնժամ և Աթանաս Ասորի արհեպիսկոպոս Աբրահա-
« մաւ վարդապետաւ իւրով հանդերձ, առաքեալ ի
« Գէորգայ Անտիոքացւոց Պատրիարգէ՝ առաջնորդ Ա-
« սորւոցն Մալապարայ, և հանդիպեալ Ռիջինալդայ
« տայ նմա զկոնդակ յանձնարարութեան զՀայրապե-
« տի իւրոյ, սիրով ընդունի, և հաղորդեալ պատարագի
« մարմնոյ և արեան Տեառն ի սուրբ Թովմաս եկեղեց-
« ւոջ նոցա անդ, առաջնայ ի վիճակ իւր ի Մա-
« լապար։

«1825. Իսկ ամենեքեան հարք մեր որ տակաւին
« դեգերէին ի Դաքայ՝ պատճառաւ յաւղածոյ կտակին
« Յարութիւնի Միքայէլեան, տեսեալ թէ չեկաց այլ ևս
« յոյս ակնկալութեան կենդանոյ ի քարանց բուրդ, ուստ ե-
« դին անբաժան ընկերութեամբ ելանել յԵրուսաղէմ։ Այլ
« երբև պատրաստեցան կազմեցան կացին հանդերձանք
« նաւարկութեանն՝ դիպաւ լմն զարթուցեալ Արհեայն
« Պաւղոսի յետս ընդ կրունկն դառնայ յուխտէն միա-
« բանութեանն. իսկ Աբրահամու ինև հանդերձ ժամա-
« նեալ ի Կալկաթա՝ թողու զիս անդ ի գործ դաստիա-
« րակութեան Մարդասիրական Ճեմարանի հայոց, և
« ինքն նաւէ գնայ ի Մադրաս։ Ուրանաւրը բարեաւ տրն-
« տեսութեամբ զառաքելութեանն իւր պատկեալ զգործ,
« եաւթնից ամսոց զկնի վերադառնայ ի Կալկաթա՝
« դէմ եղեալ ելանել յԵրուսաղէմ։

« Առ սովին ժամանակաւ, որ աւր չորորդ էր ամ-
« սեան զեկտեմբերի, դարձ արարեալ և ելանելոյն
« Ռիջինալդայ գայ ի նիստ եպիսկոպոսութեանն ի Կալ-

« կաթա։ Գրէ առ նա Հայր Աբրահամ ձեռամբ պարոն
« Կարապետի Յակոբեան ցուցանել զանձուկ վարագա-
« նաց տեսութեան նորա. ժամ եղեալ երանելւոյն ընկալաւ զնա, և եցոյց նմա զամենայն պարտուպատ-
« շաճ մեծարանս ըստ արժանի կարգին սրբութեան։
« Աստուստ արմատացեալ Աւետարանական ոգեղէն
« սիրեաց բարուն ակս այնր գերաշխարհական քաղցրու-
« թեան սիրոյն, որում ակն ունէր մշակն յաւիտենական
« հնձել հաւաքել և շտեմարանել ի խոպան անապատէ
« ստորանկեալ բնութեանս. յետ արեամբ Միածնին զաշ-
« խարհս ոռոգելոյ։

« Հրաւիրեաց զնա և Նուիրակ մեր հանդերձ ուխ-
« տիւ եկեղեցւոյն ի տուն Տեառն Յովսէփայ ծերունա-
« զարդ երիցապետի մերում, որ նախ քան զմարմնոյն
« պարուրել զախորժանս՝ զհոգւոյն կամելով լնուլ զփա-
« փագ, էջ ի սուրբ Նազարէթ եկեղեցի մեր, և կացեալ
« յանկեան ուրեք ակնածու պարկեշտութեամբ բուրէր
« ի վեր խունկս աղաւթից. և ի կոչել զնա տեառն
« Աբրահամու ի դաս հրեշտակաց տաճարին, բարեպաշտ
« իմն երկիւղածութեամբ պատասխանի զայս առնէր.
« «զգեստաք կանոնչոյ չեն առիս, և ահ է ինձ մատչիլ
« ի սեղան Տեառն հաստարակաց հագուստիս։» Ո՜վ զար-
« մանաւոր պարկեշտութեանս, որ յաւէտ անդստին իմն
« երևէր բնաւորութեան երանելւոյս, քան թէ երևու-
« թական արուեստին առաչաւք հնար....

« Ապա ի լինել ընթրեացն, առեալ տեառն Ռիշլի-
« նալդայ զբաժկին ի կեանս երեքերանեան հայրապետի
« մերում Տ. Տ. Եփրեմայ, և ի վերակենդանութիւն Ա-
« քանազեան թագաւորութեանս. առաջարկեաց. «Ցայս-
« նիշ աւր ասէ, տաւնէ եկեղեցի Անգղնացւոց զտաւն *)

*) Ուրա զբարեխաւսութիւն սրբոց ոչ ընդունին։

Մ. Դ. Թ.

« յիշատակի սրբազան առաքելոյն Թովմայ, և իմ եղեալ
« է ի մտի ձեռնադրել քահանայս. եթէ չիցէ հակա-
« ռակ կանոնաց եկեղեցւոյ քում, և հաճիցիս ընդ իս
« միասնաբար ձեռս դնել ի վերայ. շատ եղեց զէնջ»։

« Անբռնադատ խղճիւ ընկալաւ զայս Աբրահամ
« վարդապետ և ի գալ աւուրն նշանելոյ, առեալ ընդ
« իւր զարժանապատիւ աւագերէցս մեր և զտէր Յովսէփ
« Ստեփանոսեան, զպարոն Կարապետ Յակոբեան և զիս
« ինքն, գնաց յառաջնորդարան եկեղեցի նոցա։ Անդ առ
« դրամբ խորանին իբրև փիլոնեալ հարցն մտաք ի
« ներքս, գտաք զեպիսկոպոսն և զուլտ երիցանցն ընդ
« նմա՝ զգեստաւորեալ համակ սպիտակափառ մաքուր
« կտաւեաւք, և երիզ սեաւ ուրարանման կախեալ զպա-
« ռանոցէ իւրաքանչիւրոցն։ Իբրև լռեաց երկարահար
« կանչիւն զանկացն յարեաւ երգէոն հոգեհնչիւն, յո-
« խորտ, այլ անոյշ իմն ներդաշնակութեամբ շարժել
« զժողովուրդն ի ջերմեռանդութիւն։

« Ցայնժամ ելանէր ի խորանէն երանելին խոնարհութիւն, յաջմէ ունելով զհայր Աբրահամ. յառաջնմէ
« նոցա գնայ այր կիսավիթխարի, որ ի ձեռին կրէր մա-
« կան ձողաբարձ, և ի զարզանդահոս զիմաց անտի ա-
« հաւր արկանէր մանաւանդ ի սիրտս եկաց. և զհետ
« նոցա դաս դաս երիցանց կարգաւ։ Իբրև բազմեցան.
« ով զարմանացս. տեսի՝ զի եպիսկոպոսուհին Ռիշլինալ-
« դայ նստաւ ի շարս քահանայից, և բովանդակ ժողո-
« վուրդն արք ընդ կանայս խառն ի միասին նստէին։

« Լռեաց երգէոն. լռութիւն համատարած թագա-
« ւորեաց յեկեղեցի անդ։ Մի յերիցանց անտի էլ յամ-
« բիոնն, և դպրին կացեալ ի խոնարհ սկսան զժամն։
« Ապա առեալ եպիսկոպոսին զնուիրակ մեր գնաց ի
« սեղան անդր առանց ծիսական իմն պաճուճանաց, և
« բազմեցան այր յաթոռ իւրում. առաջեաւ կացին նուի-
« րեալք, յորոց մի էր Աբդուլմսիհ ի Մահմետական ա-
« զանդոց դարձեալ ի հաւատս կենդանի, այր հզաւր

« բանիւ գրով. և սարկաւագ Աբշին զԹարտուղեալին լնոյը
« զպաշտաւն։ Յետ բազում հարցից և փորձից, և զնից և
« քնից, և աղաւթից և երգոց, խմբեցան կացին շուրջ
« զսեղանովն երիցունք նոցա, ընդ որս և մերս Աւագե-
« ղէց. և իբրև եպիսկոպոսն և հայր Աբրահամ ՃեռՈ *)
« եդին ի վերայ նուիրելոցն, զնոյն արարին և երիցուն-
« քըն, և աղաւթս արարեալ քահանայացուցին զնոսա
« Քրիստոսի և Աստուծոյ Հաւր նորա։

« Այս հանդէս փառաց կարի նախնական Առաքելական,
« Նոր սքանչելեաք գոգ դու, զարմացոյց զԿալկաթա
համայն.
« Այս նորանշան սէր աստուածաւանդ միաբանութեան,
« Շինէր ըզ մարդիկ տաճար տենչալի սուրբ երրորդու-
թեան.
« Որով և ազգացս երկաքանչիւրոց մի հոգի մի բան,
« Գետաւրէն զեղոյը առ Աստուած սիրոյ անհուն ովկիան.
« Ոչ անգղիանալ և ոչ Հայանալ ուր ոչ էր արժան,
« Այլ դնել ի սիրտ սէր զԹագն ասեմ աստուածպաշ-
տութեան։

« Մինչև աւարտեալ գլխովին կարգի ՃեռՈադրու-
« թեանն, ահա շրինդն սաստիկ գղորդեաց զեկեղեցին.
« կէսք ի ժողովրդենէն յարեան և նստան, և կէսք ե-
« լին և գնացին * *։ Ի ներքուստ դռիւն ոտից և շրջն-
« չիւն աթոռոց, և ի վերուստ յոլորտ հնչիւն երգէսնին
« ապուշ կրթէին զմեզ զաւտարս այնպիսի տեսլարանաց։
« Ապա սկսաւ կարգ պատարագին։ Եպիսկոպոսն քարո-
« զէր ի սեղանոյ անտի, և սարկաւագապետի նոցա ա-
« ռեալ կորբան ի ՃեռՈին հաւաքէր զողորմութիւն եկե-

*) Անդղիացիք մեռան չունին, և ոչ զատ ծուռն իւղով։

*) Սովորութիւն է առ սոսա, անհաղորդելեացն չմնալ յեկեղեցւոջ ի ժամ սրբոյ պատարագին։

Մ. Դ. Թ.

« ղեցւոյն. զոր առեալ պատարագողին մատոյց առաջի
« Աստուծոյ ի սեղան անդր։ Եբաց ապա զսկին, և յոսկի
« սրուակէ անտի որ զնովաւ, էհեղ ի նա գինի. առ և
« զմաղզմանն լի բեկորով հացի, աւրհնեաց, գոհացաւ,
« խաչակնքեաց, եբեկ. զնոյն արարեալ և ի բաժակին,
« Ճաշակեաց նախ ինքնին, ապա հրաւիրեաց և հաւր
« մերում Աբրահամու հաղորդել։ *) այլ նորա ասացեալ
« թէ անհնար էր Հայոց նախաճաշեալ մատչել ի խոր-
« հուրդն անապական, հրաժարեաց ի նմանէ. և ողջու-
« նեալ զերեարս մեկնեցան։

« Յետ իբրև հնգետասան աւուրց, այն ինչ պատա-
« րագէր հայր Աբրահամ, *) հասարակ հաւանութեամբ
« Ազգիս մերոյ բնակելոյ ի Կալկաթա կոչեալ զնա յե-
« կեղեցի մեր ետ նմա աթոռ յաւագ դասու սեղանոյն։
« Իսկ երանելին չրազմեցաւ բնաւին. այլ ի սկզբանէ
« ցաւարտ պատարագին ի ծունր խոնարհեալ ահիւ և
« երկիւղիւ պաղատանս մատուցանէր։ Աթոռ յաւիտենա-
« կան շնորհաց...։

« Ընդ աւուրսն ընդ այնոսիկ գրէ տէր Ռիչինալդ
« առ Աթանաս արքեպիսկոպոս Ասորի. իսկ Հայր Աբ-

*) «Անդղիացիք ժիտեն չարաչար զվարդապետութիւն գոյափոխութեան, կամ զզալի փոխումն տարբերց հացի և գինւոյ ի տարբ զգայուն մարմնոյ։ Զի ոչ եթէ աւրհնութիւնն զտարբերն յայլ կարգութիւն փոխէ ասեն, զգալի աչաց ի տեսութիւն հաւանութեան, այլ միայն խմանալի զաւրութիւն նոցին ընդունելոց, և խմանալին՝ հաւատով տեսանի։ Մ. Դ. Թ.

*) «Յարգոյապատիւ. եպիսկոպոսն Անդղիոյ, (ասէ թուղթ Աղգիս առ վիճակաւորս իւրեանց ի Կալկաթա), հրաւիրեալ զծայրագոյն Աբրահամ վարդապետ սրբոյն Սաղեմայ—Նոսուցանելով զնա ի վերայ ամենայն մեր ինքեան ի սեղանի ի պահու սուրբ պատարագին, ամենայն պատուով պատուեալ է զնա անգր քան զանկիկալութիւնս մեր... Արժան է խոհեմութեամբ մատնել զի

« բահամ, զի ընկալեալ էր յԱստուծոյ պատրիարգէն Երուսա-
« զէմի կոնդակ յանուն Ա.Թանասու, զրեաց և ինքն առ
« նա, որ փակարանեալ ի նամակին Ռիշլինայդայ հա-
« ւատացաւ Յովհաննու Փորենայ Իռլանդացի երիցու
« հաստուցանել առ սրբազան նոցուն մակագիր։

ԱՅՍ Է ՊԱՏՃԷՆ ՆԱՄԱԿԻՆ

« Աբրահամ Ծայրագոյն վարդապետ Ծառայ Յի-
« սուսի Քրիստոսի, առաքեալ սրբոյ Ա.Թոռոյն Երուսա-
« զէմի, նուիրակ և տեսուչ հոգևորական գործոց Հայոց
« Հնդկաստանեայց։ Եղբօր սիրելւոյ ի Տէր, Տեառն Ա-
« Թանասու աստուածարեալ արքեպիսկոպոսի Աստուծոյ
« ի Ծովեզերեայս Մալաբարու, և որոց ընդ ձեզ իցեն
« սիրելիք. խնդալ։

« Շնորհք ընդ ձեզ յԱստուծոյ Հաւրէ, և խաղաղու-
« Թիւն ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ աւրհնելոյ
« յաւիտեան, և ի շնորհազեղ սրբոյ Հոգւոյն. ամէն։

« Լուեալ ի գերապատիւ տեառն Ռիշլինայդայ ե-
« պիսկոպոսէ Անգղիացւոյ ի Հնդկիս, եղբաւրէ սիրելւոյ
« մերոյ՝ զբարւոք մատակարարութիւն և զվերակացու-

եպիսկոպոսն ոչ միայն Հրապարակաւ պատուեալ է զԱբրահամ վարդապետն մեր, այլ զմեր սրբազան Առաջնորդն, և զվերամբարձութիւն կաթուղիկոսն, և զեկեղեցիս Հայաստանեայց ընդհանրապէս։ Ուր Թողցուք, զի և ժողովուրդք նոցա զարմացմամբ ասացեալ էին Թէ մինչև ցայս աւր ոչ ոք եկեալ այսպիսի ինչ Հայոց։ Սորագիրք Թղթոյս էին գրեալք ամենայն Հաւարակութիւն ազգիս ընակելոյ ի Կալիկատ։ Ջնախագաղափար Թղթոյս անս ի Տաւմարի սուրբ նպարէմայ եկեղեցւոյն մերոյ, և ի նամակագրութեան իմում։

Մ. Դ. Թ.

« Թիւն Հաւատիդ, որոյ վասն Քրիստոս մեռաւ, խնդացի
« յոյժ յոյժ։

« Յիշեցուցանեմ քեզ եղբայր Հաւատոյ երկնաւո-
« րին ի Քրիստոս, զի ըստ առաքելական բանին յետին
« ժամանակին հասեալ է, և յարուցեալ են բազում սուտ
« քրիստոսք և սուտ մարգարէք։ Եւ այս յաւէտ Հռովմայե-
« ցիք են, որ իբրև գայլս ի գգեստս գառանց՝ մտեալ Հա-
« նապազ ի Հաւատն Քրիստոսի ցրուեն զժողովեալսն փոքով
« Աւետարանին ի փարախ եկեղեցւոյ Աստուծոյ, խաբ-
« դաւանելով զնոսա ի վիհ սատանայական գայթակ-
« ղանաց և սնապաշտութեանց, և առ փառս մարդկան,
« զփառս Աստուծոյ ի Հաւատացելոց ի բաց գողանան։
« Վասն որոյ գգաստացարուք, զաւրացարուք, Հսկեցէք
« իբրև Հովիւ քաջ ընդ երկնաւոր Հաւատապետաւն, որում
« և պատկերանայքդ, արեամբ չափ ի վերայ Հաւատն
« Քրիստոսի. զի յերևիլ Հաւատապետին ընդունիջիք զան-
« Թառամ փառացն զպսակ։ Հսկեցէք մանաւանդ ի վե-
« րայ մինուԹեան Հաւատոյ ընդ ուղղափառ դաւանու-
« Թեան եկեղեցւոյ Հայաստանեայց, որպէս ընկալայք ի
« նախնեաց անտի, որոյ գուք էք անդամ, և գլուխ ա-
« մենայնի Քրիստոս աւրհնեալ յաւիտեան։

« Ահն ունիմք և ըստ Տեառն բանի լրութեան հե-
« Թանոսաց, զի մերձ է տարածութեամբ Աւետարանի
« Տեառն։ Անձկամ յիշեցուցանել ձեզ, զի ահա մեծա-
« գոյն մասն Հնդկաց ծաղկեալ ծածանի լուսազարդ ա-
« ւետարանութեամբ քաջաքրքրան մշակի բանին Ա.ս-
« տուծոյ տեառն Ռիշլինայդայ եղբաւր մերում սիրելւոյ։
« Ուստի ահա աւր փրկութեան, ահա ժամանակ ըն-
« դունելի. ապաքէն Թախանձ արկանեմ եղբայրութեան
« ձերոյ, զի ըստ մատակարարութեանդ զոր ընկալայք
« յԱստուծոյ ի ձեռն արդեանց կենսաբեր խաչին, մա-
« տակարարեսջիք զբանն կենաց ամենայն ազգաց Հա-
« ւատացելոց և անհաւատից. զի կարող լինիջիք կոր-
« զել ի ժանեաց նեռին զկորուստ մոլորեալ ոչխարացն

«Քրիստոսի։ Դառնութիւն ժամանակիս կարաւտի քաղ-
«ցրութեան տարածութեան սուրբ գրոց, առ ի բերելոյ
«պտուղս հաճութեան կամաց Ամենակալին։

«Ընկալեալ յանուն ձեր զկոնդակ ի գերապատիւ
«արքեպիսկոպոսէ Աստուծոյն Յերուսաղէմ, ցանկալի ան-
«ձամբ մատուցանել ձեզ խնդալով ի բարւոք քաղա-
«քավարութեան և անտեսութեան ձեր, որով հովուէք
«զեկեղեցի Քրիստոսի, այլ ոչ զիպաւ լինձ այն։ Իբրև
«լուայ թէ տէր Դէտ Կալկաթայ առաքէր առ ձեզ
«զԱստրի նամակ իւր, յանձնարարի նմա զայս գիր, և
«գոհ եմ զնմանէ, որ մարդասիրեացն փակարանել զսոյն
«առ ձեզ. յուսամ անփորձ հասցէ ձեզ։

«Դրեցի զայս գիր ի Հայ. բայց համարեալ թէ
«գուցէ ոչ ոք յազգէս մերմէ գտանէր այդրէն թարգ-
«մանել ձեզ զսէր և զանձուկ իմ առ ձեզ. և զի չէր
«աստ ի մէնջ՝ որ յԱստրին յեղոյր գիր, հարկեցայ յԱնգ-
«ղեացին փոխել ոճ, լեզու համայնածան ի համաւրէն
«Հնդկաստան. յուսամ գտցի ոք, որ զիմն կարդասցէ
«ձեզ զգիր։

«Պատրաստեալ եմք Եգիպտական նաւու (Ալիք
«Ռուհոնանդ անուն) ելանել ի սուրբ քաղաքն Երու-
«սաղէմ։ Ակն ունիմ, զի թէ ողորմութեամբ Տեառն դի-
«պեսցի յԱլպի նաւ մեր, տեսանել զձեզ, և զորս ընդ
«ձեզ են սիրելիք, և լնուլ զանձուկ կարաւտանաց
«մերոց։

«Եղբայր մեր եպիսկոպոս Կալկաթայ ընդ իս ող-
«ջոյն տայ ձեզ, և եղբարց Աւետարանին Քրիստոսի։
«Եկեղեցիք Հայոց և Անգղիացւոց որ ի Կալկաթա, ող-
«ջոյն շատ տան եկեղեցւոյ ձերում։ Ողջունեն զձեզ և
«եղբարք երկաքանչիւր եկեղեցւոյ. ողջոյն տուք մի-
«մեանց և զուրք ի համբոյր սրբութեան։

«Յաջողուած ձեր սրբոյ մատակարարութեան.
«շնորհք Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ. սէր Աստու-
«ծոյ և հաղորդութիւն Հոգւոյն Սրբոյ ընդ ձեզ. ամէն։

«Աղաւթս արարէք առ Աստուած եղբարք,, յաջո-
«ղել զձանապարհս մեր ի սուրբ քաղաքն Երուսաղէմ։ *)

Մնամ ողջունարար չէր
Իմով չէռամբ Աբրահամ։

«1826. Յամսեան յունվարի, այն ինչ հանդերձեալ
«էր Տեառն Աբրահամու ելանել ինև հանդերձ յերու-
«սաղէմ, հնգետասան աւուրքք յառաջ մատուցեալ առ
«նա խնդրեցի աւանդել զիս ի խնամս տեառն Ռիչի-
«նալդայ, զի ընկալցի զիս յեպիսկոպոսական ճեմարան
«իւրեանց յուսումն Անգղիական բարբառոյ։ Գրեցի և
«զերկուս եռանդնոտ աղերսագիրս առ այս գլուխս, և
«իբրև ըստ ամենայնի հաւան և հաճ գտի զնա յայսմ,
«ելի իսկոյն առ ոմանս ի ներսին մտերմաց իմոց, և
«հաբցեալ զմիտս նոցա, խրախոյս կալայ չծախել ու-
«նայնութեան զժամանակն յաջողեալ Տերամբ։ Վասնո-
«ր այ վեց աւուրքք յառաջ քան զելսն իւր, առեալ միջ-
«նորդի մշանջենաւոր բարութեան իմոյ զպարոն Կարա-
«պետ Յակոբեան և զիս, գնաց յողջոյն հրաժարանաց
«սիրականին իւրոյ ի Տէր, ուր ի կատարիլ նախաձա-
«ղուն առանձնացեալ ի դիւան անդր, յոտն եկաց նա
«և խաւսեցաւ ցերանելին, այսպէս. «Տէր իմ, ծանուցս
«խնդրեմ, այլ սէր ձեր թեթևացուցանէ լինձ զնոյն։
«Բազմիցս պատահի Անգղիացի ճանապարհորդաց հիւ-
«րիլ մեզ, այլ առ ի չգոյէ լեզուագիտութեան աւտար
«մտեալ և աւտար ելանեն։ Մշանջենաւորել կամելով

---

*) Ըստ ամենայն հաւանականութեան թուի թէ՝ շարա-
դրութիւն նամակիս այսորիկ է Մեսրովպայ մերում, որպէս և
ոմ բանիցն ակներև ցուցանեն։

Ց. Գ. Մկրեան։

« ապա բարեկամութեանն ընդ մեզ և ընդ ձեզ, աւան-
« դեմ ահա ի խնամս ձեր զորդի իմ զՄեսրովբ Դաւ-
« թեան, ընդունել իմոյին ծախիւք յեպիսկոպոսական
« ճեմարան ձեր յուսումն Անգղիական բարբառոյ։

« Յայս բան սակաւիկ մի զկայ առեալ երանել-
« ւոյն, եհան զկանոնս ճեմարանին, հայեցաւ ի նոսա
« ընդ հարուստ ժամս մտախոհ յուիշտակութեամբ, և
« երևէր գժուարել խնդրոյն. բայց ի վերջոյ շփեալ նորա
« զճակատ իւր պարզեաց գոգ դու, յամպածին մռայլու-
« թեանց անտի հոգոյն տարտամականաց, և ծաւալեալ
« ի դէմս իւր զծիածան զթութեան, ասէ. «սահմանք ճե-
« մարանին չեբեն ինձ ընդունել զոք չափահաս՝ յաշա-
« կերտութիւն տեղւոյն, այլ ես ընկալայց զսա ոչ իբրև
« զաշակերտ, այլ իբրև զմտերիմ. և կամիմ զմա ուսա-
« նել զԱնգղիական և Լատին և զՀելլեն զպրութիւնս
« միանգամայն, ոչ ձեր՝ այլ իմով ծախիւք»։

« Իսկ հայր Աբրահամ յետ այսաւրինակ աստուա-
« ծանման բարերարութեան և երախտեաց, խնամոց
« Տեառն յանձին եղեալ դառնայ գնայ յԵրուսաղէմ։

« Կարի իմաստուն առած է նախնեաց,
« Թէ մարդս մարդով միայն լինի մարդ.
« Քանզի և գոհար ու մետաղ հանքաց,
« Անփորձ ի մարդոյ ոչ շողան ի զարդ։

« Վաղվաղակի յետ ելից տեառն Աբրահամու սիր-
« վեալ Ռիջինալդայ առ սակաւիկ մի ի մարմնական
« անկարութեանց, առնու զԱւետարանն ի ձեռս, և
« զՔրիստոս ի սիրտս և նաւէ գնայ ի Մադրաս։ Անդ
« առ Ճանապարհայն չեւ թողեալ զծոցն Բանկալայ,
« զբէ յԱնգղիա առ ատենադպիր Աւետարանական ըն-
« կերութեանն աւրինակ գայս. «Յայտ է ասէ, միաբան
« ընկերութեան, զի մեծ իմն և հարուստ բազմութիւն
« Հայոց հաւատացելոց սիրեալ ընդ ամենայն շահա-
« վաճառ քաղաքս արևելից, և համբաւեալ ի ջանս, ի

« քիրտ, ի վաստակս և ի չափաւորութիւնս, կան և մնան
« եթէ ի Մահմէտական թէ ի կռապարիշտ տէրու-
« թիւնս, անշուշտ խոստովանութեամբ հայրենի աս-
« տուածատուր օրինացն իւրեանց։ Առ ի լնուլ զհոգևոր
« պէտս մատակարարութեան հանրասիրաւ ժողովր-
« դեան այսորիկ, և հաւաքել տուրս, որով չէն կան մայր
« եկեղեցիք երկրին և Երուսաղէմի, Պատրիարգունք Ե-
« րուսաղէմի և Էջմիածնի ժամանակ առ ժամանակ ա-
« ռաքեն քորեպիսկոպոսունս, եպիսկոպոսունս և արքեպիս-
« կոպոսունս կոնդակաւ և իշխանութեամբ անզանազանս
« ի նուիրակաց գահին Հռովմայ։ Բայց խորհել պարտ է
« աստնաւը, զի այս պատրիարգունք դուն ուրեմն պա-
« հեն անձանց առաւել քան զանուամբ և եթ կապակ-
« ցութիւնս ընդ մասնաւոր վիճակաց. այլ կարգեն ա-
« ռաջնորդարանս, իբրև իւրեանց երեսփոխան իշխել վի-
« ճակաց, կախումն ունելով զիւրաքանչիւր պատրիարգաց
« իւրեանց։ Թէպէտ և կերպարան և շուք սոցա բերեն
« ըստ մասին զնմանակցութիւն զՀռովմայ, այլ այս Ա-
« ռաքելական հայրապետք անմասն են յանդուգն այն և
« ի դերաքրիստոսեան բռնաբարութենէ համատարած
« իշխանութեան, առ որ բրտութիւն արևմտից ամբարձ
« զեպիսկոպոսունս Հռովմայ։

« Պատահեցայ երից այսոցիկ աստանդական այցե-
« լուաց ի զանազան կողմանս Հնդկաց, յորժամ և եսն
« էի աստանդական. և ըստ ամենայնի ցնծութիւն վար-
« կայ անձին ցուցանել նոցա հիւրասիրութիւն և դուգ-
« նաքեայ սպասահարկութիւնս։ Որոց միանգամ դիպայ,
« բերէին զանուն և զկերպարան տրանց խոնարհաց, և
« քաղցրութեամբ ակնարկէին ընդ ծէս և ի կրաւն ե-
« կեղեցւոյ Անգղիացւոց։ Իսկ ընդ տեառն Աբրահամու
« (ում նախ ի Դաքա, և այժմ ի Կալկաթայ վերստին
« հանդիպեցայ,) յաջողեցաւ ինձ մտերիմ հաղորդակ-
« ցութիւն։ Սա ստէպ այց ելն ի պալատ իմ և յե-
« պիսկոպոսական ճեմարանի. հաղորդեցաւ աստուա-

« Ծայլին պաշտամանց յառաջնորդարան մեր, ձեռնտու
« եղև ինձ և երկրացանց իմոց ի ձեռնադրութիւն քահա-
« նայից, առ որ և ես եռու նմա աթոռ ընդ աջմէ իմ-
« մէ... և սպասուեցի գնա մեծարանաւքն, արժանի առա-
« քելական աշխատանի նորուն։—Տէր Աբրահամ, որպէս
« դէպք երացն յուսացուցանեն, հաւաստեաւ զփորձ առ
« իմումս անկեղծութեան, հաճեցոյց զինքն կարգի
« ձեռնադրութեան մերոյ... Եւ ի դարձին իւրում յերու-
« սաղէմ, երբև մեծ իմն գրաւական սիրոյ իւրոյ հաւա-
« տաց ինձ զպատանի ոմն հաճոյական զարդական իւր և
« զսարկաւագ, ուսանիլ զԱնգղիացի և զարևմտեան
« դպրութիւնս միանգամայն, յԵպիսկոպոսական ճեմա-
« րանի մերում։

« Վասն այսորիկ խնդրեմ, զի ընկերութիւնն կա-
« րողացուսցէ զայտեան ճեմարանին ընդունիլ հաւանու-
« թեամբ Եպիսկոպոսին Կաղկաթայ յաշակերտութիւն
« տեղւոյն զերկուս մնայն աշակերտս, զանդամս այլ ե-
« պիսկոպոսական եկեղեցեաց, որ չիցեն ընդ իշխանու-
« թեամբ Հռովմայ եկեղեցւոյ։ Պատրաստս ի հպատա-
« կիլ կանոնաց ճեմարանին, և ի հաղորդիլ աստուա-
« ծային պաշտամանցն ի մատուան նորա։ Մի պահան-
« ջեսցին ի նոցանէ, կամ ի դիմաց նոցա զխոստմունսն
« եդեալ ի 16 կանոնին թէ «Սնեալ և զարգացեալ են
« ի վարդապետութիւնս եկեղեցւոյն Անգղիոյ»։ Այսպիսի
« աշակերտք որոշեսցին յայլոց՝ վերատուութեամբս «այլ
« եկեղեցական աշակերտք»։ Ի վերջատսան ամաց և
« անդր յամենայն հասակի ընկալցին այսպիսիք, այլ
« մի ի խոնարհ քան զվերջատսանամեանն։ Մի կացցեն
« անդր քան զերիս տարիս։ Մի ընտրեսցին ուսուցիչս
« Քրիստոնէական վարդապետութեան կամ քարոզիչս։
« Մի հրամայեսցէ նոցա ճեմարանն յետ ելոյ նոցա
« զպայման աշակերտութեան իւրեանց։ Նաև խնդրեմ,
« զի թէ հաճոյ թուիցի ընկերութեանն, հաստատել ա-
« տենիւ ճեմարանին և հաւանութեամբ Այցելուն նորա

« զընտրութիւն Մեսրովպայ Դաւթեան իբրև զնախորդի
« այսր կարգի աշակերտութեան։ Իսկ թէ ոչ, զիարդ
« և լցէ այս է իմ սրտեռանդն յոյս, զի նեղեսցի նա
« մնալ անդ գոնէ իբրև զանհիմնաւոր աշակերտ, և ես
« անձամբ վճարեցից զծախս նորա որքան և ատեան
« ճեմարանին իրաւացի դատիցի»։

« Դրէ և յաղագս հաստատութեան Հայ տպագրաց
« ի շահ գրաւորական աւգտի համարէն Հայաստա-
« նեայց, և այլն։

« Նաւեալ ասա ի Մադրաս, մնայ ամսաւրեայ ժա-
« մանակաւ, քարոզէ նոցա զԱւետարան Աստուծոյ, աւ-
« րինակ կացուցանէ զինքն առաքինութեան հաւատին,
« սրբութեան, պարկեշտութեան, հեզութեան, խոնարհ-
« հութեան, և ամենայնի՝ որով պայծառանայ եկեղե-
« ցի Աստուծոյ ի վառս Հաւր յաւիտենականի։ Կոչէ յե-
« կեղեցի իւր զՍիմոն վարդապետ զժողովարար Լիմ և
« Կտուց անապատացն որ ի ծովուն Աղթամարայ, զտէր
« Յովհան Մանուկեան Աստապատցի զարժանապատիւ
« աւագերէց Մադրասեան Հայոց, և զերևելին մերա-
« զանց զպարոն Սէթ Սամեան այլովք հանդերձ հան-
« դիսակից լինիլ սրբոյ կարգի Դրոշմին, որոց և տայ
« պարտուսպատշաճ մեծարանս։

« Տեսեալ անդ զնամականին առ Աթանաս անագա-
« նեալ տակաւին ի ձեռս Յովհաննու Դորէնայ տխրի յոյժ
« յոյժ։ Ուստի և նոր գրեան արարեալ նոքաւք հանդերձ
« առ Յովսէփ Փէմ քահանայ Անգղիացի ի Մայապար ա-
« ռաքէ անյապաղ Աթանասու հասուցանել։ Այլ մինչև
« ժամանեալ նոցա ի նպատակ անդը, զուժկան հասանէ
« ի Մադրաս թէ դաւաճանութեամբ Դիոնէսիոսի և Փի-
« լէքսիանոսի Հնդկասրի եպիսկոպոսացն մատնեալ Աթա-
« նասու ի ձեռս կռապաշտ դժխոյի տէրութեան Տրա-
« վէնգորայ աքսորեցաւ յաշխարհի անտի։ Յոգի վհատեալ
« նորա յեղակարծուստ պատահարէս, զրէ յորդոր խաղա-
« ղութեան առ Դիոնէսիոս և Փիլէքսիանոս, այլ տեսեալ

« թէ չաւգտեն ինչ իւր այնպիսին գրութիւնք, զրէ առ
« նա ինքն Աղէքսանդր Նիուէլ հազարապետ Անգղիա-
« ցի՝ արքունի գործակալ տեղւոյն, և ստիպաւ խնդրէ
« դարձուցանել զԱթանաս: Այլ կարի անագան. քանզի
« անցեալ գնացեալ էր նա ի սահմանաց անտի:

« Այսպիսեաւք և այսքանեաւք ջերաջերմ խանդա-
« զատանաւք միջաւրէացեալ ի վերնոլորտ աշխարհիս
« այս արև Սիրարփին, խոնարհեցուցանէ զկառս աս-
« տուածեղէն գթութեան ի Տանձոր. ուր ի տաւնի սրբ-
« բոյ Զատկին հաւաքեալ զբազմութիւն հաւատացելոց
« և անհաւատից միանգամայն, քարոզէ նոցա զանուն
« Տեառն Յիսուսի, պատարագէ անդ, և հաղորդէ զա-
« մենեսին զնոսա ի հացն երկնատեղաց: Ամբառնայ
« զաջն առաքելական, և աւրհնէ զնոսա ընկիկ իւրեանց
« բարբառովն, որով և զբազումս ի նոցանէ ի բազմաս-
« տուած մոլորութեանց որսայ ի հաւատս միոյն և կեն-
« դանւոյն յաւիտեանս:

« Աստուստ յարուցեալ փութայ ի Թրիշնուպալլիս,
« և ի դժոխային տաւթ անդը տապալորով արեգական
« քարոզեալ ի վերայ յաղթանակի քրիստոնէական մա-
« հուն, քրտնախառչ լինէնէ յաւթարան անդը, և մտա-
« նէ ի լուացարան զովանալ սառուցեալ ջրով. բայց եթ-
« ե և յաւէտ քան զսովորականն յամի անդանաւր,
« մտեալ սպասաւորին գտանէ զնա անկենդան ընդ լուղ
« անկեալ յերեսս ջուրցն:

« Ագդ առնեն վազվազակի, ժողովել ժողովեն
« զբժշկանին, գուն գործեն թերևս զաւրութեամբ դեղոց
« կամ արմատոց յետս կոչել զսրբասուն հոգին ի ձեռաց
« անտի Տուողի նորուն, այլ չլինի հնար: Ահա այսաւրի-
« նակ զրաւեցաւ երանելին Ռիջինալդ Եբրեան ի 43 ա-
« մի հասակի իւրում, ամսեան ապրիլի յաւուր ծննդեան
« իւրոյ, ի չնաշխարհիկ կենաց անտի իւրոց, որ չէր
« այնքան իւր ինքեան որքան թէ բոլոր աշխարհիս պի-
« տանի և շահեկան:

« Ահա՝ մահ իմացեալ մահ, մահ ոչ իմացեալ ան-
« մահութիւն: Ուր արդարև ամենայն աստուածառաք
« աւրհնութիւնք կարապետ առնեն իւրեանց զմասնա-
« ւոր տառապանս, և ամենայն աստիճանք մտից կե-
« նացն յաւիտենականաց վերձեմին ի ձեռն նորանոր
« պատարագաց: Ճառագայթարձակ ճաճանչէր այս արև
« հրաշագին ի ծիրս կիսաւրէացեալ զաւրութեան և ի
« ներգործութիւն բարեվառ ջերմանն, այն ինչ յանկար-
« ծակի ընդամպեալ նսեմացեալ քաջաթուխ միգով
« մահուն սուզաւ յամսն յաւիտենից: Դրաւշ երկնամբարձ
« կրող խաչին պարծանաց. որ խոնարհեցաւն, անկաւ ոչ
« երկարամանակեան մեղկաղէտ վհատութեամբ, այլ
« փառացի յաղթութեամբ ի հանդիսին մենամարտու-
« թեան, որ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս
« յաւիտենիս այսորիկ: Եկն Տէր ի ժամուն, յորում ակն
« ոչ ունէր, եգիտ զծառայն հաւատարիմ յիւրումն տրն-
« տեսութեան, որ և զվերջին վայրկեան կենացն պա-
« տարագէր զոհ բոլորանուէր հաճութեան կամաց
« Տեառն իւրոյ, և հրաւէր հանդիսացաւ նմին յուրա-
« խութիւն անվախճան:

« Հանգեաւ երջանիկն ի գործոց իւրոց, սլացաւ
« մշակն Աւետարանին ի վարձ աւետարանական եր-
« ջանկութեան, և զորս այլոց քարոզէր, ինքնին կարա-
« պետաց վայելել զփառս: Աշխար համաշխարհական,
« սևազգեաց դուստրն ասեմ աղէտից և մեղաց ստո-
« րանկեալ բնութեանս, հանրասփիւռ տարածեալ պա-
« տեաց զհորիզոն Հնդկաստանեայց առհասարակ:

« Տրտմազգեաց թխով վարակեցան եկեղեցիք Անգ-
« ղիացւոց. և որ մեծն է սուրբ Նազարէթ եկեղեցին
« մեր ի Կալկաթա, խնդրով և արդեամբք պարոն Կա-
« բապետի Յակոբեան մեծահանդէս պատարագաւ կա-
« տարեաց զտաւն յիշատակի երջանիկ փոխման նորա:
« Հանրական ժողովանի գումարեցան Անգղիացւոց ի Մադ-
« րաս, ի Բոմբայի և ի Կալկաթա, և հանգանակեցին

«զտուրս երախտագիտութեան իւրեանց կանգնել ար-
«ձան անմոռաց յիշատակի հանգուցելոյն յեկեղեցիս
«անդ իւրեանց։ Եւ այսպէս վճռեցաւ մահարձանի յա-
«ռուցանել նմա ի Լոնդինոն, յՈքսոնիա, ի Մադրաս, և
«ի Կալկաթա։

«Ի փառս յիշատակի հանգուցելոյն, և ըստ խնդ-
«դրոյ իսկ նորուն, առաքելական ընկերութիւն տարա-
«ծութեան Աւետարանին ի չորեքծագեան մասունս
«աշխարհի, հաստատեաց առնուլ զերկու յազգէս Հայոց
«յաշակերտութիւն եպիսկոպոսական ճեմարանին Կալ-
«կաթայ, անուանեալ «Երրեան մյլ եկեղեցւոյ աշա-
«կերտք»։ որոց ելով իմ առաջին, և յատկացեալ մաս-
«նաւորապէս ի շնորհս երանելւոյն, որ ի կեանս և ի մա-
«հու միանգամայն բարերարեաց ազգիս և ինձ, չ'կա-
«ըէր, բայց եթէ աւրինակաւ սրբասուն վարուց նորա
«կացուցանել զանձն երախտագէտ, արձան յիշատակի
«անմահ երախտեաց նորուն։ Եւ Քրիստոսի վարդապե-
«տին և սիրոյ ողորմութեան, փառք ընդ ամենայն յա-
«ւիտեանս. ամէն։

Այսչափ վերս առնելով Պ ա ղ ե ս տ ի ն զրոց յառա-
ջաբանէն, յորում շատ հետաքրքրական են Քրիստո-
նէական յարաբերութիւնք և հաղորդակցութիւնք մեր
եկեղեցական Հայոց՝ ընդ Անգլիական եպիսկոպոսին, և
փոխադարձարար. զայս և եթ կը յաւելում ասել. թէ
մեր առաքելական Աթոռոց ներհուն և պարտաճանաչ
նուիրակներն կամ առաջնորդներն, որչափ օգտակար
կարեն հանդիսանալ մեր սուրբ կրօնին՝ յայտնելով և
բացատրելով յամենայն դէպս, զուղղափառութենէ եկե-
ղեցւոյս Հայաստանեայց և աւանդապահ, հնադարեան,
հաւատարիմ Քրիստոնէութենէն, և օտարախորթ քա-
րոզիչների սէտք չունենալէն, որք հակառակ Աւետա-
րանին Ճշմարտութեան կը պառակտեն զեկեղեցին Քրիս-
տոսի...։

Իսկ Դ ի ց ա բ ա ն ո ւ թ ե ա ն գրքի վերայ, տես ի

վերջկոյս տեսութեանս ի շարս մատենագրութեան Մ. Դ.
Թաղիադեանի։

---

5) Այս «Խորհուրդ խորին» այլափոխեալ երգոյ օրի-
նակն ստացել եմ վաղագոյն, բայց անպատշաճ դատե-
ցայ ընդ առաջ բերել, և չտալ տեղի գայթակղութեան
ընթերցանելեաց, որ և հեղինակին ևս պատիւ չ'բերեր
այնպիսի սրբազան մի երգ՝ հակադարձ բառերու և
մտքի փոխաբերելովն։

---

6) Թէ Ինչպէս Մեսրովբ Թողլով եպիսկոպոսական
ճեմարանը գնացել է նախ ի Զուղա. այսպէս կը պատմէ
ինքն իւր Ա զ գ ա ս է ր լրագրի մէջ երես 285, թիւ 36.
1849 Թուին։

«Որ ծնաք ի ծառայել ազգի մերում, և ի նմին
«զարգացեալ ի մանկութենէ, թողաք զեպիսկոպոսա-
«կան ճեմարանն Անգղիացւոց ի Կալկաթա, յուսով ա-
«ռաւել ծառայելոյ հայրենեաց և հասաք ի Նոր Զու-
«ղա. զհետագայ խնդիր հոգևորականաց և աշխարհա-
«կանաց նորա ոչ արհամարհեցաք. և կարօտ որքան
«և էաք ծնողաց և ազգականաց մերոց՝ լաւ համարե-
«ցաք հոգևոր կարօտութիւն զՆոր Զուղայ լցուցանել՝
«քան զմեր ինքեան. և այն՝ ոչ այնքան վասն վարձու,
«որում և դրամօք ևս օգնեցաք, քան եթէ վասն սի-
«րոյ և պարտեաց։

«Տամք աստանօր զօրինակ խնդրագրոյն, և ի հե-
«տևեալ թիւս մեր կարձ ի կարձոյ զհետագայիւքն
«անցանեմք, թերևս շարժել կարասցուք զգթութիւն
«եկեղեցւոյն Նոր Զուղայ՝ որ մինչ օտարոտի խեթիւ և
«խորդութեամբ հայեցաւ ի տկար վաստակս մեր»։

ՊԱՏՃԷՆ ԽՆԴՐԱԳՈՅՆ

«Ցարգոյ պարոն ՄԵՍՐՈՎԲ ԴԱՒԹԵԱՆ ԹԱՂԻԱԴԵԱՆՑ

« ԵԹԷ մարդ ծնեալ վասն Հայրենեաց, պարտ է « կեալ վասն Հայրենեաց, և ծառայել նմին, որքան ա- « ռաւել ևս եթէ կեցցէ ոք ծառայել ոչ միայն Հայրե- « նի ուսմանց և բարեկարգութեանցն արտաքնոց, այլ « և ներքին կրօնից և աստուածպաշտութեան նոցա։ « Ապաքէն ի բազմաց հետէ ցանկացեալ և ցարդ ան- « կատար մնացեալ ի մեզ հաստատութիւն ճեմարանին « ի Զուզա և հետզհետէ յանհրաժանգութեանց խսպառ « անհետացեալ ուսման ի մէջ հասարակութեանս բնա- « կելոյ ի Զուզա, համարեա թէ գլխովին խոնարհեալ « է պատիւ եկեղեցւոյ և յարգ Հայրենի աստուածա- « տուր հաւատոյ մերոյ առ անուղղայս ոմանս ի մերա- « զանց, որք սարտուցեալ ի ստենէ մօրն՝ որ ծնաւն « զնոսա, զնան ի գիրկս Հռովմէական գայլոցն, որք ի « զգեստս ոչխարաց մտեալ ի հօտն Քրիստոսի, խար- « դաւանեն զնոսա ի խոհերս մարդապաշտ մոլորութեան « և յաւիտենական կորստեան հոգւոցն խրեանց։

« Ցայս ամենայն հայեցեալ մեր ապաքէն՝ ազգո- « վին խնդիր մատուցանեմք առաջի ազգասիրութեան « ձերոյ. զի (թէպէտ դժուարին է վասն բազմամեան « օտարութեան ձերոյ ի Հայրենեացդ և կարօտութեա- « նըդ,) սակայն դեռ ևս որպէս վայելէ Ճշմարիտ գիտ- « նոց և Ճշմարիտ բարեպաշտից, զգուտն հասարակաց « յաւէտ ընտրելով քան զշահ անձին առանձինն՝ յանձն « առջիք դաստիարակել զմանկունս մեր գոնեայ տա- « րեկան ժամանակաւ և եթէ։ Եւ առ այս՝ որպէս աներ- « կբայ եմք մեք Աստուծոյ ձեզ վարձատրութեան, նոյն- « պէս և ազգային միաբերան շնորհակալութեանս մերոյ « և օրհնութեանց հազարաց ի կեանս և ի զարգացումն « կենացդ պատուականաց։ Ողջ լեր բազում ազգասի- « րութեամբ ի պարծանս մեր։

« Եղև յԱսպահան ի Նորս Զուզայ յամի Տեառն 1831. « Մայիսի 10 ին»։

—Սոյն խնդրագիրը կրէ զստորագրութիւնս սրբոյ Ամենափրկչի Աթոռոյն հոգաբարձու յաջորդ Յակոբոս վարդապետի և տասն քահանայից և երկոտասան աշխարհականաց։

Ապա գրէ յերես 294 Ա գ գ ա ս ի ր ն.—«Զուզա 1831 « ամի։ Խնդրագիրք հաստատութեան առ ձեռն պատ- « ասխան դրամ ոչ ունէին։ Ամենափրկչի վանքն 75 թու- « ման փոխ էառ ի մէջն և ընդ անմիջական վերահա- « սութեամբ մերով ձեռն ի գործ արկ պատրաստել զա- « մենայն զկահ և կարասիս նորա՝ ըստ եւրոպական « նորաձևութեան։ Ընտրեցաւ յայնմասրած եկեղեցի և « գաւիթ սրբոյն Ստեփանոսի. և ի սկզբան յուլիսի 1831. « Կարապետ արքեպիսկոպոս հայրապետական տարագու, « և ընդ նմին հոգևորականք և աշխարհականք միա- « համուռ հաւաքեցան ի դուռն եկեղեցւոյն. իբրև հա- « ւաք զշեղ գինւոյ ի դրուագ անդր գոչելով ԱՄԵՆԱ- « ՓՐԿՉԵԱՆ ճեմարան հեղաւ անապակն, բացաւ դուռնն « և գրոհ ետ բազմութիւնն ի ներքս՝ երգելով առ Հո- « գին սուրբ. «Այսօր երկնայինքն ուրախացան, ընդ երկ- « րաւորաց նորոգումն» և այլն։ Սկիզբն արարաք անու- « շակ ծառայութեան-մերոյ առ Ազգն, և ի նմին շա- « բաթունակեցաք ցամիսն նոյեմբերի այնր ամի։

« Զոր ինչ առ ձեռն դրամ էր մեր՝ փոխ տուեալ էաք « աթոռոյն, և միայն յամսոջ հինգ թուման վարձս առ- « նուաք ի կերակուր մեզ, և այն ևս՝ քանի նոր էր, ժամա- « նակին ստանայաք, և երբ հնացաւ՝ կռկռալով և կռուով։ « Յարեան նաև ոմանք և յարուցին ընդդէմ ոչ միայն « զլեզու իւրեանց՝ այլ նաև զահիկայս ոմանս ի Լոմբոնց- « ւոց։ Բայց մեք դեռ լաւութեանցն ակն կալեալ՝ մնա- « ցաք մինչև անասելի բրտութեամբ հալածեցաւ Տէր Կա- « րապետ արքեպիսկոպոս յաթոռոյ և ի հայրենեաց իւրոց։

« Այս յայտնի ապերախտութիւն Զուզայեցւոց առ

« ազգակից, առաջնորդ և փրկիչ լուրեանց, որպէս
« նաև օրըստօրէ կռկռիք ի մասին դուզնաքեայ վար-
« ձուցս ի կերակուր միայն, առիւծ եղեն մեզ՝ զմերն
« մեզ ստանալ և հետևել առաջնորդին՝ առ որ հասաքն
« ի Ղում քաղաքի՝ դէպ ի գնալն լուր ի սուրբ Էջ-
« միածին»։

---

7) Ինչպէս ի վեր անդր երես 41 ասացի, Թաղիա-
դեանցի ճանապարհորդութեան Բ. հատորն անտիպ
մնալով՝ բազում անձնական և ազգային կարևոր տե-
ղեկութիւնք նոյն ժամանակի ի կորուստ մատնուած են։
Ես իսկ քանիցս խնդրակ եղայ դորա ձեռագրին, ինչ-
պէս նաև կիսակատար մնացած հեղինակութեանց Մես-
ropովբայ, բայց հնար չեղաւ ձեռք ձգել. զի կ՚ասեն թէ՝
ոմանք Շերազ կորսուել են, և շատք Զուղայու վանքում.
ուստի կանոնաւոր տեղեկութիւն չ՚կայ, թէ ինչպէս
գնաց Էջմիածին, և ո՞ւրքան մնաց անդ։ Բայց և այնպէս
հետազօտելով Ազգասէրի բազմավէպ թերթերը՝
ինչ որ գտած եմ, կը շարակարգեմ ի գիտութիւն բանա-
սիրաց։

Յերես 336 Ազգասէրին 1850 ամին այսպէս
գրէ Մեսropովբ զեւրմէ.

« Հասաք ի սուրբ Էջմիածին, վկայեցաք օծու-
« թեան Տեառն Յովհաննու Կարբեցւոյ, և յանձն առաք
« զգործ գլխաւոր վարժապետութեան մայր ուսումնա-
« րանի սրբոյ Աթոռոյն՝ և զխորհրդական գրագրութեան
« երկուց Կաթուղիկոսացն Եփրեմի և Յովհաննու, որ-
« պէս և զսրբոյ Սիւնհոդոսին Էջմիածնի, որպէս ահա
« Դաշնագիրս ցուցանէ.

« Յանուն ահաւորին Աստուծոյ կապակցիմ ընդ
« սրբազան Սիւնհոդոսի, կատարել զպաշտօն վարժա-
« պետութեան Աղուեսաց ազատականաց, և զպաշտօն
« խորհրդական գրագրութեան Կաթուղիկոսի ամենայն

« Հայոց և սրբազան Սիւնհոդոսի, անարատ խորհրդա-
« պահութեամբ, արիութեամբ և անկեղծ հաւատար-
« մութեամբ՝ երեք տարի ժամանակաւ, տարին հարիւր
« և քսան թուման վարձու։ Եւ այս առանց երիք տը-
« տնջանաց ցորչափ պաշտօնք իմ յառաջ գնան կանո-
« նաւոր խղճմտանօք և օրինաւոր կարգադրութեամբ.
« արտաքոյ սոցա՝ ոչնչի մասամբ չունիմ ինչ պահան-
« ջելիք, ի սրբազան կառավարութենէ սրբոյ Էջմիածնի։

Մ. Դ. ԹԱՂԻԱԴԵԱՆՑ։

«Յամի տեառն 1833, յունիսի մուտն
Ի սուրբ Էջմիածին։

« Վերոյգրեալ կապակցական գիրն Մեսropովբայ
« վարժապետի Թաղիադեանց ընդունելի եղև սրբա-
« զան Սիւնհոդոսիս, վասն որոյ և ստորագրի.

« Աւագ լուսարար Բարսեղ արքեպիսկոպոս,
« Դրիգոր արքեպիսկոպոս Արթուինցի.
« Վեհապետեան Յովսէփ եպիսկոպոս.
« Ղուկաս եպիսկոպոս.
« Ստեփանոս վարդապետ Արարատեանց.
« Յովհաննէս վարդապ. Շահիսաթունեանց։

« Համար 97, յունիսի 16
1833.

Իսկ Էջմիածնի մէջ կ՚երևի թէ՝ հազիւ մի տարի
մնալով հակառակ իւր պայմանադրութեան, վերստին
գնացել է ի Զուղա, խնդրանօք տեղւոյն առաջնորդին,

որոյ վերայ այսպէս կը գրէ ինքն յԱզգասիրի 1851 ամին, երես 516։

« Վաղվաղակի յետ կոտակի և մահուն գերապա-
« տիւ Գրիգորի Սամեան ժառանգք և կոտակատարք
« նորա դղրդեցին գրովք ելբեանց զնոր Զուղա, ուր տէր
« Յովհաննէս արքեպիսկոպոս, յաջորդ Յակոբոս վարդա-
« պետ, հանդերձ չորեսին այլ կառավարչօք վանիցն և
« ճեմարանին գրեցին առ սրբազան կաթողիկոսն և առ
« սրբազան խորհրդարանն՝ օրինակ գայս.

« Աստուածընտիր վեհապետ և խորհրդական սուրբ
« գլուխ Հայկազեան սեռի. Ամենողորմած Տէր մեր բա-
« րերար.

« Ամենախոնարհաբար անկեալ առաջի ահեղա-
« հրաշ Աթոռոյ ձերդ սրբազնագոյն մեծի տէրութեան՝
« քօղարկեալ դիմօք մատչիմք ի համբոյր սրբասնեալ
« երկնաչու մաքուր գարշապարացն յատկագոյն ձերինդ
« բազմախնամի։

« Եւ մածմամբ յերկիր՝ յառաջարկեմք զաղաչա-
« նաց խնդիրս յաղագս խղճալի մերազանց կողմանցս
« եղելոց, որք զանազան տարաբախտութեամբ և ազ-
« գի ազգի փոխադարձութեամբ անկայուն աշխարհի
« անյաջող դիպուածոց՝ կացեալ մնացեալ ցարդ ընդ
« խաւարամած տգիտութեամբ՝ վերերևին անվայելուչ
« ազգ յաչս համակ տեսողացն։

« Վասն որոյ՝ ազգասիրութեամբ ձերով գիջեալ ի
« հայցուածս պաղատանաց յետնեալ ծառայից ծառայի
« ձերոյ՝ շնորհել զշնորհասուն տիրացու Մեսրովբ Դաւ-
« թեան Թաղիադեանց վարժապետն կողմանցս եղելոց
« մերազանց առ ի հրահանգել, կրթել և ուսուցանել
« զմանկունսն Հայոց ջերմեռանդագոյն մեծի տէրու-
« թեան ձերոյ լուսաւորչածին ուղղափառ ժողովրդոցն։
« Զոր կատարելով ունի վեհափառութիւն ձեր միան-
« գամայն մխիթարել զհամակ Ազգս Հայոց բնակելոց ի
« Պարս և ի Հնդկաստան, որք միանգամ ազգասէր և

« հայրենասէր կամօք ցանկան և փափագին

«Զերդ բարձրագոյն վեհափառութեանն
ծառայից ծառայ
«Յովհաննէս եպիսկոպոս
Յետին միաբան սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի»։
յաջորդ Յակոբոս վարդապետ»։

« 1834 ամի Տեառն մարտ ամսոյ 16.
« ի վանս Ամենափրկչի որ ի նոր
Զուղայ։

« Զայսու ժամանակաւ նուաստութիւն մեր ի Տրփ-
« ղիս էր հրաւիրանօք Բարոն Ռոզենի ընդհանուր կու-
« սակալի յայսկոյս Կովկասու եղեալ նահանգացն. առ
« որ գրեցին սրբազան կաթուղիկոսն և սուրբ խորհր-
« դարան Աթոռոյն։ Մուացեալ խսկոյն զՏփղիս և զա-
« մենայն հեշտալիս նորա վասն հաստատակաց օգտի՝
« դարձ արարաք ի սուրբ Էջմիածին. և քահանայա-
« պետական կոնդակաւս վերահաստատեցաք ի վարդա-
« պետութիւն նոր Զուղայ։

« ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ.
« ՈՐՈՑ ԵՒ ՇՆՈՐՀՕՔ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
« և այլն.

« Ուրոյն ուրոյն գրութիւնք գերապատիւ սրբազան
« առաջնորդի ձերում, և ձեր սիրելութեան, թուեալ ի
« 16 մարտի անցելոյ, թէ առ մեզ և թէ առ սրբազան
« Սիւնհոդոսն սրբոյ Աթոռոյս, ամբողջ անարատ հա-
« սեալ առ մեզ, ուրախ արարին զմեզ յոյժ յոյժ ի վե-
« րայ Ազգասիրական փութոյ և եռանդեան ձերոյ. թէ
« յաղագս վերահաստատութեան Ամենափրկչեան ճե-
« մարանին ի Զուղայ, և թէ յաղագս նորահաստատու-
« թեան եկեղեցական արկեղաց ի պահպանութիւն
« տնանկաց Ազգիս Հայոց եղելոց ի Պարսկաստան։

« Գործք, արդարև Աստուածահաճոյք, ըստ ին-
« քեանց նախանձելիք, և մարդկան ընդունելիք, որ
« զտնօրինիչս միանգամայն և զյարատև կառավարիչս
« իւրեանց և յետ մահու անմահ առնեն յաւերժական
« պանծանօք։ Զիք ինչ գերագոյն ի կազմութեան մար-
« դոյ, քան զԱստուածատիպ նորա զհոգին. չիք ինչ այն-
« քան զարդարիչ հոգւոյ, քան զուսումն գիտութեան.
« և չիք ինչ այնքան վերագոյն խնամ, քան զայն՝ որ ի
« վերայ ուսման տանի և բարեզարդութեան հոգւոց։

« Արդ՝ դուք աստուածասէր դասք հոգևորակա-
« նաց և աշխարհականացդ մերազանց որովհետև զայս-
« պիսի մեծամեծ առաքինութեանց փոյթ յանձին կա-
« լայք, և զայսպիսի ջերմեռանդութիւն օգնելոյ տնանկ
« եղբարց ձերոց, զԱստուած ի վերուստ, և զմեզ աս-
« տուստ ուրախ արարիք, և ուրախակիցս ձեզ։ Ապա-
« քէն մեք յատուկ ի սէր լուսաւորչադաւան Հօտիդ
« մերոյ Քրիստոսիւ փրկելոյ, և ի ցոյց մեծի ուրախու-
« թեան սրտի մերոյ, ընդ այդ օրինակ ձեր ազգասի-
« րական մեծագործութիւն. ահա ըստ խնդրանաց ձե-
« րոց, զայրն պիտանի մեզ ըստ ամենայնի, զպատուելի
« վարժապետն արուեստից և զհոգևորականն գրագիր
« մեր՝ զՄեսրովբ Դաւթեան Թաղիադեանց, սիրով ար-
« ձակեալ առաքեցաք այդր, ըստ Աստուածատուր ի-
« մաստից և մակացութեանց իւրոց, կրթել և հրա-
« հանգել զմանկունս ձեր, յուսմունս պէսպէս գիտու-
« թեանց. զոր և յորդոր լինիմք սիրով ընունել, և ըստ
« ամենայնի շահեալ և մխիթար պահել՝ վասն ձերոյ
« բարութեան։

« Այլև քահանայապետական մեծ պարտաւորու-
« թեամբ մերով յորդոր լինիմք սիրելութեան ձերոյ,
« միշտ առաջի աչաց մտաց ունել ձեր զանշուշտ խրա-
« տս Փրկչին աշխարհի, և նմանել միշտ առն իմաստ-
« նոյ, որ նախ չափէ, կշռէ, և ապա չինէ զիւր տուն։
« Այնպէս հիմնաւոր առնել ձեր այս ազգասիրական

« գործառնութիւնս, զի մի ի վաղիւ ասիցեն, այրս այս,
« կամ արքս այսոքիկ սկսան շինել, և ոչ կարացին ի կա-
« տար հասուցանել։ Քան զոր և մեք աղօթս առնեմք առ
« Աստուած պսակիչն գործոց բարեաց, յաջողել զգործս
« ձեռաց և զհորհուրդս մտաց ձերոց ի բարին, և լնուլ
« և զս Ազգասէր և Աստուածասէր շնորհօք զհոգիս ձեր
« ամենեցուն։

« Ողջ լերուք. և շնորհք Տեառն մերոյ Յիսուսի
« Քրիստոսի եղիցի ընդ ձեզ և ընդ հոգւոյդ ձերում միշտ.
« ամէն։

« Կաթուղիկոս ամենայն Հայոց ՅՈՎՀԱՆՆԷՍ»

Համար 284. ի 8 Յունիս 1834 ամի
ի սուրբ կաթուղիկէ Էջմիածին։

« Յետ հասանելոյ ձեր անդր և ի կարգի դնելոյ
« զուսումնարանն, թէպէտ և կարողական գրեան ի ձե-
« ռին ունէաք բռնաբարել ի մեզ զամենայն օտար
« ուսմունս, այլ բնաւ ոչ ի կիր առաք զնոսին։ Շատ ե-
« զև մեզ ի շնորհացն Աստուծոյ ունել միայն զԱթոռն՝
« և ահա աւելի քան զերեսուն ի նախկին աշակերտաց
« մերոց՝ որք կրթէին ի վանս լատինահայոց՝ ինքնա-
« կամ ինքնայօժար դիմեցին առ մեզ։ Եւ գործն յաջո-
« ղէր Աստուծով ի սաստիկ սովու և սղութեան ժամա-
« նակին։ Տարեկան վաթսուն թուման վարձու, որ հա-
« զիւ բաւական ծառայից և ձիոց մերոց՝ յանձն առաք
« զպաշտօնն մինչև հասանիցի օգնականութիւն կտակա-
« բաժնին։ Կառավարիչք ամենայն հաւատարմութեամբ
« և գրեան թէ իւրաքանչիւր անխնայ զիւրն մատուցա-
« նելով՝ անցուցին զամն առաջին, և ոչինչ պատասխա-
« նի ընկալան ի Մադրասայ։

« Տէր Յովհաննէս սրբազան առաջնորդ մեր Ճգամբ
« և աշխատութեամբ հոգևորեաց և զամն երկրորդ.
« բայց և յայնժամ ոչ ընկալան զմխիթարութիւն ինչ ի

« Մաղբասայ՝ մինչև յերորդումն առ հասարակ թուլացան
« ի չքաւորութենէ ժամանակին, և սկսան պարսկօրէն քան
« ազգօրէն վարել ընդ մեզ։ Աւուրն պարէնի ապաստան
« եղեալ՝ զիմեցաք գրով առ լիակատար դեսպանն Ռու-
« սաց ի Պարս, գտաք զիրաւունս մեր ընդդէմ համախմ-
« բեալ չարախօսութեանց ժամանակին՝ և ի բաց գնա-
« ցաք»։...

Ինձ այնպէս կը թուի՝ թէ շփոթութիւն կայ կենսագրողի բանից և մեր հաւաքեալ տեղեկութեանց մէջ, քանզի կենսագրողն կ'ասէ թէ՝ Մեսրովբ 1830 ին Կալկաթայէն ելնելով՝ գնացել է ի Զուղա, և անդ վարժապետ եղել և ամուսնացել, և ապա Դավրէժ գնալով այնտեղ իւր կինը կորուսել։ Իսկ Մեսրովբ կ'ասէ, թէ 1831 թուին մայիս ամսուն վարժապետ կարգուեր է ի նոր Զուղա, և յուլիսի սկիզբները հիմնարկելով Ամենափրկչեան ճեմարանը «սկիզբն արարեալ է անուշակ ծառայութեան իւրոյ առ Ազգն», շարունակելով մինչև նոյն տարուայ նոյեմբեր ամիսը։ Ապա կը գրէ, ինչպէս ցոյց տուինք ի վերև «Հասաք ի ս. Էջմիածին, վկայեցաք օծութեան Տ. Յովհաննու Կարբեցւոյ, և յանձն առաք զգործ գլխաւոր վարժապետութեան և զսորհրդական գրագրութեան» և այլն։

Արդ՝ Յովհ. կաթուղիկոսի օծումն եղած է 1831 նոյեմբեր 8-ին, որում ներկայ գտնուել է Մեսրովբ, յորմէ կը հետևի՝ թէ հազիւ մի քանի ամիս մնալով ի նոր Զուղա, առանց ամուսնանալու գնացել է ուղղակի ի ս. Էջմիածին, որպէս զի կարենայ հասնիլ օծութեան. և ապա անդ ևս հազիւ մի տարի մնալով՝ կարելի է նոյն միջոցին գնացած լինի ի Դավրէժ, յորմէ վերստին դարձել է ի ս. Էջմիածին, ինքել է իւր գրագրութեան պայմանագիրն ի 16 յունիսի 1833 ամի։ Բայց դարձեալ երկար չ'տևելով սոյն պաշտօնի մէջ՝ 1834 ին գնացել է կրկին ի նոր Զուղա խնդրանօք Առաջնորդի տեղւոյն, որպէս տեսաք։

Եւ ահա այս տարին է՝ յորում Մեսրովբ մտել է ընդ լծով ամուսնութեան, Սէթեան Մկրտչի դստեր Թանգումի հետ. որովհետև եթէ Ամենափրկչեան ճեմարանի հիմնարկութեան տարին լինէր ըստ բանի կենսագրողին, յայնժամ ընծայատուր Առաջնորդն առ նորապսակեալս՝ պիտի լինէր ոչ թէ Յովհաննէս, այլ Կարապետ եպիսկոպոս, բայց Մեսրովբ բացայայտ յիշելով զանուն Կարապետի ի հիմնարկութեան ճեմարանին, կը հետևի ասել թէ Մեսրովբ ամուսնացաւ յաւուրս Յովհ. եպիսկոպոսի Փուրդ անուանելոյ՝ որ եկաց Առաջնորդ զկնի Կարապետ եպիսկոպոսի, և Յովհաննէս էր որ հրաւիրեց զՄեսրովբ ի Զուղա յամին 1834։

Իսկ թէ այս երկրորդ անգամին որչափ ժամանակ պաշտօն վարեց ի Զուղա, և ե՞րբ գնաց ի Դավրէժ, իւր գրուածոց մէջ բնաւ տեղեկութիւն չ'կայ, բայց բազմահմուտ պարոն Գալուստ Շերմազանեան բարեկամ մեր որ ի Տփղիս, պատմութեան այս մասը լուսաբանած է մեզ յամին 1875. ի հատուածս կենսագրութեան Տ. Սահակայ Սաղունեանց արքեպիսկոպոսին Ատրպատականի, զորս հրատարակեց Կ. Պոլսոյ Մասիս լրագրի մէջ՝ (թիւ 1759—15 նոյեմ. 1875.) յորում գրէ այսպէս.

«Մինչ այս մինչ այն, այսինքն 1836 ամին ժամանեցաւ Հնդկաստանէն Թէվրիզ (Դավրէժ) երևելի Հայկաբան Մեսրովբ Թաղիադեանցն, և միջնորդութեամբ Անգղիացւոց հիւպատոսի ընդունեց պաշտօն վարժապետութեան Անգղիական լեզուի՝ արքայազն Մելիք—Ղասում Միրզայի քովը։ Առ ժամանակ մը նորա մօտ մնալէն յետոյ, խնդրանօք քանի մի անձանց յանձնառու եղաւ Հայկաբանութեան դասատուութիւնն ուսումնարանի մէջը, տարեկան 60 թիւմէն ռոճկով։

« Եթէ Թաղիադեանցն ստացել էր ճշդութեամբ էս դուզնաքեայ ռոճիկը, նա երկար մինչոց կ'սպասաւորէր իւր ազգի մանկտեացը. բայց աւաղելով ասեմ, որ շատ անգամ ռոճիկը յամենալոյ համար, կը պարտաւո-

ըէը վոռ առնուլ իւր ծանօթներէն գրամ, օրական պարէնը հայթայթել։

«Նրան Լ՚ս վշտացրեց իւր սիրելի Թանգում ամուսնոյ մահն, որ երկունքի ժամանակը վախճանուեցաւ. և այնուհետև նա յաճախ կ՚ասէր. «Սարսափելի մտայուզութիւն կ՚զգամ ուսումնարանը յաճախելոյս ժամանակն, որովհետև պարտաւոր եմ իմ Թանգ Թանգումի գերեզմանի մօտովն անցանել»։

«Սորա գերեզմանաքարն է սև մարմարիոն, որու հանքը շատերը որոնեցին, չը կարողացան գտնել Թէվրիզի չորս կողմը։

Իսկ տապանագիրն է այսպէս.

Թանգ Մեսրովբայ Թաղիադեանց
Օտար յիմոց Հայրենեաց
Ի ծնանել զմարդ յաշխարհ
Ծնայ ինքնին առ Աստուած.
1837 ամի 18 Նոյեմբերի։ *)

«Մի և նոյն ժամանակն՝ այսինքն 1837 ամի՝ Եկաւ Աղուլիսէն և արդիւնական Պօղոս վարդապետն Ղարագաղցի անուանեալ, վարժապետն նոյն իսկ Թաղիադեանցի և բազմաց և այլոց և իմ, և մնաց Թէվրիզ ուրեն ամսաչափ և կ՚ուսուցանէր արտաքոյ ուսումնարանին տասնաչափ պատանիներ քերականութիւն և Ճարտասանութիւն բայց և սա ստիպեալ ի հակառակու-

*) Այս տապանագիրն այլք այսպէս կ՚աւանդեն, ինչպէս և ես յամին 1865 ընդօրինակել եմ ի Տփղիս.

Թանգ Մեսրովբայ Թաղիադեանց
Օտար յիւրոց Հայրենեաց,
Ի ծնանել մարդ յաշխարհ
Ինքն ծնաւ առ Աստուած։

(Անթուական) Ց. Բ. Մ.

թենէ վերոյիշեալ Ղազար վարդապետի, վերադարձաւ Աղուլիս. և հետևաբար այսինքն 1838 ամի սկիզբներին Թաղիադեանցն և ս թողեց Թէվրիզը և գնաց սուրբ Էջմիածին»։

Պարոն Գ. Շերմազանի այս գրածէն պարզապէս կը յայտնուի, թէ Մեսրովբ շուրջ երկու տարի մնացել է ի նոր Ջուղա և 1836 ին իւր Թանգումի կնոջ հետ գնացել է ի Դավրէժ, և այն տեղէն 1838 ի սկիզբներն յ՚Էջմիածին, կամ անցնելով Էջմիածնէն՝ փութացել ու հասել է ի Կոստանդնուպօլիս, զորմէ ի ստորև։

---

8) Մեսրովբայ ի Կ. Պոլիս ժամանելուն և ուղղակի ի Պատրիարքարան գնալուն և այլ պարագաներն շփոթեալ են այս կենսագրութեան մէջ և այլայլեալ, զոր կը ջանամք ուղղել։

Մեսրովբ կը ժամանէ ի Կ. Պոլիս յամին 1838 Մայիս ամսուն, որ ատեն Պատրիարք էր Տ. Ստեփանոս Զաքարեան արքեպիսկոպոսն Նիկոմիդիոյ և վանահայր Աբմաշու, վերաձայնեալն Աղաւնի՝ իւր հեզահոգի բնաւորութեան համար, և ոչ թէ Յակոբոս՝ որ յաջորդեց Ստեփանոսի յամին 1839 մարտ 13 ին։ Սխալ է նաև այն՝ թէ ի Կ. Պոլիս ժամանելուն՝ անմիջապէս Պատրիարքարան գնացած է և ասպնջականութիւն խնդրած. այլ իջևանել է նախ՝ ի Ջիւմպիւլլի անուն պանդոկը (խանը,) ինչպէս մինչև ցարդ այդ պանդոկն իջևան է Ռուսատանցի և Պարսկաստանցի վաճառականաց, և ապա թերևս գնացել է և ի Պատրիարքարան տեսութեան ազագաւ։

Մեսրովբ ինքն լաւ կը բացատրէ այս կէտը՝ իւր Թուրթակ Թաղիադեանց անուն տաղաչափութեան յառաջաբանի մէջ, (տպագրեալ ի Կալկաթա 1847.) այսպէս.

«Ցամի տեառն 1838 հասեալ ի քաղաքն Կոս-
«տանդիանոսի՝ օթ արարի ի Սմբուլլի Խան, ուր եղա-

« նակն անձրևուտ, օտարութիւնն խորին, և ներքին
« տխրութիւն ոգւոյ իմոյ վհատէին զիս արդեօք, եթէ
« չէր լեալ ընդիս այս թուղթակ, զոնէ երազածոյ երգով
« այսուիկ զբաղեցուցանել և ամոքել զմիտս»։

Եւ ի սկիզբն տաղին ևս այսպէս կ'երգէ.

« Օր հոլովի հինգերորդ,
Յոր ես պանդուխտ ի Պոլիս,
Սմբուլիվան անծանօթ
Վաստակաբեկ կամ հողիս»։

Իսկ թէ՝ պատրիարքարանի մէջ տեսել է զՊատրիարք Հայրն (Տ. Ստեփանոս) թէ յայլուր, լսեմք նոյն ինքն Թաղիադեանէ, որ իւր գուարճախօսութեամբ այսպէս կը պատմէ Ազգասէր լրագրի մէջ, թիւ 5. Ա. հատոր 1845 ամին.

« Յօրագրէ միոյ 1838 ամի Տեառն»։

« Երբ հասայ ի Պոլիս՝ ութ օրէն յետ Համբարձման տօն էր. *) և թէպէտ մի կողմից սաստիկ մտածողութեան մէջ էի, որ քիստակս դպրոցի տղոց ձեռք հասած ճնճղւոյ բունի պէս դադարիէր, բայց միւս կողմից քիթս այնքան էր բարձրացել, որ աչքերս համարեա թէ նորանից արտաքոյ ուրիշ առարկայ չէր տեսնում. սակայն դեռ ևս գնացի պատրիարքարանն մեր, որ ինձ մին նշանց տամ Ս. Պատրիարքին։ Բայց վերարի—Կիրակոս էլայ, յորժամ լսեցի թէ սրբազանն քաղաքից դուրս մերձ 6 մղոնօք հեռի Փրկիչ ասացեալ Հայոց հիւանդանոցն էր գնացել։ **) Պետի ես

*) Ասել յայտնի կը լինի՝ որ Մեսրոպը մայիս ամսոյ մէջ հասել է ի Պոլիս։

**) Ի տօնի Համբարձման Տեառն հանդիսաւոր տաբեղարձի յիշատակը կը կատարուի հիմնարկութեան և շինութեան Ազգային հիւանդանոցիս, ի Փրկչատաղաղ Յարութիւն Ամիրայէ Պէզէեան, որոյ յիշատակին օրհնութեամբ եղիցի։

Մատենադարան

« այնքան ճանապարհն ոտով գնալի՝ որն որ երբեք
« հաճելի չէր ինձ՝ ուղղորդն ասեմ քեզ. անձարն կուտի
« բանջարն. քանի գնացի քիթս սկսաւ ցաւանալ՝ դոր
« մին փչած տիկ ծակես մախաթովի՝ որ վուրքն դուրս
« գայ։ Տեղն հասանելէս գրեթէ բոլոր վաստակս մոռա-
« ցայ, ողորմութեամբն Աստուծոյ այնքան ազգիս բազ-
« մութիւն մի տեղ ժողովուած տեսանելով. կամեցայ
« մին նի գնամ ժամ, բայց բարեբաղտ ի՝ որ կողերս
« չվիրաւորեցան. պատճառ ամբոխն այնքան մեծ էր,
« ելևմուտքն այնքան անդադար, և ես այնպէս մին
« նորաձև հրէշի, Եւրոպացի զգեստով և Պարսիկ գու-
« դակով, որ խելք արարի շուտով յետ կրեղվիլ։ Ժամն
« աւարտած էր, և այս բազմութիւն միայն հետևակ
« ուխտաւորք են։

« Պատրիարքն՝ մեր երևելի երևելի Ամիրաներով
« և այլ պատուաւոր անձամբք նախաճաշի սեղանումն
« էր, վեր ելի, մին օդապարկաձև գուտակով քահա-
« նայի հանդիպեցայ, և հարցի, «ո՞ւր է սրբազան
« պատրիարքն».—«Ի՞նչ կընես» ասաց նա, պատ-
« րիարքն հոն նստած նախաճաշիկ կընէ
« կոր»։ Ասացի «բա՞ ունիմ նորա հետ». «հրա-
« մեցիր, ասաց, հրամանքնիդ ալ նախա-
« ճաշը էր»։ «Զէ, չնորհակալեմ, ասացի, ես
« միայն սրբազանի տեսութեան համար
« եկի տեղս»։ Ասացի իրաւի. բայց շատ փոշիմա-
« նեցայ, քանզի այնքան ճանապարհ անօթի գնալով
« այնքան ի քաղցել, որ աղքնիս ծափին տալման։
« Յոյս ունէի մին անգամ ևս հրաւիրէր, ուստի և մըտ-
« քումս դրի, որ սիրով ընդունիմ, բայց սղալեցայ. քան-
« զի մին զարդարած սենեակ ցոյց տալէն յետ՝ անե-

« ըևուԹացաւ լմ սրբակրօն հիւրընկալն, և ես մնացի
« Մեղասայ պէս սովամահ՝ ի մէջ այնքան առատուԹեան։
« Արժէր ինձ այս դիպուածն. քանզի օտար տեղ նազ
« ու դուզ անելոյս այս առաջինն չէր։ Ինչ և լցէ գլուխս
« ուտած նստայ մին սիրուն կառաւատի (բանքի) վե-
« րայ, և եԹէ տեղւոյ վայելչուԹիւնն և հանդիսի նո-
« րուԹիւնն չգրաւէին լմ ուշադրուԹիւնս՝ քաղցն պիտի
« աւելի ևս նեղէր զիս։

« ԵրԹ և եկն շատ խիտ առ խիտ էր, հասարակաց
« զգեստն՝ միաձև գուտականին կոսոակ, և մաշկինն կար-
« միր. այս կերպ առարկայք շատ տեսնվեցան, յորոց
« մինն, մին պատուական ծերունի, լմ սենեկի դուռն կի-
« սաբաց առնելով դէպ ի ներս ձկլուկ արար,—Հրա-
« մայիր, ասացի, հայր... եկաւ. միայն հասակին
« պատիւ տալով՝ կիսատ վեր կացայ կանգնեցայ և ձե-
« ռօք տեղ նշանակելով՝ հրաւիրեցի որ նստի. որպէս
« ԹէՀ ես էի տան տէր։ Հեզահոգին շնորհակալի պէս
« նշանց տալով իւրն՝ նստաւ։ Մտքումս ասացի կարելի
« է որ սա սրբազան պատրիարքի Քասա վարդա-
« ռամ, քուջա Բէգօգարամներից լինի, վասն
« որոյ վոխանակ տեղիք տալոյ հեզահոգւոյն որ ինքն
« սկսէր, ես ինքնին յառաջացայ։ Լաւ էր որ նա կուշտ
« էր և ես անօԹի. ապա ԹէՀ ոչ՝ չգիտեմ ամպարտա-
« ւանուԹիւնս մինչև երկնից քանի՞ աստիճանն պիտի
« բարձրանէր. Այսօր մեծ տօնայ տեղս մեր
« Ազգի համար, ասացի։ Հրամեր ես, ասաց,
« սուրբ Փրկիչ հիւանդանոցին տարեգլուխ
« նաւակատիքն է։ Հրամանքդ էջմիածին
« տեսի՞լ ես, հարցի։ Հրամեր ես, ասաց, ու հոն
« կեցեր եմ մին ժամանակ. Ի՞նչպէս այ ծե-
« ռունազարդ Եփրեմ հրաժարեալ հայրն։
« Ողջոյն և օրհնուԹիւն ունի, ասացի, բայց
« ներկայ շատայ ընկել։

« Այս ասուԹեանս ժամանակում այնպիսի մի

« տխուր երես շնեցի, որպէս մին օրիորդ իւր դեղ ըմ-
« պելու ժամանակումն կը շնի. և նա համարեց որ
« իրաւի մեծ կասկածուԹիւն պիտի լինէր սրբազնա-
« սուրբ կաԹուղիկոսի և լմ մէջ։ Ծոցիցն հանեց մին
« ոսկեզրած ԹուԹունաման, չգիտեմ մէջն ևս նոյն էր,
« ԹէՀ ոչ. և բերաւ ինձ մօտ՝ հրաւիրելով որ մին ալ-
« ղունց ԹուԹուն *) քաշեմ։

« ԹէՀ սուկ դիպուած կը համարես այս բանս, և
« ԹէՀ յատուկ դիտմամբ արարած, տվածայ կամացդ.
« բայց արդարն այս է, որ ես երբ որ մատումն եսլիս-
« կոպոսական մատանին տեսայ՝ ծոցն տրիժան մտած
« պարտիզպանի պէս տեղիցս վեր թռայ, կանգնեցի.
« միտքս սկսում էր մոլորիլ, ընկերական զրուցատրու-
« ԹենԷից յեզուս կապ կերաւ, քարէ պատկերի պէս մին
« վոքը անշարժ կացայ, բայց յետոյ ամեն խելք, եԹէՀ
« որ ինչ և էր, գլուխս հաւաքեցի, և ասացի. Ցէր,
« պանդուխտ մարդն որ կայ՝ կոյրայ,
« ես եԹէՀ մինչ ի կէտս հրամանոց չեմ
« ճանաչել, ներեր, և արդարն խոստովանիր
« դու ով ես։ Պատասխանեց հեզահոգին. ԹէՀ հոս
« մարդուն պակաս ըլլալուն համար՝ զիս
« պատրիարգ կը կոչեն։ Պատրիարգ. որ ոք ամպի որոտ-
« մունք, ԹնդանօԹաց՝ արձակմունքն ու երկրաշարժա-
« կան ճայԹճայԹմունք այսպէս ուժգին չէ Թուացել
« ինձ՝ որպէս պատրիարգ բառս։

« Մարդ՝ որից որ ես ակնկալի որ ոք պաշտօնիւ
« դատարկ քսակս լցնել, այնքան խոնարհ, հեզ, և ճըշ-
« մարիտ հոգւով աղքատ երևաց, մինչ ես ամիսոսացի
« որ փող չունի հանեմ իւրն տամ։ Այս բանումս ԹէՀ նա
« ԹէՀ ես հաւասար էինք. նա անընչասէր և հասարա-
« կաց օգնական կալովն՝ կարծեմ մին սև փող չունէր,
« և ես դատարկ պատելով և ինչ ունի շռայլաբար մըս-

*) ՓԹախոտ։

«խելով, մին սև վոզ չունի։ Յոյսն միայն էր մեր «ունեցածն, յորմէ միս լերան չափ նա ինձ շնորհեց, «և երկուքի չափ՝ ես նորան, մինչև բաժանվեցաք, և «մնաց ինձ սեվիհական իմ կամակոր անութիւնս։»

Մեսրովբ մի տարի ժամանակաւ Կ. Պոլսում մնալով, մէկ մեջոց՝ երբև դաստիարակ հաստատուեր է ի տան Սերվէրեան Յովհաննէս Ամիրայի կեսարացւոյ՝ (որ վեսայացեալ էր Արքունի Ճարտարապետ Գրիգոր Ամիրայի Պալեան)։

Մի գիշեր իմ բարեյիշատակ հայրս Կարապետ Աղա Մկրեան հիւր կը լինի Սերվերեան Ամիրայի տանը, և այնտեղ տեսակից և խօսակից կը լինի Մ. Թաղիագեանի հետ։ Կը պատմէր լուսահոգին թէ որքան զուարճախօս և պատրաստաբան էր նա և թէ ոբպիսի հետաքրքրութեամբ խնդրել է լսել և ի գիր առնուլ Պարտիզակցի նոր նահատակին պատմութիւնը՝ երանելի Յովհաննէս Ստեփանոսեան Փիրիկնեանց քսանամեայ գեղեցիկ երիտասարդին, որ հաւատոյ համար բարձրագոյն հրամանաւ ի մահ դատապարտեցաւ, և ի Պարտիզակ իւր հայրենեաց մէջ իւր ծնողաց աչքին առջև ի կախաղան ելաւ, յամին 1838. ապրիլ 30. որոյ համար և իմ հայրս ամբաստանել էին բազմութիւն մոլեռանդից Թուրք գիւղացւոց, երբև խրատիչ և յորդորիչ հաստատուն կալ ի քրիստոնէութեան, և հազիւ ազատուած էր շնորհիւ նոյն Տ. Ստեփանոս սրբազան Պատրիարքի և երևելեաց ազգիս։

Նոյն Սերվերեան Ամիրայի տան վարժապետ եղած ատեն՝ Մեսրովբ մի ոտանաւորը գրած է, որ տպուած է Ազգասէր լրագրի 1846 տարուոյ 56 թուոյն 32 երեսը, և է այս.

«Կախեալ զորմոյ առանին ուսումնարանի Յովհաննէս Ամիրայի Գէորգեան Կեսարացւոյ Ասպետատիւռ Ճարտարապետի արքունեացն Կ. Պոլսոյ, ի Ղուզղունճուխ։

Մ. Դ. Թ.

«Ոսկեթևեան Սէր Աստուածեան
Դու որ լնուս զամենայն,
Է՛ջ և վառեա զհոգիս մեր
Բոցով անշէջ եռանդեան։
«Որ ի սիզբան Արարչութեան
Խառնեցար լոյս ընդ մթան,
Յանկերպարան ճուլոյ նիւթոց
Զաշխարհ ծնանիլ գեղաչուն։
«Որ յառաքեալս ի վերնատան
Հեղար շնորհ եօթնարփեան,
Խրժիցն յուռկան քարոզութեան
Որսալ զաշխարհս ամենայն։
«Իսկ արդ Աստուած իմաստութեան
Ցայս խոնարհեաց վարժարան,
Ի գիտութիւն Ճշմարտութեան
Կրթել զոգիս մանկական։
«Զաշխարհ խառով՝ կապես սիրով
Խաղաղասէր տան նրման,
Եւ բիւր մարմնոց մի սիրտ տալով
Հաշտ յօրինես զամենայն։
«Եւ մեր Աստուած խաղաղութեան,
Բարձ զկրառով խորդութեան,
Զի միշտ սիրով և միաբան
Սրբիցուք քեզ օթարան։
«Բերսէլեէլ զհնոյ ուխտն
Ճարտարապետ խորանին,
Իմաստութեամբ զարդարեցեր
Զբստուեր գծել Ճշմարտին։
«Իսկ մեզ այսօր փոխան նորին
Ճարտարապետ զարքունին
Տաս Յովհաննէս վեհ պայազատ,
Թեզ տաճարել զմեր հոգին։
«Պահպանեսցէ ըզնա Աչ Քո
Փառաց ի փառս արաստոյ,

Կեանքս վարել յարգուարձ։
Ազգին և քեզ բարեհաճ։
Ամէն։

Այլ թէ Մեսրովբայ հետ ինչու խռովեցաւ սրբազան պատրիարքն, որ Յակոբոս արքեպիսկոպոսն էր յայնժամ յաջորդելով Տ. Ստեփանոսի. և թէ ընդէր պարտաւորեցաւ Մեսրովբ փախչիլ ի Կ. Պոլսոյ, ոչ կենսագրողն կը յայտնէ, և ոչ Մեսրովբայ գրուածոց մէջ մի նշանախեց կայ։

Ես ինքնս բազումս հետազօտեցի ի Կ. Պոլիս, և զայս և եթէ կարացի իմանալ, թէ Մեսրովբ բողոքականութեան (որ այն ժամանակ Ֆարմասոնութիւն կ'ասուէր) կասկած յարուցել է իւր վերայ, վասն որոյ ստիպուել է չուել մայրաքաղաքէն։

Անկարելի եղաւ մանրամասն պարագաներով ստուգել զայս, և ուստի մթութեան մէջ պիտի մնար այս կէտը իմ ներկայ աշխատութեան մէջ, եթէ դիպուածը չ'օգնէր ինձ նոր տեղեկութիւններ ընձեռել։

Ներկայ տարւոյս ապրիլ 19—21 են, որոշուած էր կաթողիկոսական ընտրութիւն կատարուիլ ի ս. Էջմիածին, որոյ մասնակցելու համար՝ Թուրքիոյ Հայոց Ազգային Ժողովոյ պատրաստած եռանուն ցանկը՝ Համազգային ընտրողական ժողովոյն հաղորդելու պաշտօնն ինձ յանձնուեցաւ Ազգային Ժողովոյ ատենապետաց դիւանի կողմանէ, երթայ ի ս. Էջմիածին պաշտօնական թղթովք, և բացատրել Թուրքիոյ Հայոց կրաւունքն և եռանուն ցանկով մասնակցելու որոշման պատճառներն ըստ 1884-ի եղանակին, որով սրբազան Ներսէս վարժապետեան ազգասէր պատրիարքն ընտրուեցաւ. բայց նա ապա խսպառ հրաժարեցաւ թէ իւր դժընդակ հիւանդութեան և թէ այլ պատճառաւ, որ և իջոյց գինքն ի գերեզման հոկտեմբեր 26 են, ի խոր սուգ ընդհանուր Ազգին։

Յետ բազում բանից՝ այս պաշտօնն յանձն առնուլ պարտաւորեցայ ըստ թախանձանաց ատենապետաց Դիւանին և 1885 Ապրիլ 6 են ուղևորեցայ ի Կ. Պոլսոյ, և հասի ի ս. Էջմիածին ի 15-ն ամսոյն, ուր և յետ ոչ սակաւ անախորժ դարձուածոց ի կողմանէ հոգևորականաց ոմանց՝ ընդունուեցաւ Թուրքիոյ Հայոց եռանուն ցանկը։

Թողլով այլուսմ առմի՝ սոյն ընտրական գործողութեան և Էջմիածնի վարչական և վանական ընթացից իմ վերայ ըրած տպաւորութեան վերայ խորհրդածել և գրել, (քանզի և ոչ իսկ ներկա գործոյս կը վերաբերի,) կը փութամ ասել, թէ երբ Էջմիածնէն վերադարձայ յԵրևան, իմ սիրելի հոգեծանօթ պարոն Աբգար Գուլամիրեանցի օրհնեալ տանը հիւրընկալեցայ։ Անդանօր մի քանի բարեկամաց ներկայութեան խօսք եղաւ բարեյիշատակ Թաղիադեանի Երևանի մէջ ծնած լինելուն և նորա վաստակոց և գործոց վերայ. պ. Գուլամիրեանց գոհութեամբ յայտնեց թէ՝ իւր մօտ կը գտնուին մի քանի ինքնագիր նամակներն Թաղիադեանցի։ Անհամբեր փափագով խնդրեցի տեսնել զանոնք. և ով զարմանացս, ոչ միայն արդարև ինքնաձեռագիր էին այդ գրութիւնքն, այլ նաև նորանից միովն կը պարզուէր իմ աչաց առջև պատճառն Մեսրովբայ ի փախուստ դառնալուն ի Կ. Պոլսոյ։ Շնորհակալութիւն մեծ՝ իմ ազնիւ բարեկամիս, որ իսկոյն թոյլ տուեց ինձ ընդօրինակել զայնս, և զորս այժմ կը ներկայացուցեմ ընթերցասիրաց։

« ԳԵՐԱԶՆԻՒ ԱՂԱՅ ԱՆԴՐԻԱՍ ՈՒՌՊԷԼԵԱՆՑ

Ցանկալի Եղբայր.

« Յետ ճանապարհորդելոյ զձեզ ի ցանկալի աշ-

« խարՀ Հայրենեաց, վերադարձայ ի սենեակ անդր իմ
« ի փարթամ փաշա-խան, և ննջեցայ զքուն Հոգոց և
« տրտմութեան միանգամայն։ Ի մէջ թանձր թմրու-
« թեան իմոյ լուայ զբախիւն դրան սենեկի իմոյ,
« բացի և ահա Մարգար ժամահար պատրիարգի եմուտ
« ի ներքս, և բանիւ փոխանորդին հրաւիրեաց զիս ի
« պատրիարգարանն Պոլսոյ։

« Ժամ էր մեռասանելորդ՝ այլ ես Հնազանդեցայ
« նմա իբրև իմ ազգի պատրիարգի և Հոր. յարեայ ա-
« մենայն միամտութեամբ և չոգայ անդր։ Իբրև յան-
« դիման եղէ փոխանորդին, յարտաքին երեսս մեծ սէր
« և ընդունելութիւն կեղծաւորեալ՝ Հրամայեաց ածել
« մեզ սուրջ. և յաւել ևս յասել. «թէ յառաջիկայ ա-
« ւուր հինգշաբթի ժողով լինի վարժապետաց, յորոց և
« դու մի, խնդրանօք ազգին պարտիս ներկայ գտանիլ,
« և ընդունիլ զբաւականութիւն քոյ»։

« Առ այս շնորհակալ մեծ եղէ զնմանէ, և համ-
« բուրեալ զաջն նորա յեկեղեցի Աստուածածնի, և մա-
« տուցի Աստուծոյ զիմ ամենաջերմեռանդ և զմիամիտ
« գոհութիւն։ Այլ այն ինչ ազօթք ի բերան էին, եկին
« ուրթն ժամակոչք և հրաւիրեցին զիս տեսանել զմի ոմն
« ի վարդապետաց, կեղծելով թէ ունիցի բանս ինչ խո-
« սելոյ ընդ իս։ Իբրև մերձ հասուցին ի դուռն խաւա-
« բային բանտին՝ բացեալ զայն ընկեցին զիս ի ներքս,
« և աղխեցին զայն նգօք հգօրօք և կղբօք անլուծա-
« նելեօք, ուրանօր զգիշերն ողջոյն անցուցի անսուաղ
« և ցրտահար, մերձ ի մահ։

« Ունելով առ ձեռն պատրաստ կապարեայ գրիչ
« և թուղթ, ուրթն տոմսակս գրեցի զանազան լեզուօք
« առ զանազան կարծեցեալ բարեկամս։ Այլ պահք
« պատրիարգին կալեալ զայն՝ զոր գիտացին ընթեր-
« ցան, և զոր ոչն գիտացին, առաքեցին կոչեցին զմար-
« գիկն առ որ և գրեալքն էին, և ի նոցանէ իմացան
« զմիտս գրելոցն ամենեցուն, որ էր. թէ ով ոք ընթեռ-

« նուցու՝ դիւանի դեսպանութեան ամենաողորմած կայ-
« սեր մերոյ ազգ արասցէ, թէ Մեսրովբ բանտարկեալ
« եցէ ի պատրիարգէ Հայոց։

« Ընդ լուսանալ առաւօտուն, Հանին զիս ի բան-
« տէ անտի, և մեծաւ աղերսանօք ի բաց արձակեցին
« զիս։

« Անցագիր տէրութեանն, կայսերական կնքով էր
« ի ձեռին իմում, ի ժամ բանտարկութեան իմոյ, և
« Հնար էր տանել զնոյն և արկանել ի դիւան անդր,
« սասանիս բողոքելով զպատրիարգէն, այլ աղայք Բե-
« բովի, Մկրտիչ և Գէորգ մեր, կարի և կարի խնդրա-
« նօք աղաչեցին զիս ներողամիտ լինել, զի մի ազգն
« տուժեսցէ՝ և անուն պատրիարգին չարիս ինչ չին-
« քեան կրեսցէ։ Լուայ և սոցա։

« Վրէժխնդիր չեղէ, սէր, և զգիրս Ամերիկացւոց
« վաճառելն արգելայ. և չ պնդել նոցա զիս առ այն,
« միանգամայն թողեալ զգործ նոցա, և զանուն, և
« Կոստանդնուպոլիս միանգամայն, յերեկ իջի ի Տրա-
« պիզոն և գտեալ զի Իսմայէլ բէկ չափաբ, գայր յան-
« կարծ այդր, զայս թուղթ ծանօթութեան հաճեալով
« գրեցի առ ձեզ։

« Յուսացեալ առ ի ՀԼՆՉ միխիթարական ինչ պատաս-
« խանւոյ, զոր յուսամ գտանել ի ժամանել իմում յԷր-
« զրում։

« Աստղաբաշխութիւնն սկսաւ տպագրել։

Խոնարհ ծառայ

Մ. Դ. Թաղիադեան»։

Ի Տրապիզոն

1839 մայիսի 16.

Ինչպէս կը տեսնուի՝ սոյն նամակն փոքր ինչ կը պարզէ խնդիրը, բայց դարձեալ մանրամասնութենէ զուրկ թողլով, թէ որչափ ատեն մնացած է Սերվե-

բեանց տան, և ապա մինչ առեթով գնացած Ամերիկացի միսիոնարաց մօտ, սակայն կը կարծուի թէ՝ մի քանի ամիսներ միայն պաշտօն վարած է Սերվերեանց տանը. և ապա չքաւոր մնալով՝ երբև Անգլիագէտ դիմել է Ամերիկացի Միսիոնարաց՝ որք գիրք վաճառելու պաշտօն տուել են նմա, որ Աստուածաշունչ պէտք է լինի, (անճոռնի մի աշխարհաբառի թարգմանուած,) քանզի այն ատեն ուրիշ տեսակ գրքեր չունէին սոքա։

Յակոբոս սրբազան՝ դեռ նոր պատրիարք եղած, առաջին գործունէութիւն համարած էր Երեւան՝ Ամերիկացի Միսիոնարաց բարև տուողներն իսկ՝ ի կրօնս կասկածելի դատելով՝ անմիջապէս աքսոր ուղարկել, ինչպէս որ Մեսրովբէ քիչ օր առաջ՝ ապրիլ 9-ին աքսորել էր զտէր Գէորգ Արծրունի պատուական քահանայն Խասգիւղի Հայոց, երբև խմորեալ յաղանդ Ամերիկացւոց՝ մատնութեամբ ոմանց, որ և հինգ ամիսէ վերջ վերադարձոյց՝ վերահասու լինելով նորա անմեղութեան, այսպէս նաև զՓիզիկայ Պօղոս վարժապետն գիտնական. Լայլն։

Այս կասկածանքն հետզհետէ այն աստիճանի հասած էր ի Կ. Պոլիս, որ Աւետարանէն մի խօսք բերան առնողին, և կամ կարելի եղածին չափ մաքուր հայերէն խօսողին, և մինչև իսկ այո և ոչ բառերը գործածողներին, կասկածելի էին համարուում և երբև բողոքական նկատուում։ Այս ընթացք՝ կասկած, աքսոր և հալածանք, մեծ վնաս պատճառեց Ազգին մանաւանդ Մատթէոս պատրիարքի (ապա կաթողիկոսի) ժամանակ, յորում խումբ մի Հայք բաժնուեցան ազգէն, և առանձին ժողովրդապետութիւն կազմեցին։

Այսպէս նաև Թաղիադեանց Լս այդ հոսանքի մէջ ընկել էր, և առանց հարցուփորձի բանտարկուել. եթէ յարեալ լինէր նա կրօնիս միսիոնարաց հետ, իւր բարեկամին գրած նամակին մէջ իւր գաղափարը անշուշտ կը յայտնէր. բայց՝ «միանգամայն Թողի զգործ նոցա և

զանուն» ասելով՝ առ հարկի ամերիկացւոց դիմած լինելն կը հասկացուի, որով հաւանական է կարծել, թէ տեսնելով որ Կ. Պոլսոյ ազգայնոց մէջ իւր արժանիքը ճանչող չկայ և ոչ իսկ մխիթարող, քանզի լեզուագիտութիւնն՝ մանաւանդ Անգլիերէնի հմտութիւնն, բաւական էին ըստ այն ժամանակի ըմբռնման, զինքը բոլորովին կասկածելի համարել – դիմել է Ամերիկացւոց իւր ապրուստն հոգալու համար, ըստ որում և նոքա տակաւին երբեմն գոյնն երևան չէին հանած։

Կ'երևի թէ Մեսրովբայ բարեկամն, վերոյիշեալ պարոն Անդրէաս Ուռսլելեանն Լս նոյն միջոցին Կ. Պոլիս եկած, և Մեսրովբէ առաջ մեկնած է յիւր հայրենիս. որում երբև «Ողջ—երթ» նուիրել է Մեսրովբ հետևեալ գեղեցիկ ոտանաւորն, զոր դարձեալ պ. Աբգար Գուլամիրեանցի մօտ տեսայ ինքնագիր, և զոր աստ դրոշմել պատշաճ համարեցայ։

« Բոլորեցէք նոր հարսունք
Դուք, նորահաս աղջիկունք,
Ծաղկունս վառունս ի դաշտաց
Պսակ հիւսել պարծանաց.
Եւ կապեցէք փոխ առ փոխ
Անդրէասայ ի գլուխ։

« Որ արդ ի խորին մարգից Հեսպերեան,
Ի վերայ անհուն ալեաց Ատլանդեան,
Անփոյթ ամենայն անձին վտանգից,
Դէմ եդեալ յուսով առ իւր հայրենիս։
Որպէս հողագունդ ի թաւալ իւրում,
Որ մերձ յերեսաց գերազօր Արփւոյն,
Դառնայ վերստին ի ծայր և ի ծաղ,
Լուսել աշխարհի զառաւօտ չքնաղ.
Սոյնպէս ծագեցաւ և մեզ Անդրէաս,
Պայծառ առաւօտ սիրոյ և շնորհաց.

Եւ Հառագայթեաց վՀետ մինչեւ,
Գեր քան զոր լեզու պատմել ոչ կարէ։
Եւ զազդեցութիւնս իւր կենդանարար,
Ի սառնամանիս սրտիս շողշողեալ,
Արդ թողու զմեզ յայս վայր հեծութեան
Գնայ նազելով յերկիր մշտերան։

« Բոն այսպիսոյ վայելուչ
Զիցէ համբոյր սրտառուչ.
Հարսունք ի փառս Աստուծոյ,
Առ յիշատակ Հեր սիրոյ,
Շրթանց սորա չերմեռանդ
Տուք ըզ համբոյր խանդակաթ։

« Ի ծով արծաթի կրծոց այնորիկ
Զոր աստի անտի ստինքն անուշիկ,
Թմբեն ի թագուստ սիրոյն լոգարան,
Թանալ զիւր գլուխ ի ջուր զովութեան.
Ա՛, երջանիկ օր, յորում սա նմա,
Եւ նա սմա զսիրտ կաթոգին բանայ,
Երջանիկ յայնժամ զերկոսին կարդան,
Երկինք և երկիր, և որդիք մարդկան։

« Կոյս գեղանի և վսեմ,
Զի Հշմարիտ զոր գրեմ.
Ուրեմն զնա կաթոգնի
Բուռն սեղմեա ի սրտի,
Եւ զգայցես առաւել
Քան զոր իշխէ ոք գրել.

« Հնպա մաղթեցէք որ ծով ծիրանի.
Բացցէ սրմա զիւր՝ ծոց անդամանդի.
Եւ երբև զդից ծնունդ ինչ գողտրիկ,
Ածցէ համբուրիւ ի գրկաց առ գիրկ։
Փթթեսցին սմա անթառամ ծաղկունք,
Շուշանք ի շնորհս ելցեն վառվառունք,

Ուր ոտից սորա քայլք ժամանեսցեն,
Բարիք Բարձրելոյն ընդ առաջ ելցեն։

« Ամէն, ամէն, Անդրէաս,
Աստուած ընդ քեզ ողջ երթաս.
Սակայն զուիտ մեր ահաւոր
Եւ զխանդաղատ զայս համբոյր,
Որով զքոյդ հրաժար—
Կնքեցաք—մի մոռանար»։

Մ. Դ. Թաղիադեանց

1839 Ապրիլ 21
Ի Մեծն Պոլիս

Արդ՝ սոյն գրութիւններէն յայտնի լինելով Մեսրովբայ ոչչափ ժամանակ ի Պոլիս մնալն, և ի Պոլիսէն ուղղակի ի Տրապիզոն երթալն, և անտի Էրզրում գնալու դիտաւորութիւնն, շփոթութեան մէջ կը մնայ կենսագրութեան այն խօսքը ի բերանոյ Մեսրովբայ՝ թէ «պարտաւորեցայ փախչիլ Տաճկաստանի զանազան գաւառները, և վերջապէս Հնդկաստան գնալու մի շոգենաւ գտնելով 15 անգլ. ոսկւով վարձեցի և մտայ անդ»։

Այս տեղեկութեան սխալ լինելն՝ պիտի բացատրէ մեզ Մեսրովբայ մի նշանաւոր նամակն ի ստորև՝ 20 փետրվար 1841 թուականաւ, յորմէ յետոյ կը յաւելումք և մեր դիտողութիւններն։

Բայց զիարդ և եցէ երբ Մեսրովբ կը ժամանէ ի Կալկաթա նոյն 1839 տարւոյն վերջերն, կը մտանէ վերստին եպիսկոպոսական ճեմարանը, և մի տարի վերջ 1840 դեկտեմբեր 30-ին հետեւեալ նամակը կը գրէ իւր բարեկամաց, զոր իսկականէն ընդօրինակեցի պ. Գուլամիրեանցի մօտէն։

« Սիրելի պարոնայք Անդրէաս և Ստեփանոս Ներ-
« սիսեան։

« Խնդրեմ ի մէջ ամենայն աշխարհային զբաղմանց
« ձերոց, շնորհ արասջիք դարձուցանել զոնեայ զՀայե-
« ցուածս ձեր յօգուտ ընդհանուր ազգին, և կատարել
« զոր խնդրեմս.

« 1. Գտանել հնագոյն և անծանօթ մատենագրու-
« թիւնս զսրբոց մերոց նախնեաց, և առաքել այսր ի
« հրատարակումն նոցա յազգի մերում։

« 2. Ժողովել նորանոր գրուածս, թէ ի ձէնջ յօրի-
« նեալս, և թէ յայլոց աշակերտաց Ներսիսեան ուսում-
« նարանին. և առաքել առիս հանդերձ դուզնաքեան
« դրամովք հեղինակացն ի ծախս տպագրութեանց նոցա։

« 3. Առնել ամի ամի շրջաբերական մի ի մէջ
« բնակացն և եկաց Դավրիժոյ, և նոքօք ձեռն օգնա-
« կանութեան նպաստել ինձ առ գործս բազումս, որ
« առաջի կայ ինձ, սոսկ յազգին օգուտ։

« 4. Գրել ծանուցանել ամենայն բարեկամաց՝ որք
« ունիցին գրեանս կամ գրուածս ի տպագրութիւն, զի
« առաքեսցեն առ մեզ զնոսա, զորս մեք յանձն առ-
« նումք տալել (ո՛ և իցէ գործ,) զէջն մեծագիրք, որ է
« Աստուածանմանութեան (գրքի) տիպն, 6 զրան առ
« 1000, օրինակն, փոքրագիրք՝ որ է Դիցաբանութեան՝
« 12 զրան առ 1000, օրինակն. այսինքն է ասել, մին
« երես հազար հատ կ՚տպին, մեծն 6 ոլն, իսկ փոքրն
« 12 ոլն։ Մին գիրք որ ունենայ 100 երես, հազար օ-
« րինակ մեծագիրքն լինի 600 զրան, նոյն փոքրագիրքն
« 1200 զրանն և մի գրքի գինն կը լինի մեծագիրքն—550
« դեան, փոքրագիրքն 1200 դեան։

Խ. Մառայ

Մ. Դ. Թաղիադեանց»։

Կալկաթա

Bishope college

Տիկէմբը 30, 1840

« Առ յարգոյ պարոնայս ԱՆԴՐԻԱՍ Պ. ՈՒՌՊԵԼԵԱՆՑ եւ
ՍՏԵՓԱՆՈՍ ՆԵՐՍԻՍԵԱՆՑ

Ի Դավրէժ»

Ահաւասիկ ի վերև յիշածս ուշադրութեան արժա-
նի նամակն, որ դարձեալ Ա. Գուլամիրեանցի մօտէն
ընդօրինակեցի, (յիսկականէն։)

« Բարձրաստիճան Սէթ Խան և պարոն Անդրէաս
պ. Ուռպելով,

Ողորմած Տեարք.

« Դայ առ ձեզ թուղթ իմ ի ծագաց Հնդկաստա-
« նի, ցուցանել ձեզ զփրկութիւն նախախնամութեանն,
« որ ընդ վտանգս, ընդ մահ և ընդ կորուստ, անվրդով
« պաշտպանեալ հասոյց աստանօր ամբողջ անվնաս,
« զազգին յարուցանել վերստին զփառս։ Ամաչեսցեն,
« որք ի նանիր հալածեցին զանձն իմ։

« Նուազութիւն ազգի մերոյ ի Հնդկաստան, պար-
« տաւոր առնէ զիս ապաստան անկանիլ ի շնորհս հե-
« ռաւոր բարեկամաց։ Վասն որոյ համարձակիմ պահա-
« նել ի սմին, զօրինակ շրջաբերականի իմում յազա-
« գս տպագրութեան պատմութեան Հին Հնդկաստա-
« նի, զորոյ նմանն չիք բնաւ յազգի մերում։ Եթէ տե-
« ղեակ լինիցիք տարապարտ հալածանացն իմոց ի Պո-
« լիս—Յովհաննու Հարտարապետի անմահ գժտութեանն,
« երկու հարիւր քսակաց կաշառոյն, և դաւաճանու-
« թեանն, զի լռելեայն կալեալ զիս առաքեսցին ի Սի-
« բիր, իբրև զմահապարտ։ Զեկուցումն իմ, զփախուստն
« ի Կարնոյ դէպ ի Հնդիկս, բանակի Օսմանցւոց բեկա-
« նել ի Պիրէճիկ, և զխռովութիւն աշխարհին, և չա-
« բեաց հեղմունս, զկողոպտիլ յԱրզրնի, և զդերի վա-
« րումն իմ յԱրաբաց յանապատին Աբվիլայ, և այլն և

« այլն, ոչ զարմանայիք ասել զձեզ ի նպաստ օգնակա-
« նութեան կոչելն զձեզ, և զգերապատիւ հասարա-
« կութիւնն Դավրիժոյ: Տակաւին ի մէջ այսքան զրկա-
« նաց՝ ես բարւոյ ազգին հետևիմ, և եթէ դուք զօգ-
« նելն խնայիցէք, կամք ձեր՝ Տասն և ութ հատոր
« գրեանք՝ միայն յինէն շարադրեալք պատրաստի կայ
« վասն տպագրութեան, և կարօտի օժանդակութեան
« ազգասէրաց մերոց ընդ ամենայն տեղիս: Եթէ շնորհ
« արասջիք զոնեայ դուշնաքէլիք օգնել ինձ, ուրեմն
« նուիրեալ զկեանս իմ բովանդակ ազգային օգտի, պա-
« տրաստեցայց ի սմին, առանց ակնկալութեան աշխար-
« հիկ շահուց:

« Սկսեալ 1827 էն մինչև 1840. մեծահռչակ Ա-
« թոռն Հայաստանեայց ս. Էջմիածնի, իւր հինգ հարիւ-
« ր աւուր միաբանիւքն, և համօրէն ազգիս եկամտովն,
« չտպեաց այնքան գրեանս, որքան նուաստս միայնակ:
« Գրեանքն զորս նոքա տպեն, չեն այլ ինչ, քան ժա-
« մագիրք, և շարական, զորս ինքեանք ոչ շարադրե-
« ցին. բայց իմայինքն բոլորք են նոր, և առաւել ևս
« պիտանիք: Արդ եթէ նոքա ձերոց ողորմութեանցն
« կարօտին, և գան և առատապէս վարձատրին, ընդէր
« ոչ և նուաստս, որ քան զամենեսին գնոսա առաւել
« վաստակեցի:

« Ոչ շատ խօսեցայց. ազաչեմ յընդունել ձերում զայս,
« առանց ժամանակ կորուսանելոյ՝ շնորհ արասջիք
« նախ՝ զանձինս օրինակ կացուցանել ստորագրութեամբ
« անուանց ձերոց, և ապա զայլս ի նոյն յորդորելով,
« հաւաքել զգումարն, և հանդերձ անուամբք Ազգա-
« սէր օժանդակացն, փութով հասուցանել աստ առիս,
« Անգղիացի, կամ հաստատուն Պարսիկ փոխանորդա-
« գրով, զի տպագրեցից ընդ տրոց՝ և զանուանս նոցա
« ի գրի այդմիկ, առ յաւիտենական և յանջնջելի յիշա-
« տակ նոցա, քան զոր չիք բարի, հաստատուն և ան-
« սասան յաշխարհի:

« Սիրելի Անդրէաս իմ, թէպէտ և ընդ այլ մթերս
« իմ աւագակարգուր եղև և սիրելին ինձ ժամացոյց՝
« նուիրեալն ի ձէնջ, այլ յիշատակ նորա անջինջ կայ ի
« սրտի իմում, և գիտումն ազգասիրութեան ձերոյ, որ
« էր «չափել նովին զթանկագին ժամանակն առ օգուտ
« ազգիս», անմոռաց արծարծանի ի հոգիս: Ահա ժա-
« մանակ եհաս սիրելիդ, ահա տպարան մի ի ներքոյ,
« և գրիչ սուր ի ձեռին, հռչակել զառաքինութիւնս ի-
« մոց սիրելեաց: Մի գանգաղիր, մի վհատիր ի հեռա-
« ւորութենէս իմմէ. զի սիրտ իմ միշտ մօտ է ձեզ, և
« երկիմտանք իմ զոգան առ անձուկ կարօտանացս
« վասն ձեր: Զանա սերմանել յերկիր արգաւանդ, և
« քաղեսցես անտի քեզ զհունձ բազում:

« Բարեկամք մեր ի Պոլիս, տակաւին անտեղեակք
« են կենդանութեան իմոյ, ոմանք համարին ի մահ, և
« ոմանք ի Սիբիրիա վտարեալ զիս. ուստի և վասն
« աստեղաբաշխութեան իմոյ լուր չունիմ: Խնդրեմ տե-
« ղեկանալ ի Մօրրիկայ՝ որ այդր թուի լինել, և գրել
« ինձ:

« Ամենայն ամենայն վերապատուութեամբ բարձրաս-
տիճան Խան, եւ սիրելի պարոն իմ
ձեր որպէս միշտ
ամենախոնարհ ծառայ
Մ. Դ. ԹԱՂԻԱԴԵԱՆՑ»:

Կալկաթա
Bishops College
Փետրվար 20, 1841.

Մեծարգոյ սոյն հետաքրքրական նամակէն կ'իմացուի՝ թէ արդարև դառն հայածանաց ենթարկուել է նա ի Պոլիս և պարտաւորուել է հեռանալ. բայց թէ ինչ է Հարտարապետ Յովհ. Սերվերեան Ամիրայի «ան-

մահ գժտութեան» պատճառն. ինչ է երկու հարիւր քսակ (հազար օսմանեան լիրայի) կաշառքն և դատաճանութիւնն մինչ ի Սիբիր աքսորելու զինքն, մեզ բոլորովին անյայտ կը մնան։

Այս միայն յայտնի կը լինի, որ Մեսրովբ Պոլսէն նաւ վարձելով ի Հնդկաստան ելած չէ. այլ Տրապիզոնէն Էրզրում (Կարին) գնալով, անտի ևս «փախուստ» տուել է դէպ ի Հնդիկս, ասել է զամաքի Ճանապարհաւ, որովհետև Արզնի գնացել և անդ կողոպտուել, և ապա Արվիլայ անապատի ձեռք Արաբաց մէջ գերի ընկել է։

Սոքա ամենայն՝ այնպիսի ծանրակշիռ պատմութիւններ կը պարունակեն անտարակոյս, որ Մեսրովբայ կենաց մէջ պատահածներու ամենէն գլխաւոր տեղը կը բռնեն, բայց ափսոս որ չէ հրատարակած, շատ հաւանական է որ իւր Ճանապարհորդութեան երկրորդ հատորի մէջ գրուած պիտի լինէին Կ. Պոլսէն ի Հնդկաստան ուղևորութեան վերայ, բայց նա անտիպ մնաց մինչև ցայսօր։

---

9) Կ. Պոլսէն ի Կալկաթա ժամանելուն՝ այս անգամ առաջին տպագրութիւնը կը լինի «պատմութիւն Հին Հնդկաստանի» գիրքը, ի տպարանի նոյն եպիսկոպոսական ճեմարանին, յոր մտել էր Մեսրովբ։ Սոյն գրքի միայն առաջին հատորը տպուած է, և սկիզբը գրուած տպագրութեան բարերարին պարոն Յարութիւն Աբգարեանի պատկերը։ Իսկ երկրորդ հատորը, յորում Հընդկաց Նոր պատմութիւնը գրուած պիտի լինէր, և անշուշտ նաև պիտի պատմուէր մեր Հայոց մեծագործութիւններն ու քաջութիւններն, մինչև Անգղիացւոց գրաւումն Հնդկաստանի, ափսոս որ անտիպ մնացած է, և ձեռագիրն ուր մնալն անյայտ...։ Բայց մի ճաշակ ընծայելու համար այս կարևոր պատմութեան վերայ, նորա յառաջաբանէն հետևեալը կ'օրինակեմ։ Յետ թուելու թէ որչափ հեղինակութիւններ կրկտել է՝ որպէս զի ստուգապատում յօրինէ Հնդկաց առասպելախառն պատմութիւնը, երրորդ դիմով խօսելով զինքենէ, այսպէս կը յարէ.

« Համարձակի ուրախութեամբ սրտի զՀայերէնս
« զայս առաւել ճոխ և ճշմարտապատում համարել,
« քան զոր գրեցանն ցարդ պատմութիւնք Հնդկաց։ Հա-
« յերէն առ ընթեր կայր նմա ժողովածոյ ձեռագիր Թով-
« մասայ Խօջամալեան նոր Զուղայեցւոյ [1]) . . . ժամա-
« նակակից գոլով սա և Գէորգին խանին (Հայ) և քա-
« ջացն Հայկազունեաց՝ ստուգութեամբ վիպագրէ զան-
« ցրս ժամանակին։ Հաւաքեալ և բազում ինչ ի լրոց՝
« առնէ զձեռագիր իւր կրպակ իմն մանրավաճառի, լի
« զանազան տեղեկութեամբ ի պարծանս Հայրենեաց
« իւրոց։

« Արդարև արտօնութիւն նուիրակական Աթոռոց
« Հայաստանեայց ի հաւաքել իւրեանց համաշխարհա-
« կան ծանօթութիւնս ազգաց և լեզուաց, առաւել է
« քան զոր պանծալ կարեն թէ ունէցին, մեծամեծ թա-
« գաւորութիւնք աշխարհի։ Ցան և ցիր սիրումն ազ-
« գին ընդ երեսս համատարած հողագնտոյս, և հոգևո-
« րական պիտոյիցն խնամ, զոր տանին նոքա նուիրա-
« կունս արձակելով յամենայն ուրեք, բառնայ ի նոցա-
« նէ զամենայն զխութ և զխոչ այսր դրութեան։

« Այն ինչ դեռ չէ ոտք եւրոպականաց կոխեալ ի
« Հնդիկս, կարէին նուիրակունք նոցա տանել յօրագրու-
« թիւնս իւրեանց զվճիտ հանգամանս դրից սրբա (Հընդ-
« կաց) ծիսից, կրօնից, կենցաղավարութեանց, և որոց
« ի կարգին։ Այլ տարաբաղտաբար ոչինչ արժանի ցի-
« շատակաց քաղեցին և բարձին ի զոլութիւն բանա-

---

[1]) Այս պատմ. Հնդկաց Թովմաս Խօջամալեանի, մասամբ՝ Ազգասէր լրագրի մէջ հրատարակուելէ յետոյ, նոյն տպարանի մէջ առանձին ևս տպուեցաւ յամին 1849.

«սիրաց։ Ո՛չ, ոչ իւիք բնաւ յանդգնի մեղադրել զնոսա
«վասն այսորիկ, այլ խոնարհութեամբ աղերս արկա-
«նէ, զի այսուհետև գուն գործեսցեն ազգասիրաբար
«յօրագրութիւնս իւրեանց յեղուլ զպատահարս Ճանա-
«պարհաց իւրեանց, զհանգամանս աշխարհին, զբերս,
«զբարս և զբնաւորութիւնս այլ և այլ ժողովրդոց,
«որոց դէպ լիցին յընթացս շրջագայութեան իւրեանց։
«Որով շաւիղ ընդարձակ բանան ամենայն հեղինա-
«կաց, յասպարէզ համաշխարհական ծանօթութեանց։

«Երկրորդն հատորք գործոյս առաւել հաւաստա-
«պատումք և ընտրելագոյնք՝ պահեցան յաջողութեան
«առ ի վերուստ, իսկ առաջիկայս, սոսկ քաղուած ա-
«ռասպելաց և խրթնութեանց՝ զառաջինն առ ի լոյս
«վերածնելեաց ընծայեցաւ։ Թէպէտ և շարունակ հի-
«ւանդութիւն հեղինակին ոչ համարձակեցուցանէ զնա
«ասել թէ որպէս յուսայր՝ գործն կատարեցաւ»։...

Յերես 134 պատմութեանս՝ կը տեսանի հետևեալ նշմարն Ազգային պատմութեան.

«Գուալեր է ընդ մէջ 26 և 18 աստիճանաց հիւ-
«սիսային լայնութեան, քաղաք կառուցեալ ի ներքոյ
«լերին բարձու. որ ի վերջին դարուն անուանի դտաւ
«ի քահանայապետական կոնդակս ազգի մերում, ի
«պատճառս մեծանուն Ասպետի Հայկազունւոյ Յակոբայ
«Պետրոսեան սպարապետելոյ ամենայն զօրաց ինքնա-
«գլուխ Ռաջայի տեղւոյն, որ յազգէ Մահրատայից։ Եւ
«հասարականամ բարերարութեամբ իւրով առ ինքն
«ժողովելոյ ի տեղեաց տեղեաց զկորովիս ի պատա-
«նեաց Հայկազանց, և կարգելոյ զնոսա ի պէս պէս
«պաշտամունս զինուորական կրթութեան։ Սոյն այս
«իշխան բարեպաշտօն միայնակ տնկեալ յաշխարհ ան-
«ծանօթ՝ շառաւիղեալ ուռճանայ այժմ մերձ երեսուն
«տամբք Հայոց որոց ամենեքին աստիճանաւորք և սի-
«րելիք յաչս ծիրանածին արքային՝ յերջանկութեան
«վայելեն զաւուրս իւրեանց»։

Իսկ բացայայտ կացուցանելու համար՝ թէ ինչպէս ազգանուէրն Մեսրովբ կը ջանար ի լոյս գիտութեան հանել մեր Ազգային պատմութեան ամեն հատուկտոր մասերը, կարևոր կը համարիմ յառաջ բերել սոյն գրքի եօթներորդ գլուխն (երես 220) ամբողջութեամբ, որ այս վերագիրն ունի։

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ Ի ՀՆԴԻԿՍ։

«Յետ քսան և ութ ամի համբարձման Տեառն
«յերկինս՝ Թովմաս վերջին ի հաւատացելոց յարութիւն
«նորա՝ եղև առաջին Աւետարանիչ արքայութեանն ի
«հեռաւոր ծագս աշխարհին Հնդկաց։ Սկսեալ ի Պար-
«սից և ի Բակտրոնէ քարոզեաց մինչև ի Դաքան. և
«անդ ի լեառն Մոնթ՝ եօթն մղոնօք հեռի ի Մադրա-
«սայ հաստատեալ զԱթոռն առաքելական՝ ձեռնա-
«դրեաց զբազումս յաշակերտաց իւրոց և սիրեաց զնո-
«սա քարոզս Աւետարանին ընդ ամենայն Հնդկաստան։
«Թէպէտ և չիք առ ձեռն յիշատակութիւն սրբազան
«վաստակոց նորա՝ սակայն չիք և՝ տարակոյս տարա-
«ծելոյ նորա զհաւատս երկնաւոր Վարդապետին ընդ
«ամենայն ոլորտս վիճակի իւրում։ Զի ի ժողովն Նի-
«կիոյ՝ որ գումարեցաւ յերորդ դարուն՝ էր և՝ եպիսկո-
«պոսն Հնդկաց։ Եւ յամին հանդերձելոյ՝ Փրումէնթոս
«ձեռնադրեցաւ յԱթանասայ Հայրապետ Հնդկաց։

«Ի մէջն վեցերորդ դարուն եկն դարձեալ այլ
«ոմն Թովմաս կրօնաւոր, ծպտեալ ի կերպարանս վա-
«ճառականի, (զոր ոմանք համարին գոլ Հայ ազգաւ.)
«և զբազումս ի նոցանէ դարձոյց ի հաւատն Քրիստո-
«սի։ Իսկ յաւուրս Յուստինոսի կայսերս յորժամ Հալա-
«ծանքն յարեան ընդդէմ Արևելեան եկեղեցւոյ վասն ոչ
«ընդունելոյ նորա զժողովն Քաղկեդոնի՝ նախ զՆեսրէս
«Հայկազունի առաքեաց սպարապետ, և ապա զԲելիու-

« ըիոս բռնութեամբ ածել զնա յայն դաւանութիւն։ Վա-
« սըն որոյ Ժողովեալ Դեոսկորոսի Ասորւոց Հայրապետի
« զբազմութիւն յազգէ իւրմէ, և զեօթնեսին յաշակեր-
« տացն Ճեռնադրեալ յերիցունս՝ միախումբ չու արա-
« ըին ի Ծովեզերս Արաբիոյ, և նաւարկեալ անտի՝ եկին
« հասին ի Քօչին՝ առ Ծովեզերօքն Մալաբարայ։ Ուր շի-
« նեալ եկեղեցիս բազմացան յոյժ, և կան մինչև ցայ-
« սօր ժամանակի։

« Հայր Ստեփանոս (Ագոնց) աշխարհագիր գրէ զսո-
« ցանէ. թէ «ի ժամանակս թագաւորութեան Ցունաց
« անհնարինս նեղեալ ի չարչարանաց և ի տառապա-
« նաց, որովք նեղէին զնոսա Ցոյնք, սակս Քաղկեդոնի
« ժողովոյն, հատուած մի ի նոցանէ գնացին փախստա-
« կան յաշխարհէն իւրեանց. և Ճանապարհորդելով ընդ
« ցամաքն ի զանազան աշխարհս, զկնի հասին ի
« Քօչին»։ Հատ. Դ. 1(4։ Եւ եթէ Ճշմարիտ եղէ գիւտ
« արձանին և գրութեան, զոր յիշատակէ անդ 261, և
« 262. թէ Օլոփէն ի Թաչինայ այսինքն յԱսորոց, էած
« ի Չին զօրէնս քրիստոնէից յամի փրկչին 636. ուրեմն
« խոստովանելի է. թէ Ասորիք ի հալածանս անդ իւր-
« եանց՝ առաւել լուսափայլեցին զհաւատ երկնաւոր
« Վարդապետին՝ քան եթէ մնացեալ էին խաղաղու-
« թեամբ անգործ յաշխարհի իւրեանց։

« Ապա եկին ի Բաբիլոնէ Յովհաննէս և Դանիէլ
« նեստորականք և յետ նոցա այլք մինչև ց1652, ուր
« Գրիգոր եպիսկոպոս Երուսաղէմի շրջեալ քարոզու-
« թեամբ ընդ աշխարհն Եթովպիա մինչ ի Մուխա, եկն
« անտուստ ի Քօչին, և հաստատեաց զամենեսին ի դա-
« ւանութիւն Հայոց և Ասորւոց։ Սա գրեաց առ Մարգ-
« պանն Հայոց Մերուժէն, որ ի Նստէր ի Տիգրանակերտ,
« և նա առաքեաց ի Հնդիկս զեպիսկոպոս մի Ասորի
« երկու քորեպիսկոպոսօք, որոց եկեալ ի Քօչին հովուե-
« ցին զեկեղեցին զամս հնգետասան։

« Ապա եկին Լատինք քարոզիչք և զբազումս մո-

« լորեցուցին յաղանդ պապապաշտութեան իւրեանց։ Յա-
« մի տեառն 1744 հանդիպեցաւ նոցա Առաջնորդ նոր
« Ջուղա, տէր Գէորգ եպիսկոպոս, այլ անտեղեակ լե-
« զուի նոցա ոչինչ կարաց առնել. վասն որոյ գնաց և
« յամին 1748 առաքեաց առ նոսա զԱհարոն վար-
« դապետ զայրն բանիբուն։ Եկն ընդ այն աւուրս և՝ եպիս-
« կոպոս մի Ասորի. այլ քանզի այր արբեցող էր՝ ոչ ըն-
« կալաւ զնա ազգն։ Վերստին գրեցին ի Տիգրանակերտ
« առ ազգն իւրեանց, և նոքա առաքեցին առ նոսա
« եպիսկոպոս մի Շուքրօլլա անուն երկու քորեպիսկո-
« պոսօք։ Յամին 1750 եղև հերձուած ի միջի նոցա, ո-
« մանք յարեցան ի կողմն արքեպիսկոպոսի իւրեանց՝ և
« ոմանք ի կողմն Ահարոն վարդապետի, որք այնպէս
« հովուեցին զնոսա՝ մինչև մեռաւ Ահարոն։ Իսկ հե-
« տագայ առաջնորդաց նոր Ջուղայ անհոգացեալ փո-
« խանորդել նմին զայլ հովիւ ի վերայ հօտին՝ հալե-
« ցան ամենեքին և զանգեցան յեկեղեցին Ասորւոց։

« Այլ առաւել քան զնոսա մեծ արարին վաճա-
« ռականք ազգի մերոյ զհաւատն Քրիստոսի ի Հնդկաս-
« տան, որք բազմօք յառաջ քան զգալուստ Եւրոպաց-
« ւոց, շինեցին եկեղեցիս գրեթէ թէ յամենայն վաճա-
« ռաշահ քաղաքս Հնդկաց, և բարձր արարին զպաշ-
« տօն փառաց Ամենակալին ի մէջ ամենայն հեթանո-
« սաց։ Յետ նոցա զեղան Փորթուգալք, և կրօնաւորք
« նոցա՝ որպէս Սալանէացւոցն ի Մեքսիկոն, ի ձախ
« բարձին զվաչ՝ և յաջ իւրեանց զսուսեր՝ բռնի ածել
« զնոսա ի հաւատս իւրեանց։ Զօրացան յետ նոցա Դա-
« նիք, Գաղղիացիք և Անգղիացիք, և զբազումս թէ ի
« հաւատացելոց և թէ յանհաւատից՝ որսացան և որ-
« սան ի կողմն իւրեանց՝ առանց խորանաց։

« Հատուած ինչ ազգիս երբև երեսուն տանց ի
« վաղեմի ժամանակաց հետէ բնակեալ ի Քաբոլ՝ զա-
« մենայն հոգևորական պիտոյս իւր ընդունէր յառաջ-
« նորդէն նոր Ջուղայ՝ մինչև ցԿարապետ եպիսկոպոս։

«Ապա օտարոտի և տգէտ եպիսկոպոսաց փոխանորդեալ «յաթոռ տեղւոյն, է՛ որ անգիտութեամբ և է՛ որ ան- «հոգութեամբ զանց արարին առաքել առ նոսա մա- «տակարարս ասատուածային շնորհաց։ Եւ անխնամ ժո- «ղովրդեանն զամս յոլովս ակնունք պահելով զման- «կունսն՝ և անհաղորդ թաղելով զմեռեալս իւրեանց՝ «տակաւին ամբողջ պահեցին զհաւատ զհարց իւրեանց, «ցամ տեառն 1838։ Յորում յարշաւել զօրաց Անգղիաց- «ւոց ի Քաբուլ՝ յամբառնալ զՇահ-Սուջա յաթոռ իւր, «պատահեալ քահանայի բանակին և հրաւիրեալ յեկե- «ղեցին՝ մատուցեալ էին զառաջեաւ չափուհաս ման- «կունս աւելի քան քսան թուով, մկրտել զնոսա։ «Դուցէ և դարձան իսկ ի կրօնս նոցա։ Զամաչեցեն «արդեօք այսպիսի հովիւք որք զանձինս և ելթ արա- «ծեն. անվոյթ եղեալ զհօտիցն»։ *)

---

10) Զվոխադրութենէ Մ. Սանդուխտ դպրոցի իւրոյ ի Կալկաթայէ ի Զիչրա, որպէս նաև տպարանին, այսպէս կը գրէ Մեսրոբ յԱգգասիրի 1852 ամի երես 605։

«... Միայն ցաւ եղև դպրոցիս ի կողմանէ օրիորդաց ազգի մերոյ և մանր տղայոց՝ որք զրկեցան ի «Հայրենի հրահանգաց։ Այլ յայսմ մասին Ճար չկայր. «մեք՝ ոչ միայն որքան պարտն էր, այլ և որքան վեր- «ջին Ճիգն էր՝ արարաք, բայց չկարողացաք նոքօք «զդէմ ունել բուռն յորձանաց ազգային յօժարութեան «առ օտարութիւն։

«Ճշմարիտ ցաւակցութեամբ նշմարեմք, զի ա- «ւելին նոցա թէ կանուխ թէ անագան՝ իջանելոց է ի

*) Այժմ իսկ քանի՞ քանի տեղեր կան որք առանց հովուի մնալով, օտար փարախ կը դիմեն առ հարկի, և մեր վանքերի մէջ, մեր կրօնաւորներ հոգւոյ աշխարհականաց կը մնանին։...

«գլուխս այնպիսեաց՝ որք կարողքն էին, այլ ոչ կամե- «ցան սիւն լինել հաստատութեան այսորիկ։ Իսկ մեք՝ «որ լինն ամաց հասակէ և այսր վաստակեցաք հայրե- «նի գրականութեան, և ահա յեսնամենի ի ծերութեան «լքեալ և տառապեալ պարտաւորեցաք առանձնանալ ի «լռութիւն անապատիս այսորիկ՝ ոչ այլ ընտրելագոյն «համարելեմք քան զԳրիչին անյիշատակ ողորմութիւն։

«ՀԱՅՐ, ԹՈՂ ԴՈՅԱ, ՋԻ ՈՉ ԴԻՏԵՆ, ՋԻՆՉ ԳՈՐԾԵՆ։

«Գեղեցիկ խորհրդով հովանացաւ տպարան Ա- «գ ա ս ի ր ի Ա ր ա ր ա տ ե ա ն ընդ թիւք «Տատրակին «յանապատի» սրբոյն Յովհաննու, և զնորայն մինչ եր- «կրորդեսցէ Աստուծով ի լսելիս ամենասիրելի ազգին «թէ՝ «պատրաստ արարէք զճանապարհս Տեառն, և «ուղիղ արարէք զշաւիղս նորա»... *)

«Գրեցաք... և հրատարակեցաք զդիտումն մեր «առ ազգն, և երբև ոչ մին և միւսն յաջողեցաւ, «խլեցաք զգպրոցն ի Կալկաթայ, և տնկեցաք ի Զիչ- «րա, որպէս զի մանկունք մեր սակաւ ծախիւք, առողջ «օդով, և լի առատութեամբ՝ բարձրագոյն կրթու- «թեանց արժանացին, և ի բնկէն մի զրկեսցին։ Արա- «րաք, եղև. փառք Բարերարին»։

---

*) Եկեղեցի Հայոց ի Զիչրա է յանուն սրբոյն Յովհաննու Կարապետի. և կառուցեալ է յամի 1695, և երիցագոյն ամենայն եկեղեցեաց առ հասարակ։

Զիչրա՝ երբև երեսուն մղոնաւք հեռի է ի Կալկաթայ ի հիւսիսակողմն արևմտից նորա, և ընդ աջմէ Գանգիսի և ի հարաւոյ հինաւուրց քաղաքին Հուգլւոյ. զորմէ տես յԱգգասիրի Արարատեան եր. 649.

Ց. Ֆ. Մ.

11) Ինչպէս ուշիմ ընթերցողն կարէ տեսնել, Մ. Դ. Թաղիադեանի մահուան թուականը կը տարբերի այս տեղ. վասն զի կենսագրողն կ'ասէ ի 10 յունիսի հանդէաւ, իսկ այս արձանագիրն մայիս 18 թուականը կը կրէ։ Բայց նոյն ինքն կտակակատար պարոն Թ. Խ. Աւետում, իւր նամակի մէջ որ առ «Արշալոյս Արարատեան» յրագիր՝ յունիսի 10 թուականը կը դնէ (տես երես 31.) ուստի ինձ կը թուի թէ Արձանագրին թուականը սխալ դրուած է. կամ քանդակման ատեն, և. կամ ընդօրինակութեան։

---

12) Մեսրովբ Դ. Թաղիադեանի կենսագրութիւնը՝ արարեալ յումեմնէ ի Կալկաթա, վերջացաւ ահա, երբեմն ախորժելի և շատ անգամ անախորժ բանիւք։ Կենսագրութեան հեղինակն ի մօտոյ տեսած, խօսած, և կենցաղավարած լինելով Մեսրովբայ հետ ի Կալկաթա՝ բաւական տարիներ, անաչառ խստութեամբ կը նկարագրէ նորա անհաճոյ վարքը և ընթացքը։ Եւ թէպէտ կը խոստովանի և գովելի ճիրքն նորա սրարշաւ մտքին և յիշողութեան, և բանաստեղծական գերազանց հանճարը, և վարժապետական դիւրուսոյց ոճն ու եղանակը. բայց կ'երևի թէ չափազանց զգուելով նորա առաջին կեանքէն և վարմունքէն, մի մեծ գործ չ'համարիր նորա հեղինակութիւնքը, այլ թեթև և անիմաստ։

Այս մասին՝ թող ներուի և ինձ, նոյն անաչառութեամբ խօսել և շարունակել իմ տեսութիւնքս, դատելով և կշռելով այն ականաւոր անձնաւորութիւնը իւր գործերէն—հեղինակութիւններէն—ինչպէս բնական է և բանական, ըստ այնմ թէ՝ այր ի նամակէ իւրմէ (ի գրուածոց) ճանաչի։

Նոյն իսկ Մեսրովբայ պատմութենէն յայտնի կ'երևի, որ ինքն ի մանկութենէ՝ հետաքրքիր, դիւրագրգիռ և աշխոյժ բնաւորութիւն ունենալով՝ չի կարողացել մի տեղ հաստատուն բնակութիւն անել, ուստի և ոչ միւսի հետ ամուր բարեկամութիւն. և աշխարհաշրջիկ տեղափոխութեանց մէջ շատ արկածներ տեսնելով և կրելով, կասկածոտ և արհամարհոտ բնութիւն առել, որով իւր բարեկամաց և բարերարաց անգամ անվստահ՝ և թերևս ապերախտ գտնուել է։

Այս ամենի վերայ՝ Մեսրովբ ի ծննդենէ ճառադէմ և ազեղ կերպարանք ու տեսք ունենալով, ինչ զարմանալի բան է, որ փոխանակ մարդոց հակակրութիւնն ու գարշանքը իւր վերայ հրաւիրելու, սիրելի և ակնածելի կը լինէր բազմաց և մինչև իսկ յիւրմէ վրաստացողներն՝ դարձեալ կը սիրէին տեսակցիլ և բարեկամանալ նորա հետ.—անշուշտ՝ այս ուրիշ բանի համար չէր կարելի լինիլ, եթէ ոչ՝ իւր բազմահմուտ աշխարհածանօթութեանը, և զուարճախօսութեամբ համեմեալ զրուցատրութեանը, թէ և յաճախ կծանող և անշողոքորթ և ի վեր քան զամենայն իւր գրական հանճարին և սքանչելի հայկաբանութեանը համար։

Անպատեհ և անճահ է թեթև կամ անիմաստ համարել Թաղիադեանի հեղինակութիւններն. եթէ թեթև ասելն նոցա փոքրութիւնը նկատելով է, պէտք է գիտենալ՝ որ նոքա աւելի ևս կը փայլեցուցանեն գրութեան արժէքը և յարգը, նման այն փոքր ադամանդներին, որք առաւել թանկագին են քան զմեծադիր բայց հասարակ քարերն, մտաբերելով միանգամայն հեղինակին աստանդական վիճակը՝ որ պարտաւորեալ էր բազում տառապանօք իւր հանապազօրեայ պարէնն հայթայթել, և միայնակ վաստակիլ իւր ամեն գործոց մէջ։ Եւ այսպիսի մի մարդ, որպիսի հոգեկան կարողութեամբ պէտք է օժտուած լինի, որ կարենայ արտադրել այնքան գործեր։

Անաչառութիւն և անկեղծութիւն բացերև կը փայլին Մեսրովբայ գրուածոց մէջ՝ որք կը վերաբերին ազգին. իսկ հայրենասիրական ե-

ռանդն այնքան գեր ի վերայ եղած է, որ ամեն դէպքի և առթի մէջ բարձր ի գլուխ կը պանծացունէ մեր երկրին դիրքը և բերքը, ազգային լեզուն, ազգային սովորութիւնները, և ազգային կրօնը՝ ամենայն յարգանք և պատիւ վերընծայելով։ Կը ջանայ օտարաց պատմութեան մէջ իսկ իւր ազգին պատմութիւնը խառնել, և իւրայնոց քաջութիւններն, հաւատարմութիւններն ու ամեն բանի մէջ ունեցած գործունէութիւններն ի վեր հանել, ինչպէս կը տեսնուի իւր Հնդկաց և Պարսից պատմութեանց, և Ա զ գ ա ս է ր ի մէջ առհասարակ։

Այլ որ մեծն է քան զամենայն՝ և հակառակ 1839 թուականի Կ. Պոլսոյ Հայոց նորա վերայ ունեցած գաղափարին, մեր Հայրենի ս. Եկեղեցին ջատագովելու և պաշտպանելու մասին այնչափ ջերմեռանդ հանդիսացած է, որ ընդօրինակելի կը հանդիսացունէ զիւր անձն ի կրօնասիրութեան։

Նա՝ որ քննէ զսիրաս և զերիկամունս, Նա միայն գիտէ և կարող է կշռել՝ հոգւով և ճշմարտութեամբ աստուածպաշտութեան հեռեռոնների չափը, ուստի այն մարդուն՝ որ իւր հրապարակագրութեան և առանձնախօսութեան մէջ, գայթակղութեան առթի և պատճառ չէ տուել միւսի ի փոքրկանց, այլ մանաւանդ՝ խաբխսյուսոյ, հաւատոյ և սիրոյ քարոզած է զՑէրն և զՓրկիչն աշխարհի Յիսուս Քրիստոս՝ և զԱւետարան նորա սուրբ, միջոցաւ Առաքելական եկեղեցւոյ Հայաստանեայց, մեք չեմք կարող դատել։

Շատ էր և երանելի իսկ, եթէ ամենայն պաշտօնեայք եկեղեցւոյ, նոյն հաւատքն ունենային և նոյն ընթացք կատարէին Քրիստոնէական կենաց մէջ՝ միշտ զգոյշ պահելով զանձինս ի գայթակղութենէ. այլ աւաղ, այնչափ յայտնի և համարձակ գայթակղութիւնք կը տարածուին, որ սոսկում կը բերէ ուշադիր խորհողին մանաւանդ ի մօտոյ վերահաս եղողին...

Մեսրովբայ մեծաջան աշխատութիւնն էր, ծաւա-

լել Հայ լեզուի և կրօնի գիտութիւնն ի մէջ համօրէն Հնդկաստանի, և նոցանով վառ և հաստատուն պահել մեր ազգայնութեան տունը, թէ՛ իւր Ա զ գ ա ս է ր լրագրի միջոցաւ, և թէ՛ երկսեռ ս. Սանդուխտ ուսումնարանին, անընդհատ քարոզելով զսէր Հայրենի եկեղեցւոյն՝ Քրիստոնեայ հաւատովք. բայց ո՞ւր այժմ նման նմին աշխատող գրագէտ, և իմաստուն քարոզիչ։ Բիւր ողբոց արժանի է ասել, բայց սակայն ճշմարտութիւն է՝ թէ հազիւ կէս դար զկնի մեր Հնդկահայք, մոռանալով խպառ ոչ միայն Հայ լեզուն, այլ նաև իրենց ազգանունը, ինքզինքին ձեռ և սերունդ Անգլիացւոց պիտի դաւանին, ինչպէս որ այժմէն նոցա յայտնի օրինակներն կը տեսնուին ի ցաւ սրտի համօրէն ազգասիրաց, և յորոց ես իմ աչօք տեսնելու դժբաղդութիւնն ունեցայ ի Լոնդոն՝ յամին 1878։ Մի միայն անձ մնացել էր բովանդակ Հնդկաստանի մէջ՝ որ իւր անբասիր վարուք, և ջերմ աւանդապահութեամբ կանոնաց սրբոյ եկեղեցւոյս մերոյ, և նախանձախնդրութեամբ Հայրենի կրօնի և ազգութեան, կ'աշխատէր, կը ջանար եռանդեամբ, և կ'առնէր և կ'ուսուցանէր բանիւք և արդեամբք, և հեղինակութեամբ զանազան մատենից, տէր Յովհաննէս Խաչիկեան Խաչիկը աւագ քահանայն, բայց առաջնորդք եկեղեցւոյ՝ վասն անձնական կրից փակեցին նորա բերանն և կաշկանդեցին ձեռներն՝ և անլսող մնացին նորա արդար բողոքանաց, և արժանաւոր միջնորդութեանց և բարեխօսութեանց ոմանց, որպէս զի դիւրաւ և փութով կործանի կրօն և հաւատ և՛ բարեպաշտութիւն։

Ողբալի՛ վիճակ Հայաստանեայց... զորմէ չէ ի դէպ ծանրանալ աստանօր։...

Կը մնայ մեզ ասել՝ և այն մոլութեան վերայ, որ չար քան զամենայն մոլութիւնս է՝ արբեցութեանն Մեսրովբայ, որով իւր կեանքը վաղագոյն վճարելով՝ չ'ժամանեց ամբողջացունել իւր հեղինակութիւններն, և տպա-

գրութեամբ ի լոյս ընծայել, որք յոյժ պիտանացու էին մեր ազգային պատմութեան և գրականութեան *):

Արդարև՝ չարիք և պատիժ է մարդուս՝ գերի լինել այս կամ այն մոլութեան, յորմէ սակաւք կարող են փրկել զանձինս. բայց թէ ընդէ՞ր այս արբեցութեան ախտով վարակուել է Մեսրովբ, կենսագրողն այս կէտը չ՚որոներ և չ՚ցուցներ մի պատճառ, ուստի թող ներուի մեզ որչափ կարելի է սակաւուք պարզել։

Կենսագրութեան հեղինակի խօսքերէն յայտնի է, որ այս չարաթոյն ախտը՝ առաւել Մեսրովբայ կենաց վերջին տարիները մտած է նորա անձի մէջ, երբ Արարատեան ընկերութիւնն քայքայուել է մեծամեծ վնասներով, քաջալերութիւնն նուազել, Դպրոցի և տպարանի հոգը կրկնապատկուել և իւր վաստակաբեկ ուսոց վերայ ծանրացել, և ո՞ զիտէ քանի՞ քանի անարգանք, թունդորանք լսել և կրել է չարակամներէ և նոյն իսկ բարեկամներէ՝ կամ յաճախ հանգանակութեանց և կամ անաչառ քննադատութեանց համար, ուստի և յուսահատաբար գլորել այս մոլութեան գուբի մէջ։ Մեսրովբ ի մանկութենէ կանոնաւոր կրթութիւն առած չ՚լինելով, և իւր պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը շրջմոլիկ կեցուլով անցուցնելով, և ըստ իւր բանի՝ «մերթ վերեզակ յերկրամիջի, և մերթ հիւանդ գետնախոտի» լինելով, չ՚կարողացաւ ստանալ մի հաստատուն քնաւորութիւն, հաստատամիտ ոգւով կալ,

*) Կը թուի թէ այս ախտն էր պատճառ՝ որ այսպիսի մի զրագէտ և զրասէր մարդ՝ Ազգասէր լրագրի դադարումէն զկնի յամին 1852, ոչինչ գրեց և հեղինակեց մինչև իւր մահուան օրը։ Ի՞նչ գործեց և ի՞նչ բանի աշխատեցաւ շարունակ վեց տարի, մեզ յայտնի չէ. գուցէ գրեց և աւանդեց թղթի վերայ, բայց նախնի գրուածոց հետ կորսուեցան. բանասէրը թող փնտուէն...։

մնալ, և իւր կիրքը սանձել, որով և իւր կոչումն գրագիտութեան հանճարին՝ մինչև վերջը փայլեցուցնել առաքինութեամբ և համբերութեամբ։ Այլ սակայն ո՞վ որ ի մարդկանէ կրցաւ զերծ մնալ տեսակ տեսակ թերութիւններէ կենցաղոյս. ահ՚աւասիկ եւրոպականաց մէջ իսկ՝ մեծահանճար հեղինակներէ ոմանք ևս, ունեցած են այնպիսի արտառոց վարմունք, որ մեր զարմանքը կը գրաւեն. բայց և այնպէս՝ նոցա հեղինակութեանց և գիտութեանց վերայ չեմք կարող արատ ինչ դնել։

Երանի՞ թէ Մեսրովբ բոլորովին ազատ եղած լինէր մոլեկան ախտերէ. այն ատեն զինքն իրաւամբ կը կոչէին նոր ոմն Մեսրովբ՝ ծաւալող Հայ դպրութեան ի Հնդկահայս, որոյ ոմանն չէր տեսել այն աշխարհ այնքան հեղինակութեամբ. վասն որոյ՝ աւաղելով՝ նորա մոլութիւնը, կը ծածկեմք նորա մերկութիւնը, քօղով ազգօգուտ գրութեանցն, որք մշտաբարբառ քարոզեն հայրենասէր, ազգասէր, ուսումնասէր ոգւոյ նորա, որով կ՚օրհնեմք զյիշատակ անուան նորա և գործոցն՝ ցայսիտեանս ժամանակաց, յաւելեալ առ այն և զաղօթս ելեղեցւոյ մերում սրբոյ, զի յաւուր մեծի ահեղ հրապարակին, յորում

Ցուցանին զաղտնիք մարդկան
Իւրաքանչիւր որ գործեցան,
Բարեաց գործողքն պսակին
Չարեաց ի հուրն անշէջ մատնին,
Ցայնժամ յիշեսցէ զ ս ո ր ա բարին
Եւ գործք մեղացրն ջնջեսցին։
Ամէն։

13) ՅՈՒՅԱԿ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՆՑ ՄԵՍՐՈՎԲԱՑ Դ. ԹԱՂԻԱԴԵԱՆՑ։

Ահաւասիկ մեր խոստման համեմատ կ'սկսեմք շարադասել Մեսրովբայ բազմարդիւն հեղինակութեանց ցանկը, ըստ կարգի տպագրութեան թուականներին, ջանալով կարելի եղածին չափ ծանօթացուցանել ընթերցասէրները նոցա պարունակութեանց վերայ։

Բայց նախ քան զամենայն կարեւոր կը համարիմ, կարգել աստանօր Մեսրովբայ առաջին անգամ Հընդկաստան գնալուն՝ առ Երեւանայ հայրենակիցս եւ գրած մի նամակն 1828 թուին, զոր վերս առի «Փորձ» պատուական ամսագրի մէջ (1880) հրատարակուած «Շահէն» անուն վիպասանութեան ծանօթութենէն, ուր ի լոյս հանած էր մեծանուն վիպասանն ազգիս, պարոն պ. Պռոշեանց Աշտարակեցի, հեռաւեայ տեղեկութեամբ։

« Տպելով այս տեղ հանգուցեալ Թաղիադեանցի նամակը, մենք մի մեծ պարտականութիւն կատարած ենք համարում։ Նամակը տպուած էր մի թերթ գրելու թղթի վերայ 1828 թուին, ներքեւը կայ Թաղիադեանցի ինքնաձեռագիր ստորագրութիւնը եւ այդ նըշխարը մենք աւելի թանգ ենք համարում. Թաղիադեանցի նման մի անզոյգ եւ նշանաւոր հեղինակի ձեռքը մեր մատենագրութեան համար ապագայումը մեծ նշանակութիւն ունի։ Ցանկալի էր, որ վիմագրութեամբ մշտնջենաւորուէր այդ մեծագին աւանդը։ Թերթը տըպուած է, կարծեմ, Կալկութայումը, հին ուղղագրութեան կանոնով մի քանի բառեր պատիւներով կըճատած։ Մենք միայն այդ պատիւները չկարողացանք

պահպանել, ապա թէ ոչ ուղղագրութիւնը, լեզուն եւ կէտադրութիւնը սրբութեամբ պահպանուած են։

« Յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը մեր բարեկամ Աբգար Գիւլումեանցին՝ այժմ տէր Մեսրովբ քահանայ Ալէքսանդրապոլեցուն. նորան ենք պարտական այս նամակի լոյս տեսնելովը։ Արժ. հայրը լսելով մեր ձեռնարկած վիպասանութեան մասին, ինքըն անձամբ բերեց մեզ այս նամակն եւ խորհուրդ տուեց անմահացնելու»։

ՊԱՏՃԷՆ ՆԱՄԱԿԻՆ

« Արտուածասէր եւ ազգասէր հասարակութեան Հայոց փրկեալ քաղաքին Երեւանայ. Սրբակրօն քահանայից. Բարեծնունդ լշխանաց եւ համայն բարեպաշտօն ժողովրդոց, որդեսպարտ սիրոյ նուէր։

« Աչքներդ լոյս որ մեր քաղցը աշխարհքն պարսից դառն չարչարանքիցն ազատուեց, Քրիստոնի Տէրութեան ներքոյ ընկաւ։ Փառք բարերարին Աստուծոյ, որ այսուհետեւ աւել նեղութիւն չէք ունենալիք, ազատ քաղաքի քաղաքացի պիտիր անուանիք, ձեր ազգասիրութեան՝ իմաստութեան լուրն, եւ արուեստից յառաջադիմութիւնն բոլոր աշխարհ պիտիր տարածվին։

« Իմ լաւ քաղաքացիք, էսպէս երջանիկ բախտ որ դուք էք պատահել, կարծեմ որ մեր նախնիքն ես Արշակունի Թագաւորութեան ժամանակումն էլ չէին պատահել, զերա Թէպէտ եւ Թագաւորութիւնն լուսեանցն էր, սակայն բարբարոսութիւն եւ զուլումն պակաս չէր։ Ուրեմն աղաչեմ, նախ՝ աղօթս առնէք որ Աստուած Ամենաողորմած Կայսերն Նիկողայոսի Աթոռն միշտ հաստատ պահի, սուրն կտրուի, եւ ամեն թշնամեաց վերայ յաղթող։ Ապա՝ աղաչեցէք, որ նոյն Աստուածն մեր ազգին սէր միաբանութիւն տայ, երկար

կեանք և բարի յաջողութիւն, որ կարենան ճանաչել թէ ինչ է լաւն, և հետևել նմին։

« Մնաց որ, ես ծառայս ձեր թիվն 1823-ումն սրբազնակատար կաթուղիկոսի հրամանաւն Հաղպատիցն եկայ, շատ չարչարանքով հասի Հնդստուն, մին տարի պարապ դէս ու դէն ընկայ, երկրորդ տարումն Կալկաթու Հայոց վարժարանումն վարպետութիւն արի, յետոյ սուրբ Երուսաղեմի նուիրակ Աբրահամ վարդապետի շնորհովն ծանօթացայ Ինգլիզի եպիսկոպոսին՝ որոյ անունն էր Ռիչինալդ Հիբբը. մին խիստ լաւ և ողորմած կարգաւոր. որ իւր խարճովն տվեց ինձ իւրեանց մեծ վարժատունն. և ես Ներկայ Աստուծոյ ողորմութեամբն սովորում եմ Լատինի, Ինգլիզի, Յունաց և Պարսից լեզուն, և այլ զանազան արհեստանի։ Վերջապէս երբ որ լսեցի Ներկայ մեր աշխարհի ազատութիւնը, սիրաս ուրախութեամբ վառվեց, Ֆրանգ ազգաց լուսաւորութիւնն տեսնելով և մեր ազգի անլուսաւորութիւնն, նախանձ մեծ ընկաւ հոգիս, և թէպէտ ես ոչ շատ փողատէր վարդապետ եմ ոչ վաճառական, ոչ կարգ ունիմ ոչ աստիճան, սակայն Աստուած՝ որ մինչև տկարաց ձեռքովն մեծ մեծ բաներայ կարող կատարել, վստահացնումայ ինձ իմ կարեաց գեօրայ իմ ազգիս, իմ քաղաքիս և իմ ծնող աշխարհիս պիտանի լինիմ ձեր շնորհքովն։ Բայց այս իմ պիտանութիւնս ուրիշ կերպով չէ լինելիք, եթէ ոչ վարժատուն հաստատէք և մեր երեխայից միտքն լուսաւորէք։

« Եւ մին խնդիր գրեցի Վրաստանու Ներսէս Արքեպիսկոպոսին թէ՝ որովհետև Զորագեղի մօտի անապատն քաղաքի մէջ տեղն լինելով, այսինքն Շհարի, Կոնդի և Զորագեղի միջումն, հեշտ կը լինի մանկանց համար յամէն տեղայ հաւաքվիլ անդ վասն կարդալու, և որովհետև բերթին բագարին ու գետին մօտայ, շատ յարմար եմ համարում որ տեղն մին քաղաքական վարժատուն հաստատվի մեր ազգի լուսաւորութեան համար, և Երևանայ առաջնորդի աթոռն փոխվի տանվի Կոզեռի մօտի սուրբ Զինաւոր եկեղեցին։ Նաև գրել եմ, որ եթէ սրբազանն հաճենայ շնորհել մեզ էն տեղն, ուրեմն գրի ինձ՝ որ ես տեղիցս զանազան ազգի կարդալու գրքեր և տպարան որքան իմ աղքատ զօրութիւն կը խոստանայ՝ երբեմն և գամ անձամբ աշխատեմ վասն ձեր որդւոց և իմ եղբարց լուսաւորութեանն։

« Արդ, իմ ազնիւ քաղաքացիք խնդրեմ, որ գիրս ձեզ հասնելէն ի բաց շնորհ առնէք Շհարցիքդ, Կոդեցիքդ (Կոնդեցիքդ) Կարբեցիքդ և Զորագեղցիքդ հաւաքվիլ նոյն անապատումն, յառաջ սուրբ քահանայիցն խնդրել որ աղօթք առնեն առ Աստուած վասն բարի յաջողութեան գործոյն. ապա էս իմ աղքատ գրութիւնս կարդացէք խորհեցէք, եթէ ձեզ ընդունելի լինի իմ առաջադրութիւնս, ուրեմն միաբանութեամբ երկու արզի գրեցէք, մինն սրբազնակատար կաթուղիկոսին, և միւսն սրբազան Ներսէս արքեպիսկոպոսին Վրաստանու։ Եւ խնդրեցէք որ էր տեղն ազգին ընծայ շնորհեն ձեռագրով մոհրով և դապալայով։ Եւ երբ Աստուած կատարի ձեր խնդիրքն ի բարին, շուտ ինձ մին գիր գրեցէք. և ??? կաթուղիկոսի և Ներսէս Առաջնորդի թղթերի օրինակք նորանում փակեցէք, ուղարկեցէք Թաւրիզու Ինգլիզի դեսպան Մէկդոնալդ հազարապետի ձեռքն, նա շուտով Կալկաթա կը հասցնի։ Երբ ես ձեր գիրն գտնեմ, կը գամ Աստուծով, և էնպէս կը գամ որ ուրախանաք։

« Իմ ազնիւ քաղաքացիք. գիտեմ որ մեր աշխարհի այսքան երկար ժամանակաց գերութեան տակ մնալն գիտութեան յարգն ոչ կարէ ներկայ լաւապէս ցուցանել ձեզ, բայց յուսամ որ շուտով կարողանէք ճանաչել։ Գիտութիւնն՝ էն ազնիւ թագուհին այ, որ հալած՝ աղքատ հագուստով բախտաւորաց դռանն կը դեգերի, ամմա՝ թագաւորաց թագին պարծանք ու փառքայ։ Ցէրութիւն չկայ որ էս անտէր գիտութեամբս կանգնած և պրսհվում չը լինի. Ռուսաց էդ մեծ կայսե-

քութիւնն, թէ յառաջ քան զսուրբն Պետրոս իւրեանց իմաստասէր թագաւորն ինչ էր, և ներկայ ինչ ան յայտ է ձեզ։ Մին երեկայ եթէ գրել կարդալ գիտենայ, էն Աբուեստանին որ քաղում չարչարանքով վեց կամ եօթն տարումնայ սովորում, մին երկու տարումն կարէ հեշտ ու հանգիստ սովորել. էն սովորած արուեստն հնարքով հեշտացնել, և նոր նոր արուեստանի ևս հնարել։

« Իրաւի արուեստից անունն յիշելով այնքան եմ ամաչում որ կարող չեմ ասելս. զերա, մեր խեղճ աշխարհքն ինչ մին լաւ արուեստ ունի. ոչինչ։ էն արուեստանին որ չորս հազար տարով յառաջ աշխարհումն կայէն, ներկայ էլ էտոնք են մեր Հայաստանու արուեստանին. և ինչպէս կոպիտ սովրում են, էնպէս էլ կոպիտ սովորցնելով գնում են։ Արուեստ պայծառացնել չեն գիտում, նոր արուեստ գտնել չեն կարում, եթէ լսում են, որ մին տեղ աղջիկ գրել կարդալայ սովորում, զարմանում են, երբ Ինգլիզ կամ Փռանգ են տեսնում, կարծում են Աստուած է յերկնից իջել ոտներն ամպաթաթախ։ Եւ ինչ է պատճառն ազաչեմ, եթէ ոչ գիտութիւնից զուրկ մնալն։ Կարծեմ ինձ վերայ կը ծիծաղիք եթէ ասեմ, որ Ինգլիզի և Փռանգի կնանիք և դստերքն վեց և եօթն լեզուի կարդալ գրել գիտեն, մեծ մեծ գրքեր են շարադրում, տպում, ասղարարութիւն, ձև, կաբ, վաճառականութիւն, լաւ սազ ածել, պարգալ և այլն։ Բայց յուսամ երբ որ ազնուութեան հոգին կը նորոգվի ձեր մէջումն, և դուռն գերութեան քաշութիւնն կը մոռանաք, էն վախտն կիմանաք թէ ինչ է իմ լացս։ Ախ իմ լաւ քաղաքացիք, ախ, հոգիս հարայայ կանչում, հին խմորն թողէք. նոր ազգի լուսաւորութեան և պայծառութեան հետևեցէք։

« Ամօթ չի՞ ձեր իշխանազուն որդւոց համար դատարկ քուչէքումն ման գալ. կամ մինակ անտաշ դարբնութիւն, խառատութիւն, կատէպանութիւն (այգեպանութիւն) և թթի զուշ քշել սովորել։ Ամօթ չի՞ ձեր խաթուն դստերաց համար մինակ տուն սրբել սովորել. և մին գնձոտ մինթանայ (շրջազգեստ) ձևելու համար զատաքը կռնատակին դռնէ դուռն ընկնիլ։ Ո՞ւր է ձեր վեհ հոգին, ո՞ւր է ձեր ազնիւ փառքն, ո՞ւր է ձեր աշխարհի ծանօթացած անունն, կորեան արդեօք. ո՞չ։ Աստուծոյ յատուկ ողորմութիւնն բացվել է ձեզ վերայ իմ ազնիւ քաղաքացիք. մի ասէք թէ ջանք անենք, փող ժողովենք լաւ ապրինք. մոխիր է մեր փողն, փուչ է մեր կեանքն, սնոտի է մեր յոյսն, եթէ չենք ջանալէց որ մեր ազգի երեխայիցն էն լուսաւորութեան դուռն բանալ, որ վաղն և միւս օրն կարողանան մարդի մէջում մարդ երևիլ։

« Պարտ է ուրեմն Աստուծոյ ողորմութիւնն ոտնատակ չտալ, նորա ձեզ տուած ազատութիւնն անմահ փրկութիւն համարել. ջանալ որ ձեր խանգաղայ որդիքն կարողանան իմաստութեամբ թուր բռնել ընդդէմ թշնամեաց Աստուծոյ և բարերաբ կայսեր ձերոյ. և ձեր աղջիկերքն՝ գրիչ, նոքա՝ քաջութիւն առնեն, և սոքա նորանց քաջութիւնն գրեն. նոքա դառնան քաջ զօրք և զօրականք. և սոքա քաջ իմաստուն և լաւ տանտիկնայք. և թէ կարենայ մեր աշխարհն մին անգամ իւր որդիք և դստերքն էսպէս կատարելութեամբ ծաղկած տեսնել, չգիտեմ, ո՞ր մին Ֆռանգի աշխարհիցն պակաս կմնայ, թէ լուսաւորութեամբ, թէ արուեստով, թէ ազնուութեամբ, և թէ երջանկութեամբ. և ո՞չ թէ մինից։

« Ահա էսա իմ ցանկութիւնս իմ քաղցր աշխարհիս համար, եթէ որ հաճելի կը լինի վերն գրածիս համաձայնիլ և կատարել, ուրեմն հետ է, մենք հիմն կդընենք և Աստուած կշինի. և ես ուրախ կլինիմ ապրիլ ձեզ համար՝ և մեռնիլ ձեզ համար։ Ապա թէ ոչ՝ էլ ուրիշ չեմ ու չուի պատճառ չունէք, և եթէ զանց կառնէք գլխից ըռադ անելու համար, առաջի ահեղ ատե-

Քրիստոսի պարտականն դուք էք, և դուք պիտիը լինէք»։ Ողջ լերուք։

Մնամ
Աղնուութեան ձերոյ
խոնարհ ծառայ
Մեսրովբ Դաւթեան Թաղիադեանց *)։

Ի Կալկաթա Նոյեմբերի 1, 1828.
Ինգլենդի եպիսկոպոսի ձեմարանում։

ՅԱՆԿ ՏՊԵԱԼ ՄԱՏԵՆԻՑ Մ. Դ. ԹԱՂԻԱԴԵԱՆԻ.

«. (1829) ՀՈԳՈՆԻ ԳՐՈՎՏԻՈՍԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ. ի Լատինէ ի Հայ ած Մեսրովբ Դաւթեան Թաղիադեանց Կաբբեցի, Սարկաւագ սրբոյ Էջմիածնի։ Ի Հայրապետութեան Տ. Տ. Եփրեմայ Աստուածապատիւ Կաթուղիկոսի ամենայն Հայոց։ Կալկաթա. ի գործատան եպիսկոպոսական ձեմարանի Bishop's—College. 1829։ Նուիրեալ է մատեանս (Հազուագիւտ) պայծառափայլ ասպետացն Սէթայ և Գրիգորի Սամեան, ունի երես 284. քառածալ։

Նախաբան Թարգմանչին կարի գեղեցկահիւս բա-

---

*) Բէ՛ւբ շնորհակալութիւն արժ. տէր Մեսրովբ Գիւլումեանց քահանայի, որ զայս նշխար պատուական անանխանձաբար նուիրեց. և պ. Պերճ Պռոշեանի որ արտատպեց զայն, և պ. Աբգար Յովհաննիսեանի, որ միջոց հանդիսացաւ իւրովք պատուական „ՓՈՐՁ“ իւ հրատարակել ի սիրելս աշխարհի։ Ո՜տայը ինձ տեսանել զսոցին նմանս հետևողս օրինակի սոցին։

Յ. Ք. Մկրեան։

նիւք բացայայտ զպարունակութենէ և զոգտակարութենէ մատենիս, ուստի և արժանի վերծանութեան։

ՆԱԽԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ.

«Օրէն է թագաւորաց յետ կարգելոյ զընդհանուր օրէնսդրութիւնս՝ հրատարակել զնոյն ի լսելիս հպատակաց. ըստ որում օրէն ոչ յայտնեալ՝ ոչ կարէ պատկել զարդարս, կամ պատժել զչարս։ Ապա և Քրիստոս՝ համաշխարհական փրկութեանս օրէնսդիրս, յետ վերելոյն զկեալ այնմ որ հաւատայ՝ և զկորուստ անհաւատին, այն ինչ հանդերձեալ էր մեկնիլ յաշխարհէ յաթոռ մեծութեանն Աստուծոյ թագաւոր երկնից և քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի, իւրոց սիրելի աշակերտաց վերջին կտակ զայս աւանդեաց։ «Գնացէք, աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրըտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ուսուցէք նոցա պահել զամենայն զոր ինչ պատուիրեցի ձեզ»։ Որոց թէպէտ և ի միջոցս ամաց երեսնից եւ բարբառ ընդ ամենայն երկիր, և խօսք մինչև ի ծագս աշխարհի, յաջողեալ զօրութեամբ նշանաց և արուեստից. սակայն ոչ երբէք պակասեցին Հրէայք խնդրել զնշանս, և Հեթանոսք՝ զիմաստութիւն։

«Յետ նոցա բազումք աստուածաբանեցին. այլ զի դուլ ետ անուն Քրիստոսի խաչելոյ յարուցանել մեռեալս ի ձեռն նոցա՝ զլքեալն յաքանչելեաց զիւրեանց վարդապետութիւն շողոքորթեցին գերապանծ վերտառութեամբս Դիւոյ ամենայն իմաստութեանց։ Բայց եթէ ուշ դիցուք բանին, այնքան թանձր պարապատեցին զայս Դիւոյ բազմութեամբ Հաւիշիկ նաժշտաց, կամիմ, խրթին աստուածազգեցութեամբ և խորին նախապաշարութեամբ մատցն իւրեանց, մինչ ոչ միայն յօտարաց՝ այլ և ի սիրելեաց անգամ աննշմարելի թողուլ զնա։ Անտես արարեալ նոցա գանհատական հաւաստիս. և

զվասաս Հանգամանաց անձին, և տեղւոյ և ժամանակին, սրացան ի Թէս սեռից. և վերացուցեալ զտեսակն յենթակայից, փոխանակ ասելոյ՝ Թէ կարմիրն է գոյն վարդին, (ոՀ գիւրածան չինականաց և դպրոցականաց միանգամայն.) լցին զէջս գրուածոց իւրեանց անիմանալի մեկնութեամբ կարմրութեան կամ որակաց առհասարակ. յորոց ոչ ինքեանք հասկացան ինչ, և ոչ այլոց հասկացուցին։ Իսկ որք յաւէտ փոյթ եղեն գիւտի Հշմարտութեանն՝ բորբոքեցան զինել յաւէտ զեկեղեցի ընդ եկեղեցի, և զանդամս ընդ անդամս գրգռել, քան պաշտպանել զնա և զՀաւատն խոստովանեալ ի նմանէ՝ յերեսաց օտար Թշնամեաց։

« Իսկ ոՀ իմաստասէր Աստուածաբանութեան, կամ աստուածասէր իմաստութեան իմոյն Գրիգորիոսի, (չասեմ աչառելով, կամ շնորհս որսալով առաջիկայ Թարգմանութեանս.) այնքան անարատ, սուրբ և անխառն է յաղագս անտի կողմնապաշտութեան՝ մինչ համարել իմ զսա գրեալ առաւել Հոգւովն Քրիստոսի՝ քան Հոգւովն Գրիգորիոսի։ Ոչ անցանէ անդր քան զբնական հաւատիս, և ի բնականաց անտի յաւէտ զսովորականս ընտրէ. որք բաւեն արդարև ի Հաւանութիւն ածել նաև Զոյիլեան միւոս ի մէջ ամենայն ազգաց։ Ոչ զինի ընդդէմ Համադաւան եղբօրն, ոչ գրգռէ զնոսա ի խածատել զիրեարս Հակառակ խաղաղութեան Աւետարանի որդւոյն Աստուծոյ, այլ յամենայն զօրութենէ Հակատի որպէս քրիստոսազօր Ախոյեան քրիստոսադաւան Հաւատոյս՝ ընդդէմ քրիստոսատեաց ազգաց և այլակրօն աշխարհաց։

« Գրէ Լ.ի Կլէրիկոս մեծանուն Գաղղիացի » «յետ Գրիգորիոսի բազումք յօժարեցան գրել յաղագս Հշմարտութեան քրիստոսական հաւատոյ, մանաւանդ աստուածաբանք Անգղիացւոց և Գաղղիացւոց՝ յորդորեալք ի նոյն օրինակաւ սորա, յորս է՝ զի համաձայն ընթանան. և է՝ զի բառ առ բառ ծաղկաքաղ առնեն։ Մինչ զի՝ պարծանք գիւտի այսր կարևոր նաև արատ եղա-

նակի գրութեան՝ սմա եզ քան զմի յատկանայ»։ Այս գործ գովանի սիգարշաւ Հանապարհ արար ի փոքու իմն Ժամանակի ոչ միայն ի հրահանգս Համալսարանաց ամենայն լուսաւոր ազգացն Եւրոպայի, այլ և ի բոլոր մշակեալ լեզուս աշխարհի, մինչ անցանել անդուստ նաև յԱրարացին ոՀ։ Վասն այսորիկ տէր Գուլիէլմոս ՀաՀ Միլ վարդապետն աստուածաբանութեան և արուեստից զմեզ՝ զբարեբաղդ աշակերտեալս ընդ Հզօր գիտութեամբն իւրով կրթել կամելով ի խորս իմաստասիրականին ասեմ և աստուածաբանական գիտութեանց՝ ի վեր քան զամենայն դաստիարակեացն յայս գիրք։ Զոր և ես յընթացս դասադութեան իմոյ Հետզհետէ թարգմանեալ հիւրեցի ի մերն լեզու։

Իբրև յանկ եկ թարգմանութիւնն ըստ յաջողելոյ Տեառն, նա ինքն վարդապետն մեր Միլ եՀան զնոյն Հանդերձ այլովք ևս թարգմանածու մատենիւք յատեան գրաքննչաց եպիսկոպոսական ճեմարանիս, ուր միաբան վՀռեցին տպագրել զսոյն ի տպարանի տեղւոյս յօգուտ Համօրէն Ազգիս։

« Հեղինակն բաժանէ զմատեան իւր ի վեց գիրս. յառաջնումն՝ հաստատէ բնական փաստիւք զգոյութիւն Աստուծոյ ի սկսպէս ստորոգութեանց նորա. յերկրորդումն՝ յատկապէս զՀաւատն Քրիստոսի. յ'երրորդում զբստուգութիւն գրոց Հին և Նոր Կտակարանաց. ի չորրորդումն ջրէ զոնոտիս հեթանոսական պաշտամանց. ի հինգերորդումն զիսրանս Հրէից, և ի վեցերորդումն զաղանդն Մահմետի։ Զայս ամենայն փաստս ի մէջ բերէ ի գրոց անտի Հրէից և Հեթանոսաց միանգամայն, ուստի և չէք գիտութիւնք գաղեալ ի հնութիւնս նախնի պատմաբանից, բանաստեղծից և իմաստասէրաց, զորս ոչ առնու սա զամենայն ի նոցին իսկ բարբառս ազգաց։ Որում և ես անշուշտ հետևեալ՝ ոչ միայն զի անկորուստ պահեցի զնոսա, այլ և յաւելի նոր և Հոխ ծանօթութիւնս ի գրոց յաւերժայիշատակ հարանցն մերոց, և ի բաբու-

նեացն Հրէից և Արաբաց՝ զզանցառեալսն ի հեղինակէս։ Ցընտիր ընտիրսն ի նոսա անվթար պահեցի զբնագիրս, կարգեալ յանդիման և զհայ թարգմանութիւնս։ Մի՝ զի նոցին իսկ զինու խզեցից ի հիմանց զնոցուն մոլորութիւնս. և միւս՝ զի լեզուագիտաց ազգիս ընձեռից արտօնութիւնս այսքան բառից և բանից թարգմանութեամբ։ Ցայս ամենայն ծանօթաբանութեանց հեղինակին և Լի Կլերիկոսի, ես զիմն յիմ անուն որոշեցի։

« Հանդերձեալ էի գանգատել վասն չունելոյ բաւական գրեանս Ամենեքեան հարց մերոց՝ սատարիչս ծանօթաբանութեանց իմոց. բայց ըստ որում մուրացկանութիւնն ոչ պատասխանէ երբէք ընդարձակ մտացն ազատութեան՝ հարկեցայ ի վերջոյ խուզել ոչ միայն զիմ հաւաքմունս, այլ նաև զբազումս ի բնագրաց անսի ծանօթութեանց հեղինակին. (թէև զթարգմանութիւնս նոցուն անխախտ պահեցի։) Խոհեմութիւն իմն վարկուցեալ՝ ըստ կտաւոյն չափել զձև պատմուճանին. որպէս ասէ առակն հասարակեալ։

« Բայց արդ՝ եցիր թէ անմահանայր յոյս իմ, հետևեալ սմին տեսանելով զհասարակաց ընդունելութիւն և զօգուտ ազգիս՝ զառաջին նպատակ իմումս քրտանց. առ որ և հաւանեալս եմ, զի քրտունք վասն ազգին՝ արբունք կենաց են ճշմարիտ ազգասիրի։ Կամ, տայր ինձ ով արդեօք, եթէ սիրելի աշակերտակիցք իմ հարազատք Արարատեան Աթոռոյն, զայս զեօթնամեան թափառանաց եղբօրն տեսեալ զերկ, գրկէին ի ժամս պարապոյ իւրեանց և ստէպ վերծանութեամբ հետևեցուցանէին հզօր հաւաստեաց սորա ոչ միայն զզօրաւոր գրիչս իւրեանց, այլ և զանարգել միտսն. և նախանձաւոր լինելով լաւագունին Շնորհաց՝ բուռն հարկանէին զդրօշակէ մօրն իմաստից զլեզուագիտութիւնէն, զերկրորդ նպատակէ իմոյին աշխատանաց։ Եւ կամ, լինէցէր ոչ հիմ. եթէ նոբատունկ ճեմարանք նորոգ վերկեալոյն Արարատայ նմանելով արփիափայլ Համալսարանացն Եւրոպայի, ընդ այլոց բազմագունից ընդգերկէին և զայս իբրև դպրոցական աստուածաբանութիւն ի հրահանգս իւրոց համբակաց. որ է երրորդ նպատակ իմումս երկանց։ «Ի կնիք բանիս, ազաչեմ զձեզ ընթերցողք, զի եթէ բարի ինչ գտցի ի սմա՝ զայն աստուածանման երախտեացն վարկուցեալ պտուղ տեառն Աբրահամու վարդապետի Բիւրականցւոյ ծայրագոյն նուիրակին Հնդկաց աշխարհի՝ որ յանձնարար. և բարձր սրբազան տեառն Ռիշինալդայ Հիբր յաւժայիշատակ հանգուցեալ եպիսկոպոսին Անգղիացւոց Կալկաթայ որ ընկալաւն զիս գերմարդկային իւրով զթութեամբ *) եղեալ պատճառ լուսաւորութեան խաւարեալ մտացս և տէր անտերունչ պանդխտականիս ի հեռաւոր օտարութեան աստ, գոհացարուք զԱստուծոյ վասն նոցա։ Որոց ի շնորհս և առաջնակայս այլ թարգմանութիւնք համբուրեցին զՀայ լեզուն։ Իսկ եթէ թերութիւնք ինչ՝ զայն իմումս տալով տկարութեան և ճեմարանական պարտեաց, (ըստ որում առ բազումս ցրուեալքն տկարանան առ մին՝) մարդասիրապէս ներումն արարէք»։

Բ. (1830.) ՊԱՂԵՍՏԻՆ. «պսակեալ Քերթած գերա. տ. Ռիշինալդայ Եբրեան՝ եպիսկոպոսի Կալկաթայ. ի Հայ ած Մեսրովբ Դաւթեան Թաղիադեանց, սարկաւագ սրբոյ Էջմիածնի. Կալկաթա ի տպարանի եպիսկոպոսական ճեմարանի. 1830»։

Իբր յառաջարան գործոյս՝ գրէ զվարս հեղինակին բազում ազգային ծանօթութեամբք, զորմէ տես յերես

---

*) Զսոցանէ լիովին խօսեցայց ի «Պաղեստին» ասացեալ բանաստեղծութեան տեառն Ռիշինալդայ. զոր ի Հայ ածեալ՝ յուսամ հուպ ընդ հուպ տպագրութեամբ ի լոյս ընծայել։

Մ. Դ. Թ.

42—54, կենսագրութեանս։ Զթարգմանութիւնս Քերթածոյս դնէ Հանդէպ Անգլերէն բնագրին ոտանաւոր չափմամբ. և ունի բովանդակ երեսս 75 ուրթածալ, բացի 29 երեսաց յառաջաբանին։

Գ. (18 0.) ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ. «արար Մեսրովբ Դաւթեան Թաղեադեանց սարկաւագ սրբոյ Էջմիածնի. տպագրեալ ի գործատան եպիսկոպոսական ճեմարանի Կալկաթայ, ի պարոն Յակոբայ Սայկսեան տպագրէ։ 1830»։

Նուիրեալ է մատենիկս պայծառափայլ Աստուծոյ Սարգսի Յովհաննէսեան Պարգսեանց, և ունի երես 161, ուրթածալ փոքրագիր։ Դնեմք աստանօր զյառաջաբան սորին, առի հաստատութիւն՝ թէ որպիսի խղճիւ ծառայէր Մեսրովբ գրականութեան Ազգիս, և թէ որչափ բեղմնաւոր գաղափարք իմացականութեանն։

« Գիտութիւն դիցաբանութեան, թէ և առ ի չգոյէ
« Քերթողաց յազգի մերում խոտան գտաւ առ ի մէնջ,
« սակայն այնքան արգոյ ընծայեցաւ յաչս լուսաւոր ազ-
« գացն Եւրոպայի, մինչ զի գրել զսա հր միայն կրկին նա-
« խաշաւիղ դպրոցական դասառութեանց, այլ և դայեակ
« վերծանութեան նախնի խրթնութեանց, բացարան
« առասպելեալ հնութեանց, և լուսարան պատմու-
« թեանց՝ քերթողութեանց և գրուածոց. և սիզբնադա-
« րան՝ ուստի ստեղծաբանք զերկաւայեալանսն, և պատ-
« կերահանք զընդօրինակսն հանեալ զառարկայս՝ գե-
« ղերեսեն ուրոյն նոքօք գարուեստն իւրեանց։

« Վասն այսորիկ և ես՝ որ յանձին կալայ իմով-
« սանն նպաստել ազգային գրագիտութեան, ճեռնարկի
« և ի շարայարութիւն կրկին հատորոց դիցաբանու-
« թեան ի բարբառս մեր՝ զՀնդկացւոցն ասեմ և զԵ-
« գիպտացւոցն առ հասարակ։ Այլ քանզի հնարքն չէր
« Հայ լսելեաց հաւանիլ անծանօթ խրթնաբանու-
« թեանց, առասպելեալ աստուածաբանութեան Մեր-

« կիմաստակացն Հնդկաց՝ առանց Հշտիւ Համեմատու-
« թեան դից սոցա ընդ դիս Հնոյն Յունաստանի. վասն ո-
« րոյ արժան դատեցայ նախ զայս հատորս համառօտել
« նոցա ի վերծանութիւն, զի յերևիլ մեծահատոր Հընդ-
« կացւոյն՝ *) նպաստեալ ի սմանէ հասկանայցեն զգերը-
« եալսն, և շահեցին անձանց զՀնութիւնս յաւիտեանց։

« Ո՛չ շատ ասացից։ Սրբեցի որքան և կարևոր
« եղև զիմ գրուած յանպարկեշտ բառից և ի բանից,
« որ յարարս դից. զի անարժան համարեցայ բանալ
« թերահաս մտաց՝ զոր ինչ մեկանգամ կատարելութիւն
« հասակին չառնէր անվտանգս լսելեաց։

« Ի վարձ երկանցս համարեալ զօգուտն հասա-
« ռակաց,

Մնամ հնասիրաց ազգի մերում
Խ. Ծ. հեղինակ։

Այսու հակիրճ բայց իմաստալից յառաջաբանաւ բացայայտ երևի՝ թէ Մեսրովբ մի էր ի շրջանկատ և ի խոհեմամիտ վարժապետաց, որ ընդ գիտութեան գիտեն ջամբել և զկաթն ուղղամիտ բարոյականութեան, առանց որոյ յոռի մնայ կրթութիւն մանկան։

Դ. (1840.) ՄԵՍՐՈՎԲԵԱՆ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ, առ ի պէտս դպրոցաց ընդ հովանեաւ Ամենափրկչեան Աթոռոյ որ ի նոր Զուղայ. տպեալ ի գործատան եպիսկոպոսական ճեմարանի. Կալկաթա 1840. «Նուիրեալ ի Տօնուղերձ տարեկանի Յարութիւնի Ա. Աբգարեանց երեմենիկ տղայոյ ի պարոն Թովմաս Հօրեղբօրէն իւրմէ»։

Ազգ մի ի Հակատ Այբբենարանիս, յայտ առնէ

*) Թուի ակնարկել ի պատմութիւն Հին Հնդկաստանի՝ շարադրեալն յիւրմէ։

զոՀ և զեղանակ Թաղիադեանի ի կրթութիւն մանկանց, վասնորոյ ի դէպ համարիմ դնել աստանօր.

« Մանկունք խաղուց յաւէտ հակամէտք քան եթէ « գրոց, բազում անգամ ծուատեն զտեսրակս իւրեանց՝ « յառաջ քան ուսանել զաթուելայս նոցա։ Իսկ հեղի- » նակք այբբենարանաց զցոյց գիտութեանցն յաւէտ « սիրելով քան զսոսկ պիտոյս, խնուն զնախաշաւիղ ու- « սանելեացն խորդուբորդ կոշկոՀանօք, և տարտամե- « ցուցանեն բազմամեայ ժամանակաւ և ծախիւք զա- « շակերտս, զծնողս նոցա, և զանՀինս իսկ իւրեանց։ Բայց « ես հորդել կամելով նոցա զայս շաւիղ, ըստ բուն զո- « ւրութեան Այբբենականիդ, արժան դատեցայ կարգել « նոցա զվանկս, զբառս և զբան։ Ճանաչել, հեգել, և « հասկանալ։ Կարգեցի ևս կանոնս ինչ պիտանիս ստու- « գարանութեան և յարմարագրութեան լեզուիս։ Ցա- « ւելի նաև ընթերցուածս ի ս. գրոց, թէպէտ և ընդ- « դէմ յօժարութեան իմոյ, վասն զի ինՀ կամք էին « զանց առնել իսպառ զայնպիսեօք և յատուկ ԸՆԹԵՐ- « ՑԱՐԱՆ յօրինել իբրև երկրորդ հատոր սորա, մի՝ զի « համառօտութեամբ գործոյս մանաւանդ թէ և փոյթ « ընդ փոյթ փութիւնութեամբ գրոցն՝ զորս յոյժ սիրեն « նոքա, խրախոյս տացից տղայոց. և երկրորդ՝ զի զծը- « նողս ղերծ արարից յընդունայն ծախուց անտի զորս ի « վերայ ածեն նախ քան զուսուցանելն ինչ ծուատեալ « այբբենարանք։ Եթէ ազգասէր հասարակութեան հա- « Ճոյ լիցի այս ոՀ, սովին և ի հետագայս նկրտեալ « հեղինակին, հորդեսցէ զպլրոցաց ազգին շաւիղ հեշ- « տին, և զուարՀ։

Մ. Դ. Թ.

Ե. (1840.) ՄԵՍՐՈՎԲԵԱՆ ՇԱՐԱԴՐԻՉ Հայ և Անգղիական լեզուաց ի պէտս դպրոցաց ընդ Հովանեաւ Ամենապրկչեան Աթոռոյ Նոր Զուղայ. տպեալ ի գործա-

տան եպիսկոպոսական Ճեմարանի Կալկաթայ 1840. և նուիրեալ առ ազնուափայլ պարոն ՅովՀաննէս Սէթ Մկրտչեան։ Զսորայն ևս զ ա գ դ՝ պատշաՃ վարկայ յառաջ բերել ի պէտս և յօրինակ դասատուաց մերոյ ժամանակի։

« Ցայս դար ծաղկեցան վարժեակք քերականու- « թեանց յազգի մերում և ջանացան հաւատացուցա- « նել թէ կանոնք իւրեանց իցեն լոկ միջոցք Հայկա- « կան շարադրութեանց։ Իսկ աշակերտք չոր ու ցամաք « կանոնացն ջան եղեալ՝ ընդ անՀմուտ դասատարա- « կութեամբ նոցա, առանց ՃիշդՀկիրառութեան օ- « րինակացն եղելոց, ուսան բառս ի բերան, և ոչ իմա- « ցան թէ առ ո՞ր վախՃան։ Իսկ որք ուսանն ինչ կամ « գրեցին ի Ճև շարադրութեան՝ յաւէտ կապկանալով « արարին, քան ունակութեամբ. մինչ զի՝ թողեալ « զդպրոց՝ գտան Շաւառ Պանդորայ ոչինչ ի խելապա- « տակս իւրեանց ունելով՝ քան զսոսկ Սեռական և « Տրական։

« Անմոլար շաւղաց բնութեան զՀետ ընթանալով « քան թէ արուեստի՝ հարցանեմ. զինչ արդեօք չարա- « դրելն իցէ, եթէ ոչ՝ կարգաւ շարել զբառս՝ « ի յայտնութիւն խորՀրդոց։ Եւ ըստ այսմ, տղայն « ի թոթովելն շարադրէ։ Այս է կարգէ զբառս իւր Հա- « մեմատ ցանկութեանց իւրոց՝ առ ի խնդիր պիտոյիցն։ « Արդ՝ եթէ յուսման խօսելոյ թէ ի կանոն ապաստան, « եթէ քերականութիւն ոչ խնդրի յառաջնորդ նմա ի « հայցուած կարևորաց, եթէ միայն հարկն մղէ, նմա- « նողութիւնն ուսուցանէ. և վարժութիւնն հաստատէ։ « Կամ եթէ ըստ Լոքայ՝ Մանկունք չպիտին ինչ « կանոնօք ուսանիլ. զի միշտ ի մոռացօնս « արկանին. ընդՀիր ոչ ապա և ի գրելն. ուր մին « զլեզուն, և միւս զգրիչ ունի գործի յայտնութեան « խորՀրդոց մարդկան։

« Կանոնք եզրակացութիւնք են, և բառք՝ գաղա-

« փարք առաքելոյն. իսկ արուեստ այն է՝ որ աստի-
« ճան առ աստիճան յառաջ տանի ի գիւտ այնց եղ-
« բակացութեանց և բառից, որով ոչ միայն ընդ ուսա-
« նելն խնդայ, այլ և յետ ուսմանն յարդ դնէ արգա-
« սեացն։ Յայս վախճան հայելով իմ, յերկուս մասունս
« տրոհեցի զայն գլուխ իմացական արուեստին, որ ու-
« սուցանէ զլեզուն հայրենի։

» 1. Ի գլուխն գաղափարաց. և 2 ի բառիւք
« յայտնութիւն նոցա Զառաջնոյն չէ ինչ խօսել աստա-
« նօր։ Իսկ զերկրորդէն յայտ է՝ զի պէտք է աշակերտ-
« տին ըստ չափու հմուտ ծանօթութեան նախագաղա-
« փարացն գոլ։ Զի հմտութիւնք բառից և ծանօթու-
« թիւնք առարկայից թև ի թև տուեալ չեմեն։ Յայս
« վայր բանացի ուսաւ՝ զոր ուսաւ մանուկն։ Արդ համա-
« ըելով զնա տասնամենից՝ և նախակիրթ ի գրչութեան
« արուեստին՝ երբև երկրորդ միջոցի յայտնութեան խոր-
« հրդոց իւրոց, աւանդեմ նմա ոճ հեշտընկալ, համա-
« ճայն բնութեան իւրոյ։

« Նախկին փորձ մանկան ի խօսելն՝ է թոթովել
« զանուանս. վասն որոյ և ես նախ զանուանս կարգեցի
« ի գրչութիւն։ Ամենայն մանուկ մարգեալ յԱյբենարա-
« նի իմում, յուշի ունել կարէ բառս բաւականս անուա-
« նել նոքօք զբազումս ի բնական և յարուեստական
« նիւթոց. որ ի նոցա առաջին աստիճան։ Ապա հարկ
« իրացն մղէ զնա յայտնել զ ո ր պ ի ս ո ւ թ ի ւ ն ս այնց
« անուանց, և յարմար ածականս դնել ի վերայ գոյա-
« կանի, որ լինի նմա յերկրորդ աստիճան։ Զհետ զայ
« գ ո ր ծ ո ղ ո ւ թ ի ւ ն՝ որ բ ա յ ի ւ ք բացատրի. Հիշտ
« պահելով զյարադրութիւն բնական ունակութեան՝ ընդ
« արուեստականին հմտութիւն։ Եւ այսպէս՝ ընդ ախորժ
« այս զառ ի վեր՝ ի ծանօթից յանծանօթս վերանա-
« լով նորա՝ լինի շարադրիչ քաջ. առանց իմանալոյ
« թէ զիարդ. և ի փորձոյ տեղեկանայ իսկական օրի-
« նաց լեզուին, առաւել հիմնաւոր և անսայթաք մի-

« ջոցոք՝ քան զոր ուսոյց երբէք քերականութիւնն։

« Ապա առ բարիոք կիրառութիւն երկրաբրառ
« շարադրչիս պահանջին հետագայքդ։ 1. Պարտ է նախ
« քան զձեռնամուխս լինել ի սոյն՝ գոնեայ ամսօրեայ
« ժամանակաւ պարապիլ յօրինակումն ընտիր ընտիր
« գրուածոց, որ ունակացուցանիցէ զնա ի ստուգութիւն
« և ի վայելչութիւն ձեռին։

« 2. Եղիցին նմա կրկին տետրակք. մի՝ վասն նա-
« խարտակաց, և միւս՝ վասն զսրբագրեալսն օրինակե-
« լոյ։

« 3. Նշանակեսցին ի նմա առարկայք բազմաւո-
« րականք, առնել ցուցակս ուրոյն. ըստ առաջին կար-
« գի գրոցս այսմիկ։

« 4. Յանձնեսցէ այր մերձաւորի ի ս ր ում զշարա-
« դրեալսն առ ի սրբագրութիւն սղալանացն. ապա
« առցէ զննել անձամբ, և եթէ գտցէ տակաւին վրիպա-
« կաց ինչ, արժանի քաջալերութեան դատիցի։

« 5. Վարժապետն ի սրբագրել իւրում, թող հար-
« ցանիցէ աշակերտին զպատճառ իւրաքանչիւր փոփո-
« խութեանցն։

« 6. Պատուիրեսցէ համաձայն օրինակաց որոնել
« գիւտս, և յեղուլ ի գիր։

« 7. Ցիւրաքանչիւր դասագլխի հարցանիցէ զմա-
« սունս բանի, զնշանակութիւն և զհոլովս բառից, և
« զխոնարհմունս բայից։

« 8. Տետր օրինակին տարցէ այր ի տուն, և ի
« նախարտակէն վէճիտ օրինակեալ՝ մատուցցէ վարժա-
« պետին։

« 8. Ցերկիցս յեօթնեկի ի Հայկական մասին կրը-
« թեսցին, և յերկիցս՝ յԱնգղիականին։

« 10. Բառարանք երկաքանչիւր բարբառոց միշտ
« առ ընթեր կայցեն նմա՝ որով դիւրաւ կարիցէ գտա-
« նել բայս յարմարս և յեռուլ ի նոսին. յառաւել ամ-
« բողջութիւն նախադասութեանցն կամ բանից»։

Ը. (1741.) ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ. «յանչիշատակ դարուց անտի ցյարձակումն Մահմետականաց, ըստ աւանդելոյ մատենագրաց այլ և այլ ազգաց։ Նուիրեաց ի պատիւ Հայոց Ազգին, Մեսրովբ Դաւթեան Թաղիադեանց, սարկաւագ սրբոյ Էջմիածնի. տպագրեալ յեպիսկոպոսական ձեռնարանին. Կալկաթա. 1841»։

Ի սկզբան մատենիս տեսանի վիմատիպ պատկեր մեծանուն վարդապետին Յարութիւնի Աբգարեան, և արձանագիր այսու օրինակաւ.

«Արդոյ Ասպետի Յարութիւնի Աբգարեան՝ բարե-
«կամիդ ի նեղութեան, որոյ տուն հիւրամեծար աս-
«պնջարան, և որդիք նախօգնականք տպագրութեան.
«զայս մատեան՝ ինքնաջան աշխատութեան դոյզն ար-
«գասիք յարուցանէ յարգանօք արձան յիշատակի ան-
«մահ երախտեաց ձերոց, ամենախոնարհ ծառայ ձեր
«Մ. Դ. Թաղիադեանց»։

Զպատուական հեղինակութենէս զայսմանէ՝ որ ունի 236 երես թղթոյ քառածալ գրեալ է իմ յ9-րդ ծանօթութեան կենսագրութեանս. և տուեալ ճաշակ զնմանէ. ուստի չունիմ ասել զայլ ինչ՝ բայց եթէ կրկնել զվիշտ իմ թէ՝ զիմբդ ոչ զլոյս տեսին մնացեալ հատուածք պատմութեանս մինչև ցգրաւել Անգլեացւոց և այլ Եւրոպացւոց զհամօրէն Հընդկաստան, առ որ ինքն հեղինակն գրգռէ զախորժակ ընթերցասիրին՝ ասելով ի կնիք վերջաւորութեան Ա. հատորոյս. «Այլ լաւագոյն ևս հասանէ ինձ ճառել զայսցանէ յերկրորդ հատոր գրոցս, յորում ի գիշերային խաւարէն առասպելաց՝ նոր արշալուսէ գոգջիր առաւօտ հաւատարիմ պատմութիւն»։

Է. (1845.) ԱԶԳԱՍԷՐ Օրագիր Արարատեան ընկերութեան, Քաղաքական, Տնտեսական,

Բնական և Բարոյական գիտելեաց. որոյ առաջին Թերթի Թուականն է 1845 աւգոստ 16. ի Կալկաթա։ Յերկրորդ Թերթին դնէ զբնաբանս ի ստորոտ փոքրին պատկերի Մասիս լերին Արարատեան՝ ուսումն առնէ զմարդ երջանիկ։ Եւ այսպէս շաբաթական հրատարակութեամբ զմի վեցամսեայն կոչելով Ա. հատոր, հասանէ ցԵ. հատորն և ի Թիւն 141. ի 24 Յունիսի 1848 ամի, յորում դժբաղդաբար լինի վերջ Ազգասէր օրագրին և լուծումն Արարատեան ընկերութեան։

Բայց ապա ի 16 սեպտեմբերի նոյն 1848 ամի վերստին սկսի հրատարակել օժանդակութեամբ ուսումնասիրաց Հնդկաստանեայց և այլոց, ոչ ի հաշիւ Արարատեան ընկերութեան որպէս յառաջն, այլ ի հաշիւ իւրոյ ինքեան Մ. Դ. Թաղիադեանի կրելով զանունս «Ազգասէր Արարատեան, հանրապատում տասնօրագիր», և բնաբան եդեալ ի շրջանակի պատկերի լերինն Մասեաց իբրև ծիածան՝ զայս բան, մաքուր խղճմտանքն առնէ զմարդ երջանիկ։ Նոր զնա կոչելով հատոր Ա. Թիւ 1։ Եւ այսպէս ժամանեալ ի սկիզբն յունվարի 1849 ամին, փառազարդէ զՀակատ օրագրին նախնի դրոշակօք և նշանօք Հայկազանց, վայելչապէս ի մէջ առեալ զանուն և զբնաբան օրագրին և զպատկերն Արարատայ, զոր յօրինեալ ասէ և նուիրեալ ի պարոն Մանուկ Թորոսեանէ։

Եւ ապա ի 15 սեպտեմբերի 1849. սկսեալ զերկրորդ հատոր օրագրին, փոխէ զտասնօրայն ի հանրապատում կիսամսագիր, և զբնաբանն ի վերհիմատ յայս բան՝ Աստուած և աշխատութիւն, հանելով և զպատկերս նշանացն, առանց յայտնելոյ ինչ զայնմանէ։

Յերորդում հատորի ջնջէ և զհանրապատում կիսամսագիր բառսն բայց դարձեալ կիսամսեայ հրատարակութեամբ հասանէ ի Թիւն 66. ամին 1851 վե-

տրվար 15. և գաղարի հանգիստ բառիս վերջաւորեալ։ Եւ ապա ի 15. սեպտեմբերի նոյն 1851 ամի վերստին հրատարակի երկիցս յամսոջ՝ շարունակեալ ի 67 թուէն, որ ժամանէ մինչ ց'86 թիւն – 15 յուլիսի 1852 ամի, յորում ի սպառ դադարի ի ցաւ և ի վիշտ համօրէն ուսումնասիրաց։

Այս օրագիր կամ վիպագիրս Ազգասէր, պիտանի է յոյժ և պատուական, ոչ միայն սակս ժամանակագրական անցից համազգեաց մերոց ի Հնդիկս, այլ և վասն պատմական հնութեանցն, որովք լի է ամբողջութիւնն բազում նշխարօք Ազգային պատմութեան հնոց և նորոց, և անթիւ օգտակար տեղեկութեամբք և զուարճաբանութեամբք, անհամեմատ ամենայն լրագրութեանց Ազգիս մինչև ցայս օր։

ը. (1846.) ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԻՑ, յօրագրէ Մեսրովբայ Դ. Թաղիադեանց Վ. Ա. սարկաւագի ս. Էջմիածնի։ «Արդեամբ և ծախիւք պարոն Յովհաննիսի Սարգսեան Սալմաստցւոյ։ Հատոր Ա.։ Ի տպարանի Աբարատեան ընկերութեան ի Կալկաթա. 1846»։ Քառածալ 281 երես։

Ցաւալի է ինձ կրկնել զստանօր զվիշտ իմ, զի կարևորագոյն պատմութեանս այսմիկ երկրորդ հատորն չետես զլոյս տպագրութեան, և ի կորուստ մատնեցաւ ընդ այլ ձեռագրաց հեղինակին։ Ցառաջ բերեալ ըստ թուղթ նորա առ Սատար տպագրութեան պատմութեանս, կամիմ վշտակից ինձ առնել զբանասէրս Ազգիս, թէ զինչ ինչ ունէր պատմել յերկրորդում հատորի գործոյս, և թէ զիմբդ բաղձայր և ինքն հեղինակն տեսանել տպագրեալ զաշխատասիրութիւնս իւր։

« Ցարգոյ պարոն Յովհաննէս Սարգսեան Սալմաստացի իմ քաղցր հայրենակից.

« Քանի ամօք յառաջ տպագրութեամբ հրատարակեցի զառաջարկութիւն ինչ՝ ի մասին բաժանորդագրութեամբ տպագրութեան Հանուր Օրագրութեանցս, որոյ մասունք ինչ էին ոչ միայն պատմութիւն Հին Հնդկաստանի, այլ և սա այս գործ։

« Երկրորդ հատոր գործոյս, որ ի լոյս բերէ զստոյգ տեղագրութիւնս Ատրպատականի, Եկպատանայ, Պարսք նահանգի, և կղզեաց Պարսկային ծոցոյ, զլերինս, զդաշտս, զանապատս մեծամեծս, զբերս, զհանքս, զգետորայ և զջրանցս, զծով, զբարս և զբաժանումն ժողովրդեան, զլեզու, զկրօն հին և նոր, զծէս, զտարազ, քաղաքականութիւն, զինուորութիւն և այլն. հանդերձ առանձին և առանձին հանգամանօք անձին և պատահարաց՝ մնաց այլում ժամանակի ապաստան։

« Յումպէտս լինէին արդեօք բազմամեան թափառանք ընդ աշխատանաց, եթէ չէր ազգասիրիդ զաջ շնորհաց կարկառեալ, և ի հինաւուրց փութենէ ի լոյս ընծայեալ զսա՝ ի փառս անուան քում, յազգաց յազգս յաջորդութեանց աշխարհի։

« Թող ի պարծանս հողոյ հայրենեաց գրեսցի մեր երկուց վտարանդեաց ինքնայօժար այս ծառայութիւն։ Իմ, ի հաւաքելն, և քոյ ի սփռել զսոյն յԱզգի մերում։ Որ եթէ բարի ինչ՝ փառք Աստուծոյ և Ազգիս Հայոց համարեսցի, իսկ թէ ոչ՝ վնաս և ոչ ումեք արարեալ, քարոզ կենդանի գոնեայ եղիցի յօժարութեան սրտի քոյ առ տարածութիւն գրագիտութեան հայրենեաց, որում այսչափ ազգասիրաբար երախտաւորալ յօժարութեամբ հաճեցար։

« Թող Աղամասա ի քէն սկիզբն արասցէ պարծիլ, որ ոչ միայն գրաւորական յառաջադիմութեան Ազգին քոյովսանն հանդիսացիր, այլ և ճշմարիտ ազգասիրութեամբ և ճշմարիտ ևս բարեպաշտութեամբ՝ բազում Հայ անտերունչ որբոց եղեր հայր բարեխնամ, և առ ի լոյս գիտութեանն առաջնորդ։

«ԵԹԷ մինչ այսպէս՝ հասցա և ես ի պարծանս «անձին համարեցայց, մնալ իմ քաղցր հայրենակից, «խոնարհ ծառայ՝ Մ. Դ. Թաղիադեանց»։

Բ. 1846.) ԱՌԱԿՔ ՊԱՐՍԻՑ. Թարգմանեալ հանդերձ յաւելուածովք ի տպարանի Արարատեան ընկերութեան, Կալկաթա. 1846։ Գոր ծ փոքրիկ վեշտասանաձալ 84 երեսօք, զուարճալիք յոյժ. զորմէ ա գ դ առնէ հեղինակն ԹԷ՝

«Զառաջին մասն գործոյս թարգմանեցի ընտրա-«նօք ի Հայս, յաւելեալ ինչ ինչ և ի գրոց և ի բրոց։ «Լսել և գրել զայսպիսի անգամ, լաւագոյն վարկայ «քան զդատարկութիւն. և ԵԹԷ ընթերցողիդ ևս նմա-«նապէս համարիցի, ահա շահեցայ զժամանակն ամե-«նագին. իսկ ԹԷ ոչ՝ աւել—պակասին թողութիւն «շնորհել մաղթեմ»։

Աւասիկ և գողտրիկ նամակն՝ առ որ նուիրի մա-«տենիկս.

«Տիկին Լիտիշա Խ. Յովհաննեան, սիրելի քոյր իմ։

«Օրինօք եղբարց է սովորութիւն ազնուական «պարգևօք տպաւորել զյիշատակ սիրոյ և մեծարանաց «ի միտս քերց իւրեանց։ Ես զի չունիմ շար ականց «պատուականաց, մատուցանեմ քեզ շար առակաց բա-«նականաց, զոր ԵԹԷ սիրով ընկալեալ և արկանիցես «զանձամբ՝ ոչ սակաւ շուք դիցէ քեզ քան զանդա-«մանդ պսպղուն, և ինձ ոչ սակաւ ուրախութիւն, որ «այսպէս մեծարել կարացի զքոյը։

«Սուրբ խանդաղատանօք եղբայր և ծառայ քոյ՝ Մ. Դ. Թաղիադեանց»։

Գ. (1846.) ՎԷՊ ՎԱՐԴԳԻՍԻ տեառն Տուհայ, ի հնութեանց հայրենեաց գաղտիարեաց յարդին ոճ և

գիր ազգիս, Մեսրովբ Դ. Թաղիադեանց Վ. Ա. սարկաւագ սրբոյ Էջմիածնի. ի տպարանի Արարատեան ընկերութեան ի Կալկաթա։

Զյառաջաբան այսր վիպի ընդօրինակեմք աստանօր, ի տեղեկութիւն բանասիրաց զխորհրդաւոր նիւթոյ գործոյն.

«Ըստ որում ոչ որպէս փափագ էր ինձ՝ ի յանգ ել «այս աշխատութիւն, վասն որոյ և տարապարտ իմն «վարկայ մանրապատում ճառագրել զգիւտոյ և գերե-«լից ինձ լինելոյ գրոցս՝ վարաց ի վայր աստանդիկ. «Շնա՛ մի՛այն զայս համարեալ ծանուցանել՝ թէ կարի «նորօրինակ իմն ձևանայ մտաց պատմութիւնն ման-«կանն Վարդգիսի տեառն Տուհայ, որ հատուած եկեալ «ի Հայս ըստ համառօտ վկայութեան Փերթողահօր «Խորենացւոյ՝ նստաւ զԲասաղ գետով, զՇրէգ բլրով և «զԱրտիմէդ քաղաքաւ, կռել կոփել զգուռն Երուան-«դայ արքայի։ Եւ շինեաց զհօր տանն Վարդգիսի, զոր «յետոյ ընդարձակեաց Վաղարշ արքայ Արշակունի, և «յիւր անուն կարդաց զնա Վաղարշապատ։ Խորին «խրթնաբանութիւն ոճոյն, խորհրդաւոր փոխաբերու-«թիւնք վիճակի, և վարուցն Վարդգիսի՝ անաւօտ «զգործն կացուցանեն ի հնութեանց անտի եկեալ Աս-«քանազեան պետութեան. սակայն և ճշմարտապա-«տում հանգամանք գործոց տակաւին զներհակն հաստա-«տեն։ Ապահովեալս իմ ինքնին, և ապահովացուցա-«նել կարեմ նաև զվերծանողս սորին, թէ միանգամ «ընթերցեալ, այլ ոչ կարեն մոռանալ»։ Թէպէտ և ոճ «շարակարգութեան չիցէ պատմական՝ սակայն և որ «ազգի հին պատմութիւն չիցէ արդեօք քերթողական։ «Բայց և այնպէս՝ կատարեալ պատմութիւն համարելի «է այս, որ ոչ ծնունդ աստուածոց տայ, և ոչ սնունդ «ի գայլոց։ Սկիզբն պատմութեան բացեալ ի վերայ «բազմայառաջ վտակացն Երասխայ, արդարև թուա-«ցողական իմն է. ոչ ուրեք պատահեցայ ընթեռնուլ

« թէ Սկայն վիպի երիք կամ առասպելի, այսքան ցա-
« ւագինս երևիցի ընթերցողին ի գլուխ իւրոց մեծա-
« գործութեանց։ Խորին լռութիւն, միայնութիւն, և
« թշուառութիւն կարապետք են ընթացին Վարդգի-
« սի։ Տոգորեալ ի տրտմութեան՝ մէն և թշուառիկ
« շրջի զհասարակ գիշերով ի փողոցս Արմաւրայ, երբեմ
« խոտան ազգի և արհամարհ աշխարհի։ Թերևս առա-
« ւել պանծալի առնել որ գրեացն զսոսա, եթէ ի մէջ
« բերէր վերստին զԳորիս Կագմեայ՝ զայրն ապերախտ
« ի վրէժխնդրութիւն Վարդգիսի ընդ հետևեալ հա-
« տուածսն, այլ այս դոյզն պակասութիւն կրկնապա-
« տիկ վճարի հետագայ հրաշալեօք անցից նորա։ Որ-
« պիսի են նկարագիրք տեսարանացն ընդ Աբեղինի և
« սրիկայիցն. պատահարք պարտիզի բլրոյն, գաղտնի
« ժողովք ապստամբից. յայտարարականքն Աբեղինի
« առ Արմաւրացիսն. անցք անձկալիք Զուրանայ, յան-
« կարծ երևումն աբեղինի առ Արքայ, վերադարձն
« Զուրանայ, յանձնառութիւնն ահաւոր, վարձն անգին,
« և մեծ կատարածն այն՝ ուր Աբեղէն մատնի յատեան
« Արքայի. գաղտնիք ապստամբիցն մերկապարանոցք
« լինին. Զուրան փոխի յԱբեղէն, և Աբեղէն ի Զուրան,
« բանտարկութիւն չարախոհից, յայտնութիւն Տեառն
« Տուհայ և հարսանիքն Հայկանդխտոյ։

« Լեցի որպէս և լցէ, տակաւին մեծագին գովքը
« հնութեանց համարի, ոչ միայն ի սակս մեծաշուք
« անցից նախնեաց մերոց, այլ ի վէպս անդողդոջուն
« քաջութեան սրտից նոցա։ Մի տող ի սմանէ շատ ար-
« ժէ ի զարթուցանել զոգիս քաջացն Հայկազունեաց,
« որում յաւէտ պէտս ունիմք, քան զհազար մատեանս
« վեհերոտաց։

« Ճշմարիտ Ազգասիրին է օրինակաւ քաջի գոր-
« ծոց նախահարց՝ զոգիս որդւոց զարթուցանել յազա-
« տութիւն հայրենեաց։

Մ. Դ. Թ.

Ժ. (1847.) ՎԷՊ ՎԱՐՍԵՆԿԱՆ Սկայուհւոյ Ա-
զգուանից ի հնութեանց հայրենեաց փոխեաց յարդի ոճ
և գիր Մ. Դ. Թաղիադեանց Վ. Ա. սարկաւագ սրբոյ
Էջմիածնի. ի տպարանի Արարատեան Ընկերութեան ի
ի Կալկաթա. 1847.

« Նուիրեալ արժանամեծար Տիկին Մարիամայ Յ.
Յակոբեան և օրիորդ Թագուհւոյ Մանուկեան Քերց Ա-
ռաքինեաց և Մարց արդի գրագիտութեան Ազգիս»։

Ահա և սորայս Առաջաբան արժանի լսելեաց.

« Արդի Գրիչք Եւրոպացւոց գրեթէ մինչ առաս-
« սելեօք գեղեցիսեն զգրուածս իւրեանց, որպէս զի ա-
« խորժընկալ յօրինիցեն ընթերցողին զվարդապետու-
« թիւնս բարուց։ Վեճակեալ աստանդական կենաց և
« բազմագրաղ սլատահմանց՝ հազիւ ուրեմն պատեհ կա-
« լայ հրաշանալ յայսպիսի, թէ ընթերցանութեամբ՝ և
« թէ գրութեամբ իսկ։ «Պատահեալ երբեմն լեզուա-
« գէտ Սիրելւոյ՝ զի ընթեռնոյր Առասպելս այլազգենիս՝
« հարցի, թէ «ընդէ՞ր Հայերէն ոչ ընթեռնուցու»։ Պա-
« տասխանեաց՝ Վասն զի ամենայն գրեանք մեր ծանր
« և լուրջ գիտութիւնք են, և զբօսանս մատց ոչ տան»,
« Ցոյց միայն զքաջալերութիւն քո առ այն՝ և ի դմին
« յայդոիկ անգամ ոչ պակասին գրիչք ազգին». ասացի,
« դարձայ, նստայ և գրեցի զայս։ Թերևս զբաջան աշ-
« խատութիւն համարիցի այս սակայն և այնպէս՝ եթէ
« կամի ոք լեզուին պայծառութիւն, մանաւանդ յան-
« հուն օտարութեան այսմիկ՝ պարտի և զայսպիսեաց
« բուռն հարկանել։

« Պատմութիւնս բանի զիորին գիշերով՝ ի մէջ ե-
« րից քաղցեալ և յուսահատ աղքատաց—Վաչագան
« նոր օրինակ խորհրդով լսէ և կատարէ զինդիրս նո-
- ցա. հասարակաց ասուլիսք զնմանէ. գերօրինակ հնա-
« զանդութիւն Վարսենկան, Աստուած և աշխատու-
« թիւն Գուրգենայ. վտարանդի գնալ նոցա յաշխարհն
« Մարաց։—Օձահարին բժշկութիւն. Պտղունց Վարսեն-

« կան ի սարգևս Վալէթայ. խորամանկութիւն Սարա-
« ւաղինայ, և դստերն հրապոյր. կալանաւորութիւն
« Գուրգենայ ի դիւանոց Ատրնուշայ. և ահռելի տե-
« սարանք զազրանաց՝ որ անդ. սատակումն դիւապե-
« տին դստեր, և սպառումն դիւացելոցն ի միմեանց,
« տագնապ Վարսենկան, քաջութիւն և կասկածանք
« Վալէթայ. Ապարանքն յայտնութեան, և հրեշտակք
« Գեղինակայ և Արզունեայ՝ աւարտ տան Առաջին Հա-
« տորոյ Վիպիս։

« Որոց միանգամ կրճատ երևեցի պատմութիւնս, գի-
« տասցէ զի զոր գրեմք և տպեմք, ըստ արդի հանգամա-
« նաց տնօրինեմք. ապա թէ ոչ՝ միայն անցք Վիրաւորին
« Ատրնուշ՝ բաւական լինէր միւս ևս հատորոյ. և Վա-
« լէթայն «վաղիւ անդրն» չգիտեմ ցորքան ոչ ընդար-
« ձակէր անզբաղ մտաց։ Ո՞րպիսի հրաշալիս ոչ ի մէջ
« առնուին զկիզբն և աւարտ խորհրդոց Վաչագանայ՝
« յորժամ զդստրիկն զուր և ունայն աքսորեալ ի սահ-
« մանաց Աղուանից. և այլն։

« Բաց ի սմանէ և ճանապարհորդութիւն իմ,
« Դաստիարակութիւն օրիորդաց, Ազգասէր լրագիր, և
« առաւել քան զսոսին Ս. Սանդուխտ դպրոց և ամե-
« նայն պարտիք նորա համընթաց արշաւելով ի փորձ
« և ի մամուլ, հազիւ թէ ներէին ինձ գեթ միանգամ
« վերծանել ի վաղուի՝ զոր այսօր գրեալ էի, ուստի և
« առաւել քան զայս՝ ոչ անձին զբօսանաց միջոց էր
« իմ, և ոչ ընկերին։

« Առ բազումս ցրուեալքն տկարանան»։

Ցառաջարան բերեալ զերկուց վիպասանութեանցս այսոցիկ Վարդիսի և Վարսենկան զնախարանութիւնս, յայտնեմ և զիմ խորհրդածութիւնս՝ զոր յղացեալ է իմ զարմանօք յօրէ անտի ընթերցանութեանս, թէ զինչ է զոր ասէ Հեղինակն թէ՝ «ի Հընութեանց Հայրենեաց փոխեալ յարդի ոճ և գիր». որ հնութիւնք են արդեօք այսոքիկ, արդեօք ի հնագոյն

ձեռագիր մատենից հանեալ ի լոյս, արդեօք որ լեզուաւ և գրչութեամբ էր, Հայերէն, Պարսկերէն թէ Յունարէն. յորոց փոխեալ յարդի ոճ և գիր։

Զայսպիսիս խորհրդածէի հետաքննութեամբ. և խնդրէի զլուծումն գաղտնեացս, մանաւանդ յորժամ ընթերցայ յԱզգասէր օրագրի Հեղինակին (Հատոր Բ. 1846, թիւ 32. երես 94.) զհետագայ հատուած բանի.

« Պատմութիւն Վարդգիսի մերոյ հրաշապատում որպէս
« և է, յինքն բերէ ազգի ազգի հնութիւնս. յորոց ոչ
« միայն Ազգ մեր, այլ և աշխարհ գլխովին անծա-
« նօթ է մինչև ցայսօր ժամանակի։ Եթէ ական Ա-
« մաւրայ յայտնի եղեալ էր մեկնչաց սուրբ գրոց, կամ
« հին իմաստասիրաց, անխափան յայլ իմն տարագ գը-
« րէին բրգունք և բաւիղքն Եգիպտոսի։ Ցես Հայդ հայ-
« րենասէր, և ուրախ լեր ուրեմն. զի ի քէն ծագեցաւ
« և ծագեսցի լոյս յաշխարհ ընդհանուր»։

Ցաւելաւ հետաքրքրութիւն իմ և ևս՝ ընթերցեալ ի նոյն Ազգասիրի (Թիւ 43. երես 194.) զգրութիւն ինձ նման հետաքնին Հայազգւոյն, որ հարցանէր այսու օրինակաւ.

« Ցարգելի պարոն Մ. Դ. Թաղիադեանց վերատես-
« ուչ Արարատեան Տպարանի։

« Բազում խնդութեամբ տեսանեմ ի լոյս ընծայեալ
« ի քումմէ երկանց՝ նորալուր Ոսկեղինիկ մատեանն Վարդ-
« գէս կոչեցեալ՝ ի հնութեանց Ազգիս գաղափարեալ յար-
« դին ոճ և գիր։ Զմայլեալ ի բանս հնութեան և լեզուի Ազ-
« գիս բովանդակեալ յայնմիկ՝ համեմատ պանծալին մեր
« Ագաթանգեղոսի և Թերևս առաւել հնութեամբ քան
« զայն, փափագելի է որպէս ինձ, այնպէս և կարծեմ թէ
« Ազգիս համօրէն՝ տեղեկութիւն հանգամանաց մատե-
« նիդ. թէ ուստի գտեալ ելցես զայսպիսի գանձ հնու-
« թեան, կամ յինչ ոճ գրութեան նախագաղափարն սո-
« ին ելցէ. այսոցիկ տեղեկութիւն և վաւերութիւն օգուտ
« մեծ ունին գործել Ազգիս. վերամբարձ աճելով միան-

գամայն զյարգ արժանեաց մատենիս. վասն որոյ սովաւ խնդրեմ, զի եթէ չիցէ ինչ ներհակ կամաց և դիտմանց քոց, բարեհաճեսցիս տալ Ազգիս զլիակատար տեղեկութիւն հանգամանաց հնութեան մատենիդ ի յարժանաւոր վիպագրիդ Ազգասիրի, որոյ վասն գոհ եղէց ի սրտէ:

« Յանկալով շարունակութիւն ազգասիրական վաստակոյդ.

Մնամ քոյդ բարեմաղթ. Մանուկ Զօրաբեան»:

ի Կալկաթա 14 մայի 1846։

Այսմ երաւացի խնդրանաց պատասխանի տայ Հեղինակն հետևեալ բանիւք, որ ոչ միայն ոչինչ իւիք յագուրդ տայ ըղձից բանասիրաց, այլ առաւել ևս գրգռէ զախորժակս, և տայ ողբալ ընդ կորուստ անտիպ մնացեալ երկասիրութեանց նորին.

« Յարգոյ Համասպատասխանուոյ և նովաւ պատուելի Ազգիս ընդհանրապէս յայտ լիցի, զի որպէս ընթերցողն նոյնպէս և տպագիրս վիպին Վարդգիսի՝ « քաջիկ Ճանաչէի զօգուտն մեծ՝ որ ի վէճս հանգամանաց անտի գիւտոյ և գրութեան նորա. բայց զարդիս « ոչ կամեցայ տալ՝ քանզի գրեաթէ բոլոր կենօք աստանդական՝ բոլոր գրուածք իմ Օրագրականք են, որոց « մեծապէս անկրաւ էի, եթէ զամենայն հատուած առ « հատուած բանայի և դնէի զառաջեաւ։ Ինձ կամք եղեն « շատ անգամ տպագրել զՕրագիր Ճանապարհորդութեան « իմոյ. և առ այս՝ ամօք ինչ յառաջ շրջաբերական արա- « ի ընդ պաշտպանութեամբ Պարոն Սէթայ Յ. Արգա- « րեանց, որոյ գէթ ծախք թղթարանին ի ձեռս չեկին: « Արդ ևս ի նոյն կամի կամ, և եթէ սիրելի եցէ պա- « տուելի Ազգի իմում տեղեկանալ հանգամանաց Վարդ- « գիսի և սկզբնատարերաց Ազգային Նշխարաց ցանե- « լոց աստ և անդ յէջս Ազգասիրիս այսորիկ՝ ուրեմն « շնորհ արասցէ մի կամ միւս եղանակաւ զտպագրու- « թիւնէ նորին մեզ քաջալերս մատուցանել և անդուստ « տեղեկանալ։ Ապա թէ ոչ՝ համբերեսցէ մինչև ես « հարստացեալ, եթէ մնայցեմ նոյն, որ ինչ և արդ եմ, « տպեցից. քանզի թէպէտ և ես ոչ հարստացայ և ոչ « գիտեմ, բայց լսեմ որ ասեն, թէ Ճոխութիւն ի ո- « վ ի ս ի ճ ոխ է զ բ ն ո ւ թ ի ւ ն։ Մ. Դ. Թ.»։

Եղուկ անվուութեան և անգրասիրութեան Ազգիս, մանաւանդ հարստաց և Ճոխացելոց՝ որք գօսացուցանեն զՀեռս յօժանդակութիւն տպագրութեան այսպիսի հազուագիւտ հեղինակութեանց։ Մէն միայնակ պարոն Սէթ Արգարեանդ այդ կարող էր զամենայն գործս Թաղիադեանի ի լոյս հանել. բայց ընդ ոմն խոսիմք... ահա լսեմք, զի ամենայն հարստութիւնք դորա կատակեալ են Անգղիացի կնոջն և տիրացեալ յետ մահուանն (1884)։

ԺԷ. (1847.) ՄԵՍՐՈՎԲԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԱՆԿԱՆՑ. տպագրեալ ծախիւք տիկին Շուշանայ Մ. Դ. Թաղիադեանց, ի պէտս Ս. Սանդուխտ դպրոցի իւրոյ. ի տպարանի Արարատեան ընկերութեան ի Կալկաթա. 1847։

Նուիրեալ է մատենիկս ի դիմաց տիկնոջն առ Մարիամ և Մամար աղնիւ օրիորդս Աղայ Յովհաննէսեան Էլիազեանց, որոյ յառաջաբանն քաղցր է լսելեաց ախորժողաց դաստիարակութեան մանկանց։

« Որոց միանգամ ոգիք եռանդունք եցեն վարժե- « լոյ զմատաղորեաւ աշակերտս իւրեանց յուսումն պի- « տանի, տարակուսին արդարև ըստ իս՝ թէ յետ աւար- « տելոյ Հեգարանին զինչ ունիցին տալ ի ձեռս նոցա։ « Փերականութիւնք ազգի մերոյ մինչ ցարդ երևեալ՝ « բազմահմուտ և նուրբ որքան և ենն, ահաբեկ առ- « նեն զմանկունս լոկ ահագնութեամբ դրիցն. միւս « դպրոցական գրեանք այն պատուականագոյնք ըստ « ինքեանց՝ որպիսիք են քաղաքավարականին հատորք « ի Կոստանդնուպոլիս. և վարժութիւն մանկանց ի

« Վենետիկ. սակայն յոՀ գաւառական գոլով՝ գրեթէ
« անհասկանալի մնան ի մերոց՝ նաև օգնականութեամբ
« բառարանաց։ Վասն որոյ թէպէտև նախ քան զայս
« յօրինեցի զհեգաբան մի և զշարադրիչ առ ի պէտս
« մատաղ հասակաց, բայց այն զի երկոքին ևս գրեթէ
« ծայրք էին ըստ ուղիղ կարգի դաստիարակութեան
« մանկանց, հարկեցայ զարդիս հաւաքել և զայս տե-
« սակ գիտելիս, զի վայելուչ խառնութեամբ բնակա-
« նացն ընդ արուեստականացն կամ աստուածայնոց՝
« առաջնորդեցից նոցա ի գիւտ ՀՀշմարիտ գիտութեան
« և ի ծանօթութիւն կամաց Աստուծոյ։ Ցայս գործ ա-
« ռաջնորդ կալայ ինՀ զԱնգղիերէն և զՀամանուն
« գրքոյկ իմն, բայց տեսեալ թէ և՝ առանՀին ծանօ-
« թութիւն իմ, մանաւանդ ի մասին հայրենեաց մերոց՝
« բազմօք առաւելուլ կարէր յայն՝ ոչ բնաւ խնայեցի.
« քանզի ինչ օգուտ գիտել մանկանց զօտարին՝ և իւ-
« րեանց բնիկ հայրենեաց անծանօթ մնալ։

« Եպերանս յայս իմ վաստակ ոչ ընդունիմ, որոց
« կարծիք ելցեն թէ միութիւն և հարթութիւն չունիցի իմ
« առաջնորդ, այլ նիւթոց ի նիւթ ոստոստայ և խորշոց
« խորշս ի զոզէ և ելանէ։ Արդար է. բայց նախ՝ եթէ
« ոչ ոք ի չափահասիցն յիշել ախորժիցի զիւր ման-
« կութիւն, ես ախորժիմ։ Մանկունք զանազանօքն
« զուարճանան։ Եւ երկրորդ՝ զի հարթ ուղի կարավա-
« նաց է, և անկարօտ առաջնորդի։ Ագատաց և կորո-
« վեաց չիք առաւար։ Քաջաց են պէտք առաջնորդաց։

« Եթէ այս ոՀ դպրոցական ուսանելեաց՝ հաՀ և
« հաւան լիցի պատուելի ծնողաց և վարժապետաց ազ-
« գի մերոյ, և շնորհ արասցեն ՀեռՀ տալ տկարութեա-
« նըս՝ յանՀն առնում իւրաքանչիւր մակացութեանց
« զմի մի գրքոյկ յօրինել, մինչ որքան և կենդանիս
« ելցեմ, իսկ թէ ոչ՝ ուրեմն բարեաւ մնան։ Մ. Դ. Թ.»

Փոքրիկս այս մատենիկ 198 երեսօք, պարունակէ չինքեան բազում բառս բուսոց և տնկոց և ծառոց և

արհեստական գործեաց Հայերէն լեզուաւ, զորս չէ տե-
սանել ի բառարանս մեր, բազումք ի նոցանէ գաւա-
ռական գեղեցիկ բառք են Հայաստանի, և բազումք
հնարեալք ի Թաղիադեանէ, որ հանՀարեալն է ի հնա-
րել։

ԺԴ. (1847). ՍՕՍ ԵՒ ՍՕՆԴԻՊԻ. Աբար. Մ. Դ. Թա-
ղիադեանց Վ. Ա. ի Կալկաթա ի տպարանի Աբարա-
տեան ընկերութեան. 1847 *)։

Քերթուածս այս՝ զլուխ գործոց բանաստեղծական
հանՀարոյն Թաղիադեանի չունի յառաջաբան ինչ. բայց
զայս և եթ նամակ ընծայական։

« Ա. ՀայուՀի Հայրենասէր.

Տիկին քոյր։

« Շնորհօք վերականամ ՀՈԳԻՈՑՆ Աստուծոյ վսե-
« մանամ արդարև, ոչ այնքան ի գիւտ անարուեստ եր-
« գոց որքան, կենդանարար երախտեաց ՀԱՅՐԵՆԱՍԷՐ
« ՀԱՅՈՒՀԻՈՑԴ, որ ոչ միայն առաջին հանդիսացար մե-
« ծապարգև առատաՀեռնութեամբ պսակել զիմ փծուն
« ՀեռագՀը, այլ և անխնայ մատակարարելով զյն և
« զանթերի ծախս տպագրութեան սորա՝ մատուցեր զսա
« ի զբօս և ի զուարՀութիւն տիկնաց պատուականաց մե-
« րոյ աշխարհի։

« Մի ևս համարՀակեսցի պարծել պարնասիս ի
« դստերս երգոց իւրոց, այն ինչ արև չնորհաց փայ-
« լեալ ի Հայաստան՝ երևեցուցանէ զՀԱՅՈՒՀԻԴ ՀԱՅ-
« ՐԵՆԱՍԷՐ յեթերաՀեմ ի գահ Մասեաց ընդ Անահ-
« տայ և Նանեայ՝ ախորժալուր նուագել զաշխոյժ նա-
« խահարց Ազգիդ։

---

*) Այս քերթուած կրկին տպագրեցաւ Կ. Պոլիս ի փոք-
րիկ դիրս, յամին 1871։

« Մի՛ և ես յաւելցին լեզուք վեհերոտք զմարգա-
« ըէութիւն թիւր մարգարէանալ ի վերայ հրեշտակու-
« հեաց տանս Թորգոմայ, որք վաղու և սկսեալ՝ և
« Քեի զարգիս խրախուսին անմահիցն զմայլիլ ախորժ
« նուագօք։

« Երանի՛ էր ինձ, եթէ գործն դուզնաքեայ՝ որ միայն
« ժոլ առ և գիր եղեալ՝ արժանի ինչ լինէր երախ-
« տեաց ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՀԱՑՈՒՀԻՈՅԴ. բայց որովհետև
« ոչ այնպէս, յաւելու նա մանաւանդ զշուք հայրենա-
« սիրութեան ձերոյ՝ քան զարժանիս իւր, և խրախոյս
« բառնայ գերաբուեստ եղբարց իմոց առաւել ևս հան-
« ճարով մղել ի հանդէս փառաց հայրենեաց։

Ամենախոնարհ ծառայ
Մ. Դ. Թաղիադեանց։

Այս սքանչելաբուեստ բանաստեղծութիւն՝ որ զՍօս Հայ նախարարազուն սիրահար առնէ Սոնդիպեայ արքայազուն Հնդկուհւոյ, այնքան քաղցր և սիրուն ոճով է գրեալ և չափեալ, և այնքան ճոխ հնախօսութեամբ մերոց հայրենեաց, մինչ զի ըստ իմոց ախորժակաց գեր ի վերոյ դասել զսա՝ քան զամենայն գործս Թաղիադեանի. որ համառօտութեամբ իւրով հանդերձ զբազումս ներշնչէ զիմաստս և արծարծէ զխանդ և զեռանդ։

Զի կարելի ճանաչանալ հարիւր անգամ կարդալով. այնքան համեմեալ եմ ախորժալուք բանիւք, և գողարիկ ասացուածովք։

Եւ խորին հմտութիւն Թաղիադեանի՝ պատմութեան մերում և օտար հին ազգաց, փայլի ի ծանօթագրութիւնս հնգեակ երգոց մատենկանս, յորում նիւթ բազում կայ արժանի հետազօտութեան և գիտութեան պատմաբանից։

Ի վերջ սոյն ծանօթութեանցն, այսպէս գրէ յաւերժայիշատակ հեղինակն.

« Աւարտ գրոցս շուտափոյթ գահավիժեալ՝ գուցէ
« ի կախ պահիցէ զուշ ընթերցողին, այլ զի տղայական
« ժտութեամբ քան թէ քերթողական յղկութեամբ
« սկսեալ և կատարեցաւ գործն, ներողութեան կարօտի՝
« քան դատաստանի։

« Շնորհ կալցի Հօրն *) որ յայտնելով զպակասու-
« թիւն պատմութեան Հ ի ն Հնդկաստանի, ի մասին
« նախնի երթևեկութեան Ազգիս յայս աշխարհ, **),
« տեղիք ետ ինձ յայս յօրինուած. լիցի որպէս և էր,
« տակաւին այս առաջին եղև ի ձեռագիրս իմ, որ գնոյ
« արժանացաւ ի մէջ Ազգիս մերոյ։

ԺԴ. (1847) ՃԱՌ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ. ըստ խնդրոյ Պարոն Յովսէփայ Աղաբէգեան, նուիրեալ առ գերապատիւ Տիկին Եղիսաբեթ Յ. Սարգսեանց, Նախամայր Ազգային յառաջդիմութեանց ի Կալկաթա։

Տետրակ մի է սա փոքրիկ, բայց յոյժ իմաստալից և հրահանգիչ դաստիարակութեան օրիորդաց Հայկական կրթութեամբ, որ աւաղ բարձի թողի եղեալ է ի մեզ։

ԺԵ. (1847) Վկայաբանութիւն Սրբուհւոյն Սանդրխտոյ, տետր փոքրիկ.

---

*) Երևի թէ արկանէ առ տէր Յովհաննէս Խաչկեան հոգևորական աւագերէցն Կալկաթու, որ բազմաց յորդոր և ձեռնտու եղեալ է հեղինակին։

**) « Յայս աշխարհ » ասելով՝ պարտ է իմանալ զաշխարհ Հնդկաց։

ԺԸ. (1847) Կարգք և կանոնք ս. Սանդուխտ դըպրոցի, նոյպէս տեառը փոքրիկ։

ԺԹ. (1847) ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Մեսրովբայ Դ. Թաղիադեանց Վ. Ա. սարկաւագի սրբոյ Էջմիածնի, ի Հայս· հատոր առաջին. տպագրեալ արդեամբք Ազգի մերոյ ի սիւնիս Հնդկաց. ի տպարանի Արարատեան ընկերութեան, ի Կալկաթա. 1847։ Նուիրեալ է Մատեանը՝ «առաքելապատիւ տեառն Ներսիսի Ազգասիրի Ծայրագոյն կաթուղիկոսի ամենայն Հայոց հօր և Տեառն, ի պատարագ ակնածութեան յուսով ընծայաբերեալ։»

Զմասն ինչ ուղերձիս այսորիկ ետես ընթերցողն ի սկիզբն կենսագրութեանս, իսկ զ ա ռ ա ջ ա բ ա ն ն ոչինչ դանդաղիմ դնել աստանօր ամբողջութեամբ, քանզի ի նմին ամփոփին բազում աշխատասիրութիւնք հեղինակիս, որք տակաւին յիւրումն կենդանութեան ի կորուստ էին մատնեալք, լուիցուք։

« Որպէս մինք մարդկան, նոյն և մարմին յարա-
« շարժ զգայարանօք պատշաճեալ ի բարերար Աբար-
« չէն, ոչինչ այնքան օգտակար և ախորժ համարին՝
« որքան զպատմութիւն շարժական աստանդականի. ի-
« ցեն բանքն ցուրտ՝ որքան և մարթ ելցէ։

« Ի մանուկ տիոց անտի սկսայ հաւաքել զերևելիս
« առտնին և արտաքին անցից ժամանակաց, և զվայ-
« րաց վայրաց վայելչութիւնս՝ ստոյգ տեղագրութեամբ
« և ընդօրինակութեամբ հնութեանց. այլ ի սկսպէս
« ճախորդութեանց անտի՝ երբաւ կամ անիրաւ պատա-
« հելոց՝ և յաշխարհաց յաշխարհս վտարանդի և հա-
« յածական գնալոյս՝ կորեան նոքա մինչ իսպառ։

« ՀԱԱԴԻՍԱՐԱՆ ՓՈՐՁԱՆԱՑ անուանեալ ձեռա-
« գիր իմ, ԵՐԵՒԱՆ ՓՐԿԵԱԼ ԱՐԱՑՆ ԳՆՂԵՑԻԿ, հան-
« դերձ օրինակօք մերաբարբառ գրեանց գտելոց ի տե-

« ղիս տեղիս անհետացան յԱյրարատ։ Բովանդակ գրու-
« թիւնք իմ զծիսից և կրօնից Հնդկաց՝ թողան ի Կոս-
« տանդնուպոլիս. և այլք՝ ասա և անդ։ Եւ եթէ չէր
« վերնախնամ զթութեան պաշտպանեալ զկեանս յան-
« համար և ի վերահաս արկածիցն՝ չմնայր ինձ զար-
« դիս զոր ինչ իմ ասել կարենալի։

« Բայց ի նիւթ անդր—ի վերայ առաջին հատորոյ
« գրոցս ոչ յօժարեցայ պատուաստել զպատմութիւն.
« մի՝ զի յայտնի է Ազգիս պատմութիւն նախահարցն. և
« երկրորդ՝ զի որք գտանիցեն՝ ի ցանկալեացն թերի
« տեսանիցեն։ Երանի թէ բովանդակ պատմութիւն մեր
« նոր ի նորոյ սկսանէր, ըստ օրինակի և ոճոյ բազմե-
« ալատ հօր Մինասայ Բժշկեանց՝ ի մուտս Լեհաս-
« տանին։

« Ի հնութիւնս ազգի և հայրենեաց ոչ ընկղմե-
« ցայ. մի՝ զի կորուսեալ էին հաւաքմունք իմ. և երկ-
« րորդ՝ զի ի հեռաւոր և ոչ ի մօտոյ արժանացայ խո-
« սել։ Եւ ըստ որում այսպէս, կան՝ որ լաւագոյն ևս
« խօսին քան զիս։

« Զառանձին ծիսից և սովորութեանց գաւառաց
« և քաղաքաց կարի հարևանցիկ յիշեցի, քանզի ի մտի
« կայ իմ՝ եթէ կեցից Աստուծով, յօրինել՝ ոչ եթէ
« մաշտոց ինչ, այլ ծիսարան մի, յորում նկարագրիցին
« առանձին սովորութիւնք, հանդէսք, կարգք և արա-
« ղութիւնք ազգայինք։ Եթէ չհասցից այսր փափա-
« գանաց՝ վերհագուցիցն ապաստան առնեմ զայն, մա-
« նաւանդ՝ որոց հին Պարսիկ բարբառոց տեղեկագոյնք
« լցեն *)։

« Զհառն ի վերայ նախկնութեան լեզուիս՝ կա-

---

*) Յայսմ բանիդ կարծիք յիս ծնանին՝ թէ Մեսրոպ զվէպ-
ոն Վարդվիսի և Վարոնկան, ի հին Պարսիկ բարբառոց է վե-
րածեալ ի լոյս, բայց սոսկ կարծիք իմեն այս և ոչ հաւաստիք։

«մովին ի բաց հատեր։ Որպէս և զբազմագոյնսն ի ման-
«կական առեալ և կրեցս՝ որք թէպէտ և անցք ոսկե-
«ղէն դարու կենացս՝ և բստ մեծի մասին թողթովանք
«անմեղութեան՝ այլ ոչ զերծք գլխովին յարտաքին
«բարբարոսութեանց և ի ներքին խորամանկութեանց
«որք հարկիւ յաջորդեն իրերաց։

«Յուսամ յերկրորդ հատորին առաւել պարզախօս
«և ստուգապատում լինել. զի անդ՝ եթէ գովեստ ինչ՝
«ամենեցուն վերաբերի, իսկ եթէ պարսաւ՝ անձին
«միայնոյ և ետ։

«Շատ լեցին՝ ոչ բանասիրին ի տրիտուր աշխատա-
«նաց վերծանութեանն՝ քան թէ փանաքի գրչին յանոճ
«և յանպատճոյճ պատմութեան ասատանդանացն յերևան
«նշողեցուցանել աստ և անդ զականս պատուականս
«ազգային անցից՝ իբրև զաստեղունս աղօտալոյս ընդ
«պատառուածս ամպոց համատարած գիշերոյ»։

Աստանօր պիտի ինձ կրկնել վերստին զցաւս, զի երկրորդ հատոր սոյն Ճանապարհորդութեան ևս անտիպ մնաց, և ձեռագիրն անյայտ։ Արդէն քանի ինչ հատուածք ցան ու ցիր սփռեալք յԱզգասէր օրագրի, եղան ի տեսութեանս այսմիկ. յորոց կարէ առնուլ ընթերցողն զՃաշակ, թէ ոչչափ ցանկալի իմն եղանակաւ և զուարճալից ոճով յօրինէ զպատմութիւն իւր Մեսրովբ, որով և իրաւունս ինձ տալ այնչափ ափսոսանաց՝ ընդ կորուստ անզուգական հեղինակութեանց նորին։

Ո՜հ, եթէ առաջնորդք նոր Ջուղայ Ճանաչէին զյարգ գրագիտութեան և զչքնաղագիտ հանճար հեղինակիս, ոչ միայն ի Շիրազայ անկորուստ բառնային զթողթեանսն և պահէին, այլ և զամենայն ջան ի գործ եղեալ ի լոյս հրապարակի հանէին տպագրութեամբ զամբողջ գործս նորին. և յիշատակ բարի թողուին անձանց իւրեանց, ընդ օրհնեալ յիշատակի Ազգային մատենագրիս. բայց ՞ուր են... ՞ուր... ափսոս...։

Այսչափ են ահա տպագրեալ աշխատութիւնք մեծանուն հեղինակիս մերում Մեսրովբայ Դ. Թաղիադեանց, զորոց ստացեալ է իմ տեղեկութիւն և կամ տեսեալ իսկ զձեռագրաց նորին՝ բաց յայնցանէ որք յիշատակեցան ի կարգի տեղեկութեանցս, գտանի առ իս փոքրիկ աշխատութիւն մի անուանեալ ՀԵԶԻԿ ՀԸԴԱԿԵԱՑ թարգմանեալ յԱնգլիականէ յամին 1842. գործ արժանի տպագրութեան, որ է բարոյական իմն վէպ դստեր մեոյ, դաստիարակելոյ Քրիստոնէական կրթութեամբ և Աստուածպաշտութեամբ. և զոր առաքեաց ինձ ի տէր Հանգուցեալ բարեկամն իմ պարոն Ղուկաս Պալտազարեան խմբագիրն «Արշալոյս Արարատեան» լրագրի ի Զմիւռնիա։

Նոյնպէս ունիմ առ իս և ԹԱՆԴԱՐԱՆ ԹԱՂԻԱԴԵԱՆՑ անուն բանաստեղծութիւն մի, որոյ երկու տետրն միայն տպագրեալ ուրթածալ, (մնացորդն այնյայտ թէ ոչչափ կարէր լինել) տայ ինձ ափսոսալ, զի այսպիսի քերթուած գեղեցիկ յոյժ, մնայ թերի և մատնեալ ի կորուստ։ Ինքնագիր օրինակ տպագրեալ թերթիցս ի միասին գտանի առիս, յորում շարունակի երգն մինչ ցերկրորդ նուագն տասնոտեայ՝ քառատող՝ 112 տաղ, որպէս և առաջին երգոյն են տունք 238, որոյ 150 տունքն միայն են տպեալ. որովք գտանին առիս ի Թանգարանէն Թաղիադեանց, բովանդակ 350 տունք, կամ իբր 1400 տողք ոտանաւոր բանից, բայց թերակատար թողեալ։—Առ ի յընծայումն տեղեկութեան ի վերայ քերթուածոյս, յառաջ բերեմ զգրուագ առաջին երգոյն»։

«Ներածութիւն երգոյս. Թաղիադին որդի Կորիկայ
«Բագրատունեոյ խոյանայ առ Հուլաւու խան Թանթար.
«Ծագումն ազգին.—մասնաւորութիւն առարկայիս.—Կո-
«չիմ Ազգայն Արտասուաց յօրհնաս Թանկայ.—Դառնայ
«Թաղիադին ի պատերազմաց ընդ Հուլաւայ ի Մարա-
«գա. զտուն ունայն գտանէ, հրեշտակ հանէ առ Թանկ,

«Խռովի ի խորհուրդս իւր. Թուի թէ օրհաս վաղա-
«հաս յերկանց ելանէ նմա։ Մոլորի զՃանապարհայն.
«առ հուր հեռաւոր դիմէ. զարթուցանէ զՀէնս
«ի Սլդուզայ. խօսի ընդ նոսա, մարտնչի, զինաթափ
«առնէ։ Զկնի ճայնիցն գայ ի դաշտ ինչ. չանցն հաչիւն
«ի հեռուստ՝ գէպ առ Խանայան առաջնորդէ զնա։ Դիմէ
«առ մարդ Ի հար. Հարցանեայ և այլոց բանք.—հասանեն
«նմա և Սլդուզք, գանգատեն, կշտամբեն, խօսեն զայսր
«և զայնց գլխոց։ Ներողութիւն շնորհէ։ Հեծանի. մար
«Ի հար ուղեկից գնայ»։ Այսպէս սկիզբն առնէ և եր-
«գոցն.

«Զարին նուագեմ ի լար հեզահար
«Որ լերինս անգամ ընդ ոտիւք ամայր.
«Իսկ արդ մենացեալ առ շերմի հարսին,
«Վատակէ ի վայր մորմոք մահածին»։
«Դառն էր գիւցազին կսկիծ կենակցին,
«Այլ դառնագոյն ևս՝ յայն վիճակ բաղդին,
«Ուր ծաղկունք վառաց անուշատեսիլ
«Պըտկէին ի ձեանց՝ բոլբոլ ոսկեծիլ։»—և այլն։

Ապաքէն աւարտեալ զտեսութիւնս և զծանօթութիւնս ի կենսագրութիւն արդիւնաւոր հեղինակի դարուս Մեսրովբայ Թաղիադեանց սարկաւագի ս. Էջմիածնի, եմ խղճք են սովաւ զարթուցանել զմիտս բանասիրաց ազգիս, զի եթէ գտանիցի առ ինքեանս այլ և այլ տեղեկութիւնք զկենաց և զհեղինակութեանց սոցին, կամ այլ գրագիտաց, շնորհ արասցեն հանել ի հրապարակ. մանաւանդ Ժառանգք խնդրի ի դեր. առաջնորդէ Ամենափրկչեան Վանաց նոր Ջուղայու, զի որոնեալ զերկս աշխատութեանց հեղինակիս՝ որք ի Շիրազ բարձեալ ասեն ի նոյն վանս, գոնէ հաղորդեսցէ զայնցանէ տեղեկութիւնս միջոցաւ ազգային լրագրաց,

թէ ոչ՝ ի ձեռագիրք գտանին ի վանս անդ, և ոչք են այնոքիկ։

Իսկ եթէ գեր. առաջնորդն կամ այլ ոք ի ծանօթից Թաղիադեանի՝ բարեհաճեսցին տպագրութեամբ ի լոյս ածել զանծանօթ աշխատութիւնս հեղինակին զնամակագրութիւնս, զոտանաւորս և այլն, այն շնորհ մեծի լիցի և օգուտ գրականութեան ազգիս։

Զայսպիսիս ակն ունելով յամենայն ուսումնասէր եկեղեցականաց և ի մեղուաջան գրասիրաց Ազգիս, աղաչեմ ներումն իմոց բազում թերութեանց ի տկար աշխատութիւնս իմ։

Տրուպս ի բանասիրաց
ՅՈՎՀ. ՔԱՀ. ՄԿՐԵԱՆ։

Մատենադարան Սերբազանց Ս. Էջմիածնի

«Ազգային գրադարան»
NL0154884